ՕՐԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

1859.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԳՆԱՑՔ.

ԱՄՍԱՏԵՏՐԱԿ 12.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Մարկոս Տուլլիոս Կիկերոնի Ատենական Ճառերը ընդդէմ Կատիլինայի.
Լատինական բնագրից. Առաջին և Երկրորդ Ճառ. Ս. Նազարեանցի. 917—956.
Բարոյական մտածութիւնք. Թէ ինչ բան ընդդէմ է Մարդուս արժանաւորութեանը. Աղջիկը և Երիտասարդը։ Թէոդորոս Լալազարեանցի 970—977.
Բարեկամական յիշատակարանք. Ս. Նազարեանցի . . . . . 978—985.

ՄՈՍԿՎԱ.

ВЪ ТИПОГРАФІИ ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ.

1859.

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1859 ԹՈՒԱԿԱՆԻ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ·

ՄԱՐԿՈՍ ՏՈՒԼԼԻՈՍ ԿԻԿԵՐՈՆԻ

ԱՏԵՆԱԿԱՆ ՃԱՌԵՐԸ ԸՆԴԴԻՄ Լ· ԿԱՏԻԼԻՆԱՅԻ·

(Լատինական բնագրից։)

ԸՌՆԼՅԻՆ ՃԱՌ·

ՆԱԽԱԾԱՆՈՒԹ ԳԻՏԵԼԻՔ։

Լ· Սերգիոս Կատիլինան շառաւիղած էր Սերգիոսեանց հին պատրիկական ցեղից։ Սորա մէջ ականաւոր մարմնական և հոգեկան ձիրքերի հետ միաւորված էր և մի շատ վատթար և դատապարտելի բնաւորութիւն։ Ցանդգնութիւն, խորամանկութիւն, ագահութիւն, ղեղխութիւն, շռայլութիւն և մի չափազանց ձգտողութիւն լցուցանելու իւր ցանկութեան կամքը մինչև այն շատ անարժան ճանապարհներով, էին նորա բնաւորութեան արմատական յատկութիւնքը, որ գիտէր նա զանազան հնարներով, զոր օրինակ հաճոյակատարութեամբ, առատաձեռնութեամբ, յարմարվելով միւսների բարք ու վարքին, խորհրդակցութեամբ և աշխատասէր կեանքով ծածկել և թաղուցանել։ Արդէն իւր

մանկութեան օրերումը, Սուլլայի դատապարտական հրովարտակների ժամանակ, արել էր նա ամենայն տեսակ անգթութիւնք և ապականել էր իւր ձեռքը շատ քաղաքացիների, այն մերձաւոր ազգականների արիւնով։ Թէպէտ նա անառակութեամբ և ամենայն տեսակ արատներով վատահամբաւած էր, սակայն իւր բարեկամների ձեռնտուութեամբ այն տեղ հասցրեց բանը, որ 686 թուակ. (Հռոմի շինութենից յետոյ) դարձաւ Պրետոր (¹), և միւս տարումը կուսակալ Աֆրիկայի մէջ։ Վերա-

---

(¹) Պրետոր (prætor) էր անվանումը մի պատուանուն որ կրումէին հիւպատոսքը որպէս և դիկտատորը։ Երբ որ (367 թուակ. Քրիստոսից յառաջ) հիւպատոսական արժանաւորութիւնը հասանելի դարձաւ և ռամիկներին որ Հռոմի մէջ ապրումէին Փլեբէյեանք (Plebeji), այնուհետև, դատաստանական գործերը կառավարելու համար, որոնց գլխաւոր վերակացութիւնը պատկանումէր մինչև այն ժամանակ հիւպատոսներին, ընտրվեցաւ մի առանձին պաշտօնական որպէս ընկեր հիւպատոսների, մի Պրէտոր և Պատրիկեցոց կարգից միայն, որ, մինչ դնելով ժամանակի որպիսութեանը, էին և առաւել իրաւագէտքը։ Սոքա ընտրվումէին այնպէս, ինչպէս հիւպատոսքը և սոցանից մինի նախագահ ատենակալութեան տակ։ Գործերը շատանալով և օտարականքը բազմանալով Հռոմի մէջ, առաջին պունիկեան պատերազմի միջոցին, այսինքն 247 ին Քր. յառաջ, ընտրվեցաւ երկրորդ Պրետոր, որ իրաւարար լինի հռոմէական քաղաքացիների և օտարականների մէջ, և ասվումէր օտարականների պրետոր (prætor peregrinus). բայց միւսը որ իրաւարար էր հռոմէական քաղաքացիների մէջ, ասվումէր քաղաքային պրետոր (prætor urbanus) և աւելի բարձրապատիւ էր քան թէ առաջինը, վասն որոյ և ասվումէր prætor major կամ honoratus (աւագ պրետոր)։ 337 Քր. յառաջ, կարող էին ստանալ Պրետորականութիւն և Փլեբէյեանքը։ Ընտրութենից յետոյ կարող էին պրետորքը վիճակ ձգել իւրեանց պաշտօնական գործի վերայ և փոխանակել իւրեանց պաշտօնը միմեանց հետ։ Քաղաքային պրետորը, որ 10 օրից աւելի կարող չէր բացակայ գտանվիլ քաղաքից, երբեմն յանձնառու էր և իւր ընկերի պաշտօնին, եթէ սա ստացել էր դերագոյն հրամանակալութիւն մի զօրքի վերայ։ Նա կարող էր շատ դիպուածների մէջ գործակատար լինել բացակայ հիւպատոսների փոխանակ, զոր օրինակ ժողովել ծերակոյտը, զօրք հաւաքել, ժողովուրդը հրաւիրել դէպ ի խորհրդակցութիւն։ Սիկիլիայի և Սարդինիայի տիրապետութենից սկսած, այսինքն 227 ից ընտրվումէին 4 պրետորք, որոնց մինը կառավարումէր Սիկիլիան, միւսը Սարդինիան և Կորսիկան. 197 թուականից, այս և այն կողմի Սպանիայի համար, յաւելցան դորա վերայ միւս 2 պրետորք, ուրեմն դոցա թիւը էր առհասարակ վեց։ Բայց մի խորհրդաւոր փոփոխութիւն պրետորների մասին յառաջացաւ եօթներորդ դարումը Հռոմի հիմնարկութենից յետոյ, մինչ 144 ին Քր. յառաջ բայվելով սերութեան մէջ շարունակ դատաստանք (quæstiones perpetuæ) քրէական յանցանքների համար։ Առաջին ժամանակները Պրետորքը իրաւարար էին միայն մասնաւոր գործերի մէջ. հրապարակական կամ թէ անասվոր յանցանքները դատումէր ժողովուրդը Յենտուրիատեան կամ թէ Տրիբուտեան ժողովներով, կամ թէ կարդադրումէր առանձին իրաւարար ընկերութիւնք։ Շարունակ դատաստանները վերաբերվելով զանազան քրէական յանցանքների, էին և միմեանցից բաժան բաժան. այդպիսի դատարանների թիւը բազմանալով, բազմացան և պրետորքը։ Սուլլայի օրերումը կային 8 հատ։ Յուլիոս Կեսարը բարի սեսաւ ընտրել տաւ 10, 14 մինչև 16 պրետորք։ Օգոստոսի օրերումը երեւումն 12 հատ, որ և մնացին Տիբերիոսի ժամանակին այդպէս։ Ներոնի օրերումը յաւելցաւ դոցա թիւը մինչև 18. ի հարկէ կայսերութեան միջոցին չքացաւ և այս արժանաւորութեան բուն խորհուրդը։

պառնալով այս տեղից, աշխատեց նա Մ. Էմիլիոս Լեպիդոսի և Լ. Վալերիոս Տուլլոսի հիւպատոսութեան օրերում, 688 թուակ. Հռոմի շին. յետոյ, ձեռք բերել հիւպատոսական արժանաւորութիւն. բայց որովհետև իւր կառավարութեանը յանձնած գաւառի մէջ արած յափրշտակութիւնների պատճառով պարտաւորվեցաւ Պ. Կլոդիոսի բերանով, ապա ստիպվեցաւ հրաժարվել խնդրել հիւպատոսական պատիւ, թէպէտ ազատվել էր դատապարտութիւնից։ Վրէժխնդրութեամբ բորբոքված միաբանվեցաւ նա Պ. Աւթրոնիոս Պետոսի և Պ. Կոռնելիոս Սուլլայի հետ, որ լինելով որոշված հիւպատոսներ, դատապարտվեցան որպէս կաշառատուք իւրեանց պաշտօնաստացութեան մասին, զրկվելով իւրեանց պատուից. այլև Պիզոնի և միւս տհաճ մարդերի հետ, այն խորհրդով, որ նորընտիր հիւպատոսները 689 թուակ. Յունվարի մինին սպանեն և ապա ձեռք բերեն դերագոյն իշխանութիւնը տէրութեան մէջ։ Բայց դաբանագործների խորհուրդը պատահական հանգամանքով ունայնացաւ։ Այս իրողութիւնը, այլև այն ջանադրութիւնը որով Կատիլինան կամենուր բարեբել իւր գոյքի աւերակ դրութիւնը, ափիթ տուին նորան միաբանվելու համախոհ շատ մարդերի հետ, և մի դաւաճան ընկերութիւն կազմելու։ Դա նոր ի նորոյ ախշեան դուրս եկաւ Կիկերոնին և Անտոնիոսին, խնդրելով հիւպատոսութիւն. բայց որովհետև արդէն համբաւ էր տարածվել մի նոր դարանագործութեան մասին, և Կատիլինայի հնարագործութիւնքը յափշտակելու հիւպատոսական պատիւը Կիկերոնից, աւելի ևս մերկացուցին նորա դիտաւորութիւնը, այս պատճառով Կիկերոնը միաբերան ընտրվեցաւ հիւպատոս, որովհետև նորանից միայն յոյս ունէին թէ կարող էր փրկել տէրութիւնը։ Կիկերոնի հետ միասին ընտրվեցաւ և Անտոնիոսը, թէպէտ սա փոքր թուով միայն աւելի քուէք ունէր իւր համար, քան թէ Կատիլինան։

Որպէսզի Կատիլինայի անյաջող ջանադրութիւնը շատ դառնացուցին նորա սիրտը, սակայն նա յուսալով թէ գալոց ազգային ժողովների մէջ 692 թուականի համար, կը հասանէ իւր նպատակն, դեռ ևս յետ պահեց իւր գարշելի դիտաւորութեան իրագործութիւնը։ Կիկերոնը, որ վաղուց դուշակում էր Կատիլինայի խորհուրդները, իրրև հիւպատոս, դառնալով դերագոյն հրամայողը տէրութեան մէջ, կարողացաւ մի ֆուլվիա կնոջ ձեռքով, որ Կատիլինայի համախոհ Կուրիոսի հոմանին էր, մանրամասն տեղեկութիւնք ստանալ դաւադիրների մասին։ Այնուհետև Կիկերոնը ոչինչ հնար անփորձ չարեց, որով կարող էր Կատիլինայի դիտաւորութիւնքը ունայնացնել. և նոյն միջոցին նորա առաջարկութեամբ աւելի խիստ ազդարարութիւն տրվեցաւ յառաջուց սահման օրենքներին ընդդէմ նոցա, որ վատթար ճանապարհով պաշ

տոն էին ստացել տերութեան մէջ։ Այնուհետև Կատիլինան յղացաւ իւր մէջ խորհուրդ սպանելու Կիկերոնին և այլ միւս երևելի խորհրդականներ շատ, նոյն իսկ ընտրութեան օրին։ Սորան տեղեկացաւ Կիկերոնը, և որովհետև հիւպատոսների ընտրութիւնը որոշած էր լինելու Հոկտեմբերի 21 ին, այս պատճառով մի օր յառաջ յայտնեց ծերակուտին իւր ստացած տեղեկութիւնը Կատիլինայի դիտաւորութիւնների մասին, և պատճառ տուեց յետ ձգելու ընտրութիւնը մինչև Հոկտեմբերի 28ը։ Միւս օրին ծերակուտի մէջ պահանջեց նա Կատիլինայից արդարացնել իւր անձը. բայց թէ որպիսի լրբութեամբ պատասխանեց Կատիլինան, պատմումէ մեզ Կիկերոնը իւր ճառի մէջ, որ ասած է Մուրենայի համար, գլուխ 25։ Այնուհետև ծերակոյտը տուեց հիւպատոսներին այն բացարձակ իշխանութիւնը որ վտանգաւոր միջոցներում սովոր էր նա տալ նոցա։ Հիւպատոսների ընտրութեան միջոցին նոյն իսկ Կիկերոնը ամենայն կերպով հոգատար եղաւ պահպանելու տերութեան ապահովութիւնը. Կատիլինան իւր կուսակիցների հետ չհամարձակվեցաւ ոչինչ, և Դ. Յունիոս Սիլանոսը և Լ. Լիկինիոս Մուրենան ընտրվեցան հիւպատոսք։

Այնուհետև Կատիլինան վճռեց իւր մէջ, ըստ որում երրորդ անգամը ունայնացած էին նորա յոյսերը, բռնութեամբ ձեռք բերել գերագոյն իշխանութիւնը։ Դարանագործների ժողովի մէջ, Մ. Պորկիոս Լեկայի դնումը, Նոյեմբերի 6 ին, այն գիշերին որ պիտոյ է լուսանար դէպ ի 7 երորդը, յայտնեց նոցա իւր խորհուրդը, որ այսպէս էր։ Նոյն միջոցին, երբ Հռոմը շատ տեղերում պիտոյ է հրձիգ լինէր և առաւել երևելի խորհրդականքը պիտոյ է սպանվէին դարանագործների հակառակորդների հետ միասին, այս խառնակութեան մէջ կամէր Կատիլինան այն զօրքի հետ որ Մալլիոսը ժողովել էր Էտրուրիայումը, վերադառնալ և տիրապետել քաղաքին։ Բայց յառաջ քան թէ նա կը գիմէր դէպ ի զօրքը, պիտոյ է վերացներ միջից Կիկերոնին որի արթնութիւնը երկիւղալի էր նորան։ Այս պատճառով, իսկոյն համախոհ դաւաճաններից երկու հոգի պատուէր ստացան Նոյեմբերի 7 ին, առաւօտեան ողջունի անունով ներս մտանել Կիկերոնի տունը և սպանել նորան հանդստի մահճի մէջ։ Բայց Կիկերոնը վերոյիշեալ Գուլվիայի ձեռքով տեղեկանալով այս սպանութեան խորհրդին, հրամայեց ներս չթողուլ այն ուղարկած դարանագործքը. միւս օրին, Նոյեմբերի 8 ին (691 թուակ. Հռոմի շին. յետոյ) ժողովեց ծերակոյտը Իւպիտեր Ստատորի տաճարի մէջ. որովհետև Կատիլինան մինչև այն ատենն լիրբ գտանվեցաւ, որ և այս ծերակուտեան ժողովի մէջ ներկայ էր, այս պատճառով զայրացաւ Կիկերոնը այնպէս, որ իսկոյն ատենախօսեց նորա ընդդէմ այս առաջին

Կատիլինական ճառը, ոչ թէ միայն խստապէս յանդիմանելով Կատիլինայի արասները, այլև միանգամայն հրատարակելով, թէ Նորա բոլոր դարանագործութեան մէքենայքը յայտնվել են։ Արդարև Կատիլինան հետևեալ գիշերին հրաժարվեցաւ քաղաքից և 300 ճանապարհակից ընկերներով դիմեց դէպ ի Մալլիոսի բանակը։

Այս ճառս ահա բաժանվում է երեք մասն.

1. Նէրոֆոնական մէջ ճարտասանը բացայայտում է իւր զարմացքը Կատիլինայի լրբը ներկայութեան վերայ ծերակուտի մէջ յիշեցնում է Նորան, թէ որպիսի խստութեամբ վաղուց արդէն պիտոյ էր վարվիլ Նորա հետ, ինչպէս տերութեան առաջին ժամանակներում պատահած է նմանապիսի դիպուածների մէջ. նոյն միջոցին յայտնում է այն պատճառքը, թէ ինչու համար դեռ ևս հրամայել չէր սպանել Կատիլինային։ Գլուխ 1. 2։
2. Գլխաւոր առաջարկութիւնը պարունակում է իւր մէջ ատենաբանի պահանջողութիւնը Կատիլինայից, որ նա հեռանայ քաղաքից, դէպ ի աքսոր կամ թէ դէպ ի Մալլիոսի բանակը դիմելու համար (գլուխ 3). պատճառ,

ա) Նորա խայտառակ դաւաճանութիւնը յայտնի էր ընդհանրապէս, Նորա մանաւոր կեանքը ապականված էր ամենայն տեսակ արատներով, և Նորա հրապարակական կեանքը մինչև այն աստիճան յարուցել էր ընդհանուր ատելութիւնը ծերակուտի, քաղաքացիների և բոլոր հայրենիքի, որ իրրև թէ լուութեամբ պահանջում էր Կատիլինայի հեռանալը, թեպէտ հիւպատոսը մեծապէս ատելի էր կացուցանում իւր անձը, անպատիժ արձակելով Նորան։ (Գլուխ 3 — 9։)

բ) Պիտոյ է նոյն ինքն Կատիլինային ախորժ լինէր, որ թողութիւն Նորան Հռոմից հեռանալ դէպ ի Մալլիոսի բանակը, ըստ որում նա իւր զինուորքը յառաջուց ուղարկել էր այն տեղ և իւր ընաւորութեանը համեմատ շատ ու շատ քաղցր էր Նորա սրտին պատերազմը ընդդէմ իւր հայրենիքին, և հաղորդակցութիւնը իւր նման մարդերի հետ, որ միաբանված էին խառնակելու հասարակաց խաղաղութիւնը (Գլուխ 9 — 10)։ Եւ

գ) միտ դնելով տերութեան օգտին, աւելի շահաւետ էր լինելու Կատիլինայի հեռանալը այդպէս, քան թէ Նորա պատուհասվելը. որովհետև, եթէ նա հեռանար, Նորա խորհրդակից ընկերքը հետևելու էին Նորա քամակից, և դորանով նոյն իսկ

սերմը բոլոր խռովութիւնների քաղաքումը, բնաջինջ կը լինէր։ Ցետին խօսքերը յաւելացնումէ ճարտասանը, իւր ընթացքը արդարացնելու համար։ (Գլուխ 11 — 13.)

3. Վերջաբանի մէջ Կիկերոնը խոստանումէ ծերակուտին, թէ Կատիլինայի և նորա դարանագործ ընկերների հեռանալուց յետոյ, բոլոր հասարակութեան միաբան աշխատութեամբ ամենեւին խափանվելու է դաւադրութիւնը. և դարձեալ պահանջումէ Կատիլինայից, ոչ իւր կուսակիցների հետ թողու Հռոմը, մաղթումէ Իւպիտեր Ստատորից պաշտպանել հռոմէական տէրութեանը և փրկել նորան։ Գլ. 13 մինչև վերջը։

Թէպէտ Կիկերոնը այսպիսի սաստիկ և խորամուխ կերպով խօսած էր, այնու ամենայնիւ Կատիլինան այնքան անամօթ գտանվեցաւ, որ կարող էր հանդէս գալ Կիկերոնի ընդդէմ։ Տես Սալուստիոսի „Դաւադրութիւն Կատիլինայի“ մակագրով գործը. գլ. 31, և Պլուտարքոսի Կիկերոնը, գլ. 16։

ԳԼՈՒԽ Ա. Մինչև երբ, Կատիլինա, մաշելու ես դու մեր համբերութիւնը. մինչև երբ դեռ ևս պիտոյ է անուանաձելի մնայ այդ քո կատաղութիւնը. մինչև երբ պարծենալու է քո սանձակոտոր յանդգնութիւնը։ Պալատինոնի [1] գիշերային պաշտպանքը, քաղաքի պահապանքը, ժողովրդի երկիւղը, բոլոր բարեխորհուրդ քաղաքացիների համախմբութիւնը, այս ամրապահեստ պատսպարանը ծերակուտի խորհրդակցութեան [2], սոցա երեսը և հայեացքը ոչինչ պատկառանք չաղդեցին քո մէջ։ Մի թէ նկատում չես, որ քո խորհուրդքը հրատարակված են, մի թէ չես տեսանում, որ քո դարանագործութիւնը կապած ու կաշկանդած է տեղ, ըստ որում դորան տեղեակ էին շատ մարդիկ։ Թէ ինչ ես արել դու այս և միւս գիշերին, թէ ուր ես եղած դու, ինչ մարդեր ժողովել ես քո մօտ, ինչ խորհուրդ հաստատել ես քո մէջ. որ մինը մեղանից,

---

(1) Մօտահաս վտանգի ժամանակ Պալատինեան սարը պ։ շրջանվումէր զինուորներով, ըստ որում այդ սարի կողմից կարելի էր հեշտ տիրապետել քաղաքին։ Նորա ոտքումը դրած էր Իւպիտեր Ստատորի տաճարը ուր Կիկերոնը ատած է այս ճառս։ Օդոստոս կայսրը այս տեղ փոխադրեց իւր թագաւորանիստը. այս պատճառով պալատին բառը նշանակումէ և ապարանք. այս տեղից է և հայոց լեզուի մէջ գործածական պալատ խօսքը։

(2) Այսինքն Իւպիտեր Ստատորի տաճարը պալատինեան սարի վերայ։

կարծումես թէ չդիտէր այդ բաները։ Այս ինչ ժամանակներ են, այս ինչ բարքեր։ Ծերակոյտը խնամուտ է այս գործերին, հիւպատոսը ակամատես է, սակայն կենդանի է այս մարդը։ Ոչ թէ միայն կենդանի է, այլև համարձակվումէ դալ նստել ծերակուտի մէջ, մասնակից լինել հասարակաց խորհրդին և աչքերով որոշումէ և ընտրումէ ամեն մինը մեզանից որպէս մարթելի զոհ իւր համար։ Բայց մեք, քաջ տղամարդիս, կարծումենք լցուցանել մեր պարտականութիւնը դէպ ի հասարակաց բարին, միայն թէ կարող էինք փախչել դորա կատաղութենից և սրի բերանից։ Դէպ ի մահ, Կատիլինա, վաղուց արդէն պիտոյ էր տանել քեզ հիւպատոսի հրամանով, դէպ ի քեզ դարձուցանել այն ժանտախտը որ դու ընդդէմ մեր ամենեցունցս մեքենայումես։ Եթէ այն բարձրապատիւ տղամարդը, Փ. Սկիպիոն (1) ծայրագոյն քրմապետը, որպէս մասնաւոր մարդ կարողացաւ սպանել Տիբերիոս Գրակխոսին (2), որ միայն թոյլ ձեռքով դղրդումէր հասարակապետութեան հիմքը. մի՞թէ մեք հիւպատոսքս կարող էինք համբերել Կատիլինային որ ցանկանումէ բոլոր աշխարհ աւերել սպանութեամբ և կրակով։ Պատճառ, զանց եմ առնում ես այն շատ վաղեմի անցքը, որ Պ. Սերվիլիոս Ահալան (3), սպանեց Սպ. Մելիոսին, երբ որ դա աշխատումէր յեղափոխել տէրութեան կարգերը։ Երդած է, երդած է մի ժամանակ այս հասարակապետութեան մէջ առաքինութիւն, որ քաջ տղամարդիկ վնասակար քաղաքացին աւելի ստատիկ պատիմներով սանձահարել են, քան թէ արեանարբու թշնամին։ Մեք ունինք ծերակուտի դատաստանիս ընդդէմ

---

(1) Փ. Սկիպիոն, այսինքն Փուբլիոս Կոռնելիոս Սկիպիան Նազիքա, մականունով Սերապիան, որ մինն է առաւել սասակի ազնուականներից (արիստոկրատներից)։ Որպէս քրմապետ, չէր պատկանում նա արքունի պաշտօնակալներին, և այս պատճառով ասվումէ այս տեղ մասնաւոր անձն։

(2) Տիբերիոս Սեմփրոնիոս Գրակքոս որ ապրած է Հռոմի շինութեան 621 թուակ. մի մեծաբանքար և ազնուարարոյ մարդ, որ իբրև ռամկապետ (արիքուն ժողովրդի) նորոգեց Լիկինիոսի հողաբաշխական օրէնքը (Lex agraria կամ Licinia), ժողովրդի թշուառ դրութիւնը թեթևացնելու համար։ Տես Հիւսիսափայլ 1859 թուակ. Ամսատետր. Դ. երես 284. ծան. 2։

(3) Կայիոս Սերվիլիոս Ահալան, որպէս Կվինքտիոս Կինկինատոս դիքտատորի ձիաւորների հրամանակալ, 439 թուակ. Քր. յառաջ, իւր յատուկ ձեռքով սպանեց Սպուրիոս Մելիոսին որ մի սովի ժամանակ ցորեան բաժանելով ժողովրդին, փորձումէր ձեռք բերել թագաւորական իշխանութիւն Հռոմի վերայ։

քո, Կատիլինա, մի սասարկ և ծանր դատավճիռ. պակաս չէ հասարակութեանը խեղճալի խորհրդակցութիւն և ոչ իսկ այս խորհրդականներիս ոյժ և զօրութիւն. մեք, մեք, եմ ասում յայտնապէս, մեք հիւպատոսքս պակասաւոր ենք մեր պարտավճարութեան մէջ:

ԳԼՈՒԽ Բ. Ծերակոյտը մի ժամանակ սահմանադրեց այսպէս. որ Լ. Օպիմիոս հիւպատոսը արթուն կենայ, որպէս զի հասարակապետութիւնը չտանայ որ և իցէ վնաս: Մի գիշեր ևս չանցաւ, և ահա սպանված էր խռովարարութեան ինչ ինչ պատճառներով Կ. Գրակխոսը (1), մի երևելի հօր որդի, մի ականաւոր պապի թոռն և արժանաւոր նախնիքի ժառանգ. նմանապէս սպանվեցաւ իւր որդիներով Մ. Ֆուլվիոսը որ եղած էր յառաջ հիւպատոս: Նոյնպիսի սահմանադրութեամբ ծերակուտի կողմից, յանձն արվեցաւ հասարակապետութիւնը Կ. Մարիոս և Լ. Վալերիոս հիւպատոսներին: Մի թէ նորանից յետոյ օր մի զանց արվեցաւ Լ. Սատուրնինոս ռամկապետի (2) և Կ. Սերվիլիոս Պրետորի մահու պատուհասը և հասարակապետութեան հատուցումը: Բայց մեք, քսանեորդ օրն է ահա, որ թոյլ ենք տալիս անդործ մնալ ծերակուտի սահմանադրութեան սուրը. այո ունինք մեք մի այդպիսի խիստ օրինադրութիւն, բայց արձանագրութեան տախտակների մէջ փակած և որպէս թէ պատենի մէջ թաղուցած: Այդ օրինադրութեան հիմքի վերայ արժան էր քեզ, Կատիլինա, իսկոյն

(1) Կայիոս Սեմիրոնիոս Գրակխոս, կրտսեր եղբայրը Տիբերիոս Սեմիր. Գրակխոսի, աւելի կրակոտ և անխոհեմ մարդ, բայց և մի աւելի քաջ ճարտարախօս, քան թէ նա, աշխատուսէր իւր եղբօր ինչ ինչ օրինադրութիւնքը, զոր օրինակ հող և ցորեան բաժանելու ժողովրդին, յառաջադէմ կացուցանել, և իւր երկրորդ ռամկապետութեան միջոցին դատաստանական պաշտօնքը հասցրեց հռոմէական ասպետներին: Այս և այլ ձեռնարկութիւնների վերայ զայրանալով ծերակոյտը, յանձնեց հիւպատոս Ոպիմիոսին մի բացարձակ իշխանութիւն, այսպիսի խօսքով «Videant consules ne quid res publica detrimenti capiat» թող արթուն կենան հիւպատոսքը, որպէս զի հասարակապետութիւնը չտանայ որ և իցէ վնաս: Գրակխոսը անձնարացած, փախաւ դէպ ի ավենտինեան բլուրը ուր ժողոված էին նորա համախոհներից 3000 մարդ և սպա ֆուրիաների անտառի մէջ, ուր հրամայեց իւր ծառաներին սպանել իւրեան:

(2) Ռամկապետ Լ. Ապուլէյոս Սատուռնինոս իւր երկրորդ ռամկապետութեան միջոցին նորոգեց Սեմիրոնեան ցորենալաշխութեան առաջարկութիւնը, և 653 թուակ., երբ որ կամէր հիւպատոսական պատիւ ճարել իւր բարեկամ Գլաուկիային, իւր համախոհների հետ միասին սրբասպանեց կապիտոլիոնին: Բայց ջրի պակասութեան պատճառով, սոսկալի եղան նորա անձնատուր լինել հիւպատոս Մարիոսին, և երկուքը ևս սպանվեցան ժողովրդի ձեռքով:

մահով մեռանել։ Դու ապրուս, ապրուս, ոչ թէ կամենալով յետ կենալ քո յանդգնութենից, այլ կամակորվել նորա մէջ։ Կը ցանկանայի, արժանընտիր հարք, լինել քաղցր և գթած. բայց հասարակապետութիւնը լինելով այսպիսի մեծ վտանգի մէջ, չկամէի երևել թոյլ և մեղկ. բայց արդէն ինքս դատապարտումեմ իմ անձս անգործութեան և վատթարութեան պատճառով։ Բանակ է հաստատվել Խուլիոսումը ընդդէմ հասարակապետութեան, Լարուրիայի նեղուցի մէջ. օր ըստ օրէ բազմանումէ թշնամիների թիւը. իսկ նոցա բանակի հրամանատարը և առաջնորդը տեսանումենք մեր պատերի, մինչև անգամ ծերակուտի մէջ ամենայն օր մի ներքին կորուստ պատրաստելով հասարակապետութեանը։ Եթէ իսկոյն հրամայէի ըմբռնել քեզ, Կատիլինա, և մահով մեռուցանել, հաւատի եմ, որ պիտոյ էր ինձ երկիւղ ունենալ, մի գուցէ բոլոր հայրենասէրքը ասէին մանաւանդ, թէ ես յետ էի ձգել այդ գործը, քան թէ կարող էր ասել մի մարդ, թէ վարվել էի շատ անգութ կերպով։ Այնու ամենայնիւ այս գործը որ վաղուց արդէն պիտոյ է կատարված լինէր, մի որոշեալ պատճառով, դեռ ևս արժան չեմ համարում առնել։ Այն ժամանակ վերջապէս կը հրամայեմ սպանել քեզ, Կատիլինա, երբ ոչ ոք չիար աւելի այնքան ամբարիշտ, այնքան վատթար, այնքան քեզապիսի, որ չխոստովանէր թէ իրաւացի էր իմ արածը։ Բանի որ տակաւին լինելու է մի մարդ, որ համարձակվումէր պաշտպանել քեզ, այն կ'ապրես դու, բայց կ'ապրես այնպէս, ինչպէս որ այժմ ապրումես, այսինքն իմ բազմաթիւ և զօրաւոր պահապանների պաշարված, որ չիարոզանաս ձեռնարկել մի բանի ընդդէմ հասարակապետութեանը։ Այլև շատերի աչքերը և ականջները, ինչպէս մինչև այժմ արածն են, լրտեսելով կը հսկեն քո վերայ առանց քո իմանալուդ։

ԳԼՈՒԽ Գ. Ուրեմն ասա դու ինձ, Կատիլինա, ինչ բանի սպասումես դու այլևս, եթէ ոչ դիշերային խաւարը կարող է ծածկել քո ամբարիշտ հաղորդակցութիւնքը և ոչ իսկ մի մասնաւոր տուն իւր պատերի մէջ փակել քո դարանագործութեան խօսք ու զրոյցը. եթէ ամենայն ինչ լուսափայլումէ, դուրս է երևումէ։ Երի, թող այդ քո խորհուրդը, հաւատա ինձ, որ անօգուտ էր դա. մոռացիր սպանութիւն և հրձգութիւն։ Մե-

նայն կողմից կապված ու կաշկանդված ես դու. քանզի յայտնի են մեզ քո բոլոր դիտաւորութիւնքը, որ այն կարող ես այժմ վերատին խոստովանել ինձ: Մինչդ գալիս է, որ ես Հոկտեմբերի 21 ին ասացի Ծերակուտի մէջ, թէ Պ. Մալլեոսը, քո յանդգնութեան արբանեակը և սպասաւորը զինուորվելու է մի որոշեալ օրում, և այդ օրը լինելու է 25ը Հոկտեմբերի: Մի՞թէ սխալվեցայ ես, Կատիլինա, ոչ թէ միայն այդքան մեծակշիռ, այդքան տհաւոր, այդքան անհաւատալի իրողութեան մէջ, այլև, որ առաւել զարմանալի է, ժամադրած օրի մասին: Ես ասացի նոյնպէս Ծերակուտի մէջ, որ դու մեծատունների սպանութիւնը յետ ես ձգել մինչև Հոկտեմբերի 27ը, երբ որ քաղաքական հասարակութեան նախապատիւ մարդիկը փախըստական եղան Հռոմից ոչ թէ իւրեանց անձը պատսպարելու, այլ քո դիտաւորութիւնների առաջքը փակելու համար: Մի՞թէ կարող ես դու ուրանալ թէ նոյն իսկ օրին իմ պահապաններով, իմ զգաստամտութեամբ շրջափակված, չկարողացար դու ոչինչ բանի ձեռնարկել ընդդէմ հասարակապետութեան, թէպէտ ասումէիր, երբ որ միւսերը հեռացած էին Հռոմից, բաւական էիր դու սպանելով մեզ որ յետ էինք մնացած: Ինչ էիր մտածում, երբ որ դու Նոյեմբերի նոյն իսկ առաջին թուականին քաջահաւատ էիր զիշերային յարձակմամբ տիրապետել Պրենեստէ ամրոցաշէնքին. նկատեցիր, որ այն դաղթաշէնքը իմ հրամանով, իմ զինուորներով, պահապաններով և հսկողներով պատսպարած էր: Դու ոչինչ կարող չես առնել, ոչինչ բանի ձեռնարկել, ոչինչ քո մտքից անցուցանել, որ ես ոչ թէ միայն չլսէի, այլև չտեսանէի և պարզապէս չնկատէի:

ԳԼՈՒԽ Դ. Ընդ, խոստովանիր դու ինձ այն երեկեան զիշերը, և իսկոյն կը հասկանաս, որ ես առելի զգաստութեամբ հսկումէի հասարակապետութեան օգտի վերայ, քան թէ դու նորա վնասի և կործանութեան համար: Ասումեմ, որ դու երեկեան զիշերին եկար մանդաղազօրծների փողոցը (չկամիմ խօսել մանրաբար) Մ. Լեկայի տունը. որ այն տեղ հաւաքվեցան նոյն անմտութեան և ամբարշտութեան մտնակիցներ շատ: Մի՞թէ համարձակվում ես ուրանալ այս բանը. ինչու լուռ ես. կը հաստատեմ իսկոյն, եթէ ուրանում ես: Այո, ես տեսանումեմ այս տեղ, Ծերակուտի մէջ ներկայ մի քանի անձինք, որ

քո հետ էին միասին։ Մշանջենաւոր աստուածք, ինչ աղղերի մէջ ենք մեք, ինչ քաղաքի մէջ ապրումենք, ինչ հասարակապետութիւն ունինք։ Այս տեղ, այս տեղ, մեր մէջ, ով արժանընտիր հարք, այս տիեզերական, սրբազան և բարձրապատիւ խորհրդարանի մէջ գտանվումեն նոքա որ մատնումէին իմ և մեր բոլորեցունց կործանութեան վերայ, այս քաղաքի և մինչև անգամ աշխարհի կատարածի վերայ։ Որանց ահա տեսանումեմ ես հիւպատոս և զոյանից հարցանումեմ իւրեանց կարծիքը հասարակապետութեան մասին։ Ուրեմն, եղած ես դու Լեկայի մօտ այն գիշերին, Պատիլինա. դու բաժանեցիր Խատիայի մասները, որոշեցիր թէ ինչ մարդ դէպ ի որ կողմը պիտոյ է գնար. ընտրեցիր որը Հռոմի մէջ թողնելու և որը քո հետ դուրս տանելու. դու սահմանեցիր քաղաքի մասները հրձիգ տանելու (կրակ ձգելու) համար. դու հաւատացուցիր, թէ ինքդ արդէն դուրս գնալու ես, ասացիր թէ դեռ ես փոքր ինչ կարելի է յապաղել, ըստ որում կենդանի էի ես։ Գտանվեցան երկու հռոմէական ասպետք, որ քեզ ազատեցին այդ հոգածութենից և յանձն առան նոյն իսկ գիշերին, լուսածագից փոքր ինչ յառաջ, սպանել ինձ իմ անկողնի մէջ։ Այս բոլորիս, հաղիւ թէ արձակված էր ձեր խորհրդակցութեան ժողովը, տեղեկացայ ես անյապաղ. իմ օթեւանս բազմաթիւ պահապանների պատսպարեցի և ամրացուցի. տրտաքսեցի նորանց որ դու առաւօտուն վաղ ուղարկել էիր ողջունելու ինձ, երբ որ եկած էին նոյն մարդիկը, որ ես արդէն յառաջուց սատած էի շատ և դերապատիւ մարդերի թէ դալոց էին իմ մօտ այս ինչ ժամանակ։

ԳԼՈՒԽ Ե. Որովհետև այս այսպէս է, ուրեմն Պատիլինա, երթ, ուր որ սկսել ես երթալ. դուրս գնա միանգամ քաղաքից, բաց են դուռները, հեռացիր։ Ձանձրանալով ահա սպասումէ քեզ երբիւ իւր զօրապետին այն քո Մալլեան բանակը. դուրս տար քո հետ այն քո բոլոր կուսակիցքը. եթէ ոչ, գոնեայ այնքան շատերը, ինչքան կարելի է։ Մաքրիր քաղաքը, մեծ երկիւղից կազատես դու ինձ, միայն թէ իմ ու քո մէջ դրած լինէր մի բաժանող պատ։ Մեր հետ միասին կարող չես ապրել. չեմ տանելու, չեմ համբերելու, չեմ թոյլ տալու։ Մեծ գոհութիւն վայել է մշանջենաւոր աստուածներին և մա-

նուանդ սոյն իսկ Իւպիտեր Պատրօքլոս (¹), ամենահին պաշտպանին այս քաղաքիս, որ մեք աղաղակեցանք մի տիպիսի դարշելի, տիպիսի սոսկալի, տիպիսի հասարակապետութեանը վնասակար ժանտախտից։ Զէ պիտոյ ջանիցդ դուրս յանձնես մի լոկ մարդու պատմառով փորձանքի մէջ ձգել հասարակաց բարին։ Դանել անպամ որ դու, Պատրիկնա, ինձ, դալոց տարու համար ընտրած հիւպատոսիս, դարան ես գործել, ես ոչ թէ հասարակութեան պահպանութեամբ, այլ իմ մասնաւոր շրջանկատութեամբ պաշտպանել եմ իմ անձը։ Երբ որ դու այս օրերումն եղած, հիւպատոսներ ընտրելու ժողովի մէջ, մարսեան հրապարակում կամիր տպանել ինձ և քո խնդրողակիցքը, ես խափանեցի քո ամբարիշտ ձեռնարկութիւնը բարեկամներիս օգնութեամբ և բազմութեամբ, առանց աղմուկ յարուցանելու ժողովրդի մէջ։ Վերջումը, քանի անպամ որ դու խնդրած ես իմ կեանքը, ես իմ գլուխս դէմ եմ դրել քեզ, թէպէտ տեսանումէի, որ իմ կորուստս կից է հասարակաց ձախորդութեան հետ։ Այժմ յայտնապէս յարձակվումես դու բոլոր հասարակապետութեան վերայ, մշանջենաւոր աստուածների, քաղաքի տների, բոլոր քաղաքացիների կեանքի վերայ, և բովանդակ Իտալիան քարշումես դէպ ի աւերումն և կործանութիւն։

Արդարև, թէպէտ ես դեռ ևս համարձակվում չեմ այնպէս վարվիլ քո հետ, ինչպէս հարկաւոր էր իսկոյն, և ինչպէս պահանջումէ այս տկրութեան և մեր նախահարց կարգը։ սակայն կը վարվիմ այնպէս, որ խստութեան մասին աւելի մեղմ է, և հասարակաց օգտի մասին աւելի փրկաւէտ։ Պատմում, եթէ հրամայեմ տպանել քեզ, այնու ամենայնիւ մնալու է հասարակութեան մէջ դարանագործների միւս բազմութիւնը։ բայց եթէ դու, ինչպէս վաղուց ահա յորդորումեմ քեզ, դուրս գնաս, այնուհետև կ՝ իսպառվի քաղաքը հասարակապետութեան մեծ և կրաստական ապականութենից, այսինքն քո ընկերակիցներից։ Ինչ ես մտածում, Պատրիկնա, մի՞ թէ դժուարանու-

(¹) Հռոմէական պատմագիր Լիվիոսի վկայելով (գիրք 1. գլ. 12) Իւպիտերը ստացաւ այս մականունս Հռոմուլոսից։ Այսինքն, երբ որ Հռոմայեցիք ընդդէմ Սաբինացոց կռուի մէջ երես դարձուցին, Հռոմուլոսը ուխտեց Իւպիտերին մի տաճար, եթէ խափանէր նա Հռոմայեցոց փախուստը։ Հռոմայեցիք դադարեցին փախչելուց. և այսպէս Իւպիտերը ստացաւ մականունս Պատրօքլոս Լատինական sistere բառից, որ նշանակում դադարեցնել, ուրեմն սիրապէս Դադարեցնող։ բայց մեր բնաբանի մէջ պահպանվեց։

մեռ դու իմ հրամայելովս կատարել այն բանը, ինչ որ արդէն քո յատուկ կամքով կատարուէիր։ Դուրս գնալ քաղաքից հրամայուէ հիւպատոսը։ Քեզ թշնամուդ. դու հարցանուէս ինձանից, մի թէ դէպ ի աքսոր։ Ձեմ հրամայում, բայց եթէ խնդրուէս իմ կարծիքը, յօժար ու հաւան եմ դորան։

ԳԼՈՒԽ Զ. Դու արդարև, ասա դու ինձ, Կատիլինա, ինչ բան դեռ ևս կարող էր քաղցրացնել քո սիրտը այս քաղաքի մէջ, ուր բաց ի այդ դաւադիրը, վատթար մարդերից ոչ ոք չկայ, որ ահի մէջ չլինէր քո երեսից, ոչ ոք, որ չատէր քեզ։ Ընտանեկան խայտառակութեան որ նշանը դրոշմած չէ քո կեանքի վերայ. որ անվայելչութիւնը մասնաւոր գործերի մէջ մածուած չէ քո համբաւի վերայ, որ ցանկութիւնը քո աչքերից, որ չարագործութիւնը քո ձեռքից, որ պղծութիւնը քո բոլոր մարմնից հեռի է մնացել երբէք։ Ո՛ր պատանի մարդուն, որ դու որսացել էիր քո որոգայթների մէջ, չես առաջնորդել դու դէպ ի սպանութեան յանդգնութիւնը, կամ թէ ջահը ձեռքիդ լուսատու չես եղել դէպ ի զաղրագործութիւն։ Թող աւելին ասեմ. մնաներում, երբ որ դու քո առաջին կնոջ մահովը դատարկեցիր առնդ մի նոր հարսանիքի համար, մի թէ այս յանցանքի վերայ չկուտակեցիր մի այլ զարհուրելի յանցանք, որ չկամիմ յառաջ բերել այս տեղ, այլև պատրաստ եմ լռութեան մէջ թաղել դորան, մի գուցէ երևէր թէ այս քաղաքական հասարակութեան մէջ մի այդպիսի անօրէն և այլանդակ գործ կամ եղած է, կամ թէ մնացել է անպատիժ։ Ձկամիմ յառաջ բերել քո ստացուածների անփախչելի կորուստը, որին գալոց 13 ին (¹) կը տեղեկանաս դու։ Գալիս եմ խօսելու այն բաների վերայ, որ պատկանում են ոչ թէ քո արատաւոր կեանքի մասնաւոր վատահամբաւութեանը, ոչ թէ քո անայլին դժուարութեան և ամօթին, այլ վերաբերվում են դէպ ի հասարակաց գերագոյն բարին և դէպ ի մեր բոլորիս կեանքը և փրկութիւնը։ Ո՞ր թէ այս լոյսը, այս երկնակամա-

(¹) Հռոմէացիք սովորութիւն էր վճարել արծաթադրամները և տոկոսները ամեն ամսի առաջին օրումը, որ սովորաբար կալենդէ (calendæ), ուստի և մեր հայոց կաղանդ բառը։ Բայց պարտատերերը սովոր էին նշանակել ժամանակ տալ պարտապաններին մինչև ամսի 13ը կամ 15։ Պարտապանների համար մի սխալ օր էր ամսի կաղանդը, այս պատճառով ասում էր հորատիսը tristes Calendæ, տխուր կաղանդ։

րի օդը կարող էր քաղցը լինել քեզ, Կատիլինա, եթէ արդէն գիտես դու, որ սոցա մէջ ոչ ոք չիցայ, որին յայտնի չլինէր, թէ դու Յունվարի կաղանդից մի օր յառաջ, Լեպիդոս և Տուլլոս հիւպատոսների օրերումը, ազգային ժողովի մէջ կանգնած էիր, սուրը ձեռքիդ մէջ թագուցած, և պատրաստվումէիր սպանել տէրութեան հիւպատոսները և նախապատիւ մարդիկը. բայց քո ամբարշտութեանը և կատաղութեանը արգելք եղաւ ոչ թէ քո մտքի փոխարկութիւնը կամ թէ քո երկիւղը, այլ հռոմէական ժողովրդի բարի բաղդը: Ես թողումեմ այդ իրողութիւնքը, որովհետև բացայայտ են դրա, և շատերը նորումն եղած: Բայց այսքան միայն կամէի յիշել այս տեղ. Քանիցս համարձակվել ես դու սպանել ինձ, երբ որ ընտրած էի հիւպատոս դալոց տարու համար, և քանիցս, երբ որ հիւպատոս էի արդէն: Քանի քանի հարուածներիցդ, որ այնպէս էին պատրաստված որ երևումէին անփախչելի, ազատվեցայ ես մի փոքր շեղելով մարմինս: Օ՜ուր է քո ջանքը և անօգուտ քո վաստակը. սակայն դու չես դադարում ձեռնարկել և կամենալ: Քանիցս ահա քո ձեռքից խլված է այդ սուրը և քանիցս դա պատահմամբ վայր է ընկել, դուրս է պրծել. բայց թէ այդ սուրը ինչ դժոխական ոգիների ապաստուրութեան նուիրված ու ընծայած է, չգիտեմ, որովհետև դու այդքան հարկաւոր ես համարում այդ սուրը կոխել հիւպատոսի սրտի մէջ:

ԳԼՈՒԽ Է. Բայց այժմ, Կատիլինա, այդ ինչ է քո կեանքը. այսպէս ահա կը մէջ խօսել քո հետ, ոչ թէ ատելութեամբ բորբոքված, ինչպէս պիտոյ էր ինձ լինել, այլ դէպ ի դուրթ շարժված, որ ամենևին անպատշաճ է քեզ: Մի փոքր յառաջ դու եկար Ծերակուտի մէջ. ով այսքան մեծաժողով բազմութենից, քո այսքան բարեկամներից ու մտերիմներից ողջոյն տուեց քեզ: Եթէ այս բանս ոչ որի պատահած չէ, ինչքան որ յիշելի է մարդկերին անցածը, դու մի՞ թէ սպասումես հայհոյական խօսքերի, երբ որ ահա դատապարտված ես ընութեան ամենածանր դատաստանով: Ինչպէս ես մեկնում այս բանը, որ դու Ծերակուտի մէջ նստես մնում, և ահա դատարկվիցան այդ նստարանքը. որ բոլոր հիւպատոսականքը, որ դու շատ անգամ որոշել էիր որպէս մոլթելի զոհերի, իսկոյն այդ կողմի նստա-

բանեերից վեր կացան և մերկ ու անապատ թողեցին նորանց։ Արդեօք ինչ սրտով կարող էիր տանել այսպիսի անարգութեան։ Վ՞կայ է Երբուլէս աստուածը, որ եթէ իմ ծառայքս այդպէս վախենային ինձանից, ինչպէս քո բոլոր քաղաքացիքը քեզանից վախենումեն, պատրաստ էի հրաժարվիլ տանից ու տեղից. բայց դու չես մտածում հրաժարվիլ քաղաքից։ Եթէ ես տեսանէի իմ անձը իմ քաղաքակիցների աչքում մինչև այդ աստիճան անիրաւացի կասկածելի և դայթակղեցուցիչ, աւելի լաւ կը համարէի ամենևին չտեսանել նոցա երեսը, քան թէ այս թշնամական աչքերի նպատակ լինել. դու, որ դիտակից լինելով քո ամբարշտութիւններին, խոստովանումես, թէ բոլորեցուն ատելութիւնը իրաւ ու արժանի է քեզ, մի՞թէ դժուարանումես հեռանալ այն մարդերի հայեացքից և մտաւորութիւնից, որոնց սիրտը և միտքը խռովեցնումես դու։ Եթէ քո ծնողքը երկիւղ ունենային քեզանից և ատէին քեզ, և դու ոչինչ կերպով չկարողանայիր մեղմել և հաշտեցնել նոցա սիրտը, կարծում որ նոցա աչքից փախստական կը լինէիր դէպ ի մի կողմ. այս բոպէիս հայրենիքը, որ մեր ամենեցուն հատարակաց մայրն է, ատում քեզ և երկիւղ մէջ է քո երեսից և վաղուց ահա վճռահատել է, որ դու ոչինչ բանի վերայ մտածում չես, բայց միայն կատարել դէպ ի նա մի հայրասպանութիւն։ Ա՞մի թէ չվախիս դու ոչ սորա արժանապատուութիւնը մեծարել, ոչ սորա դատավճռին հնազանդիլ և ոչ սորա կարողութենից երկիւղ կրել։ Հայրենիքը քո հետ, Պատրիկնա, խօսում և որպէս թէ լռութեամբ բարբառում այսպէս. Ահա մի քանի տարի է, որ ոչ մի չարագործութիւն եղած չէ, եթէ ոչ, քեզանով, ոչ մի խայտառակ գործ առանց քո. դու միայն սպանել ես շատ քաղաքացիք, ճնշել ու կողոպտել ես Հռոմի գաշնաւորքը, մնալով անպատիժ և ազատ. դու ոչ թէ միայն կարողացել ես օրէնքները և տեղական քննութիւնը անգործ կացուցանել, այլև հիմն ի վեր կործանել և ջաղջախել։ Յառաջուց եղածները թէպէտև անտանելի էին, սակայն տարայ, ինչպէս կարող էի. բայց այժմ լինել ինձ ամենևին երկիւղի մէջ քո պատճառով միայն, և եթէ մի բան շարժվումէր, ահ ու դողի մէջ մտածել միշտ Պատրիկնայի վերայ, տեսանել որ ոչինչ խորհուրդ չէր կատարվում ընդդէմ իմ, որին մտա-

նակից չլինէր քո ամբարշտութիւնը — դոքա անտանելի են։ Ուրեմն բաց դնա դու, և այդ երկիւղից ազատիր ինձ, որ եթէ ճշմարիտ է դա, չեղդվիմ ես դորանից, բայց եթէ սուտ է, և այնպէս միանգամ վերջանայ իմ երկիւղը։

ԳԼՈՒԽ Ը. Եթէ այս խօսքերը, ինչպէս ասացի, խօսումէր քո հետ հայրենիքը, մի՞ թէ պիտոյ չէր քեզ կատարել նորա խնդիրը, թէև նա կարող չէր բռնութիւն դործ դնել։ Ինչ ունիս ասելու, եթէ յառաջ բերեմ այս տեղ, թէ դու ինքդ քո անձը դրեցիր պահպանութեան տակ. որ դու, կասկածանքից ազատվով կացուցանելու քեզ, ասացիր թէ կամիր օթևանել Մանիոս Լեպիդոսի մօտ. բայց սորանից չընդունվելով համարձակվեցար զալ իմ մօտ և խնդրեցիր որ իմ անուամ պահպանեմ քեզ։ Երբ որ ինձանից ևս նոյն պատասխանը ստացար, թէ ոչինչ կերպով կարող չեմ նոյն պատերի մէջ ազատվով լինել քո հետ միասին, ըստ որում վանդի մէջ լինելու էի, բնակիից լինելով քեզ մի և նոյն օթևանի մէջ, եկար դու Պ. Մեսելլոս Պրեսորի մօտ, որ դու այն կարծումիր թէ մեծ զգուշութեամբ պահպանելու է քեզ, շատ սրամիտ է կասկածանք քաղելու համար և շատ ղօրաւոր է պատժողութեան մասին։ Բայց ասա՛ դու ինձ, ինչքան պիտոյ է հեռի երևէր բանտից ու կապանքից այն մարդը, որ ինքը ահա արժանի է դատում իւր անձը հսկողական պահպանութեան. ուրեմն եթէ այսպէս է բանը, մի՞ թէ յապաղումես դու, Կատիլինա, եթէ անկարելի էր քեզ խաղաղ հոգով սպասել մահու, հեռանալ դէպ ի օտար աշխարհ և այդ կեանքը, որ շատ և արժանի պատիժների տակից դուրս էր քերված, յանձնել փախստականութեան և միայնակեցութեան։

,,Առաջարկիր ծերակուտին" ասումես դու. այս պահանջումես դու, և ասումես. Եթէ այս բարձրապատիւ անձինքը կը վճռեն, թէ հաւան էին, ապա երթալու ես դէպ ի աքսոր և կը հնազանդիս նոցա կամքին։ Ձկամիմ առաջարկել — այդ դուրս է իմ սովորութենից. այնու ամենայնիւ կ'աշխատեմ հասկանալի կացուցանել քեզ թէ ինչպէս էր սոցա կարծիքը քո մասին։ Դուրս դնա քաղաքից, Կատիլինա, ազատիր հասարակապետութիւնը երկիւղից. երթ դէպ ի աքսոր, եթէ այս խօսքին ես սպասում։ Ինչ կամիս լսել ասելի. մի՞ թէ ուշադիր

չես, մի՞թէ նկատում չես սոցա լռութիւնը. սոքա թոյլ են տալիս հրամայել քեզ և լուռ են. միւս ևս ինչ հարկաւոր է քեզ մի խօսուն վկայութիւն, երբ որ պարզօրէն տեսանում ես լռողների կամքը: Որա հակառակ, եթէ սոյն բանը ասած լինէի այս պատուական երիտասարդին, Պ. Սեքստոսին, այն քաջ տղամարդին, Մ. Մարկելլոսին, իսկոյն սոյն իսկ տաճարի մէջ և շատ իրաւացի կը բռնադրուէր և ձեռնամերձ կը լինէր ինձ ծերակոյտը: Բայց քո մասին, Կատիլինա, հանդիսաւոր մնալով նոքա, հաստատումն իմ խօսքս. թոյլ տալով, վճռումն. լռելով, աղաղակումն: Դու ոչ թէ սոքա միայն, որոնց վկայութիւնը արդարև մեծակշիռ է քո աչքումը, բայց կեանքը շատ թեթևակշիռ, այլև այն հռոմէական ասպետքը, առաքինի և հայրենասէր մարդիկ, այլև միւս քաջ քաղաքացիքը որ կանգնած են ծերակուտի չորս կողմ, որոնց բազմութիւնը կարողացար դու տեսանել, պատրաստականութեանը վերահասու լինել, ձայնարկութիւնքը մի փոքր յառաջ լսել: Ինչ մարդերի ձեռք ու զէնք, որ վաղուց արդէն դարձուցած էին դէպ ի քեզ, հաղիւ թէ կարողանում եմ յետ պահել քեզանից, նոյն մարդերին կարող եմ հեշտ տեղիք տալ, որ քեզ, վաղուց արդէն այս մեր շրջակայքը աւերել ջանացողիդ, ճանապարհ ձգէին դէպ ի քաղաքի դուռները:

ԳԼՈՒԽ Թ. Թէպէտ — բայց ինչ եմ ասում. երանի թէ մի բան կարողանար կորացնել քո մէջքը. երանի թէ ուղղէիր քո անձը երբ և իցէ. երանի թէ մոռանէիր, միանգամ հրաժարվիլ մեզանից, դէպ ի աքսոր դնալ: Երանի թէ մշանջենաւոր աստուածքը ազդէին քո մէջ այդ միտքը. թէպէտև տեսանում եմ, որ եթէ իմ խօսքից ահաբեկված, յանձն առնուս դէպ ի աքսոր դնալ, որպիսի տանջութեան փոթորիկ պիտոյ է բարձրանայ իմ վերայ, եթէ ոչ ներկայումս, որովհետև դեռ ևս զուարթ էր քո ամբարշտութեան յիշատակը, ապա դալոց օրերումը: Բայց գործը արժանի է այդ ըղկանքին, միայն թէ լինէր դա իմ անձնական վատաբաղդութիւնը և հեռի մնար հասարակապետութեան վտանգներից: Բայց անօգուտ է պահանջել քեզանից, որ հեռանայիր քո արատներից, երկնչէիր օրէնքի պատժողութենից, յարմարվէիր տէրութեան հանգամանքին: Դու, Կատիլինա, այն մարդը չես, որ քեզ կամ ա-

մեթը յեա քարշած լինէր խոյտառակութենից, կամ երկիւղը վատնդից կամ թէ բանականութիւնը կատաղութենից։ Ուրեմն, ինչպէս շատ անդամ արդէն ասացի, գնա, հեռացիր, և եթէ կամիս, ինչպէս քարոզուսես, ստելութիւն բորբոքել ընդդէմ իմ որ թշնամի էի քեզ, ապա դէպուզիզ գնա աքսոր։ Արդարև. դժուար թէ կարող էի տանել մարդերի բամբասանքին, եթէ դու առնէիր այդ բանը. դժուար թէ այդ ստելութեան ծանրութիւնը, եթէ դու աքսոր գնայիր հիւպատոսի հրամանով, կարող էի բառնալ իմ ուսերի վերայ. բայց եթէ դու աւելի լաւ ես համարում ձեռնտու լինել իմ պարծանքին, ապա դուրս գնա քո ամբարիշտ, անտանելի ընկերակիցներով միասին. երթ Պալլեոսի մօտ, բորբոքիր վատթարաբարոյ քաղաքացիքը, բաժանվիր բարեմիտներից, արի պատերազմով քո հայրենիքի վերայ, ցնծացիր քո ապիրատ աւազակութեամբ, որպէս զի երևէր թէ դու գնացած էիր քո բարեկամների մօտ, ոչ թէ արտաքսված լինելով դէպ ի օտարութիւն, այլ հրաւիրված։ Բայց անտեղի է իմ հրաւիրանքը այն մարդուն որ, ինչպէս գիտեմ, յառաջուց արդէն ուղարկել է մարդիկ, որ Աբելլեան Ճանապարհի մօտ սպասեն նորան զենուորված. այն մարդուն որ, ինչպէս գիտեմ, որոշել ու ժամադրել է օրը Պալլեոսի հետ. այն մարդուն, որ յառաջուց դուրս է ուղարկել այն արծաթեայ արծիւը, որ քաջայոյս եմ թէ քո և բոլոր քոյրիններին լինելու է կորստաբեր և տրամեցուցիչ, այն արծիւը որի համար քո տան մէջ յօրինած է քո չարապաշտութեան սեղանը։ Դու ինչպէս կարող ես աւելի երկար զուրկ մնալ դրանից, որին սովոր էիր երկրպագութիւն մատուցանել, երբ որ առանց դուրս էիր դընում մարդասպանութիւն գործելու, որի սեղանից շատ անդամ այդ քո ամբարիշտ ձեռքը փոխաբերել ես դէպ ի քո քաղաքակիցների սպանութիւնը։

ԳԼՈՒԽ Ե. Վերջապէս գնումես դու այն տեղ, ուր վաղուց արդէն քարշելով տանում էք դու քո սանձակոտոր և կատաղի ցանկութիւնը։ Դու երբէք կամեցած չես մի այլ խաղաղութիւն կամ պատերազմ, եթէ ոչ, պիղծ և անասնուած։ Դու ասացել ես քո համար ամբարիշտների զօրաժողով որ բաղկանում կոլած, և ոչ թէ միայն բաղդից, այլև ամենայն

յոյսից զրկված մարդերից։ Ո՛հ. սոցա մէջ ինչ ուրախութեամբ կը վայելչանայիր դու, ինչ ցնծութեամբ վեր ու վեր կը թռչէիր, ինչ զգալի հեշտութիւններ մէջ վայրենաբար կը թաւալվէիր, լաւ որում քո ընկերակիցների այդքան բազմութեան մէջ մի առաքինի մարդ ոչ լսելու և ոչ տեսանելու ես։ Այսպիսի կեանք վարելու համար, հնարաստեղծած են այն քո հոչակաւոր աշխատութիւնքը, այսինքն բացօթեայ լինելը (բացումը դեռնի վերայ պառկելը), ոչ թէ միայն աչք պահելով սպասելը քո պառնկութեան որսին, այլև մի չարագործութեան. հսկելը ոչ թէ միայն որոգայթ լարելով քուն եղած ամուսնաւոր տղամարդերին, այլև սպանածների գոյքին և կալուածին։ Դու ընկերների առաջև կարող ես դու պարծենալ այն քո մեծահոչակ համբերութեամբ սովի, ցրտի և ամենայն պակասութեան, որ կարճ միջոցում կ'ուտեն ու կը մաշեն քեզ, ինչպէս կը տեսանես։ Երբ որ ես հալածեցի քեզ հիւպատոսական պատուից, այնքան կարողացայ յառաջ տանել, որ դու իբրև աբսորական մանաւանդ կարող էիր փորձել քան թէ իբրև հիւպատոս հարստահարել հասարակապետութիւնը. այլև, որ այն գործը որ դու անօրինաբար յանձն ես առել, աւազակութիւն ասվէր մանաւանդ, քան թէ պատերազմ։

ԳԼՈՒԽ ԺԱ. Այժմ թող ինձանից, արժանընտիր հաբք, բացէ ի բաց հալածեմ և հեռացնեմ մի կերպ գրեթէ արդարացի գանգատանք հայրենիքի բերանից. աղաչեմ, լսեցէք ինձ ուշադրութեամբ ինչ որ ասելու եմ, և իմ ասածս խոր տպաւորեցէք ձեր սրտի և մտքի մէջ։ Ահա, եթէ հայրենիքը, որ շատ աւելի սիրելի է ինձ քան թէ իմ կեանքս, եթէ ողջ Իտալիան, եթէ բոլոր հասարակապետութիւնը խօսումէր իմ հետ այսպէս. ,,Մարկոս Տուլլիոս, ինչ գործի վերայ ես դու. մի՞ թէ այն մարդուն, որի թշնամի լինելը դիտես դու վերահասութեամբ, որ ավելյանի լինելու է պատերազմի առաջնորդ, որին իբրև հրամանակալի սպասումէին թշնամական բանակումը. մի՞ թէ դու այն մարդուն, որ եղած է ամբարշտութեան պատճառ, դաւաճանութեան հեղինակ, ծառաների և վատթար քաղաքացիների խառնակիչ, թոյլ ես տալիս դուրս գնալ քաղաքից այնպէս, որ երևումէր, ոչ թէ դու քաղաքից դուրս էիր վարել նորան, այլ նեղս էիր բերել քաղաքի մէջ։ Մի

թէ չկամիս դու հրամայել, որ սա դրվի կապանքի մէջ, քարշ-
վի դէպ ի մահ և զոհվի ամենամեծ պատուհասով։ Արդեօք ո՞ր
բանը արդեւք է քեզ. նախահարց սովորութիւնը. բայց շատ
անգամ և մասնաւոր մարդիկ այս հասարակութեան մէջ մահով
պատժել են վնասակար քաղաքացիք. մի՞ թէ ժողովրդի առա-
ջարկութիւնը, որ հարկաւոր էր, մի հռոմէական քաղաքացի
պատժելու համար. բայց այս քաղաքումը, նոքա որ ուրացել
էին հասարակաց բարին, երբէք ունեցած չէն քաղաքացիների
իրաւունք։ Կամ թէ վախո՞ւմես դու դալոց ժամանակների բամ-
բասանքից։ Արդարև, մի փառաւո՞ր շնորհակալութիւն ես մա-
տուցանում դու հռոմէական ժողովրդին, որ քեզ, ինքն ըստ
ինքեան յառաջացած մարդ, առանց նախահարց ընծայութեան,
այդքան կանուխ, պատիւների բոլոր աստիճանների վերայով
բարձրացուցել է մինչև այդ ծայրագոյն հրամանակալութիւնը
տէրութեան մէջ, եթէ դու երկիւղ կրելով բամբասանքից
կամ որ և իցէ վտանգից, անփոյթ ես առնում քո քաղաքա-
ցիների փրկութիւնը։ Բայց եթէ կայ որ և իցէ բամբասանքի
երկիւղ, մի՞ թէ աւելի երկիւղալի էր քեզ բամբասանքը անա-
չառութեան և քաջասրտութեան պատճառով, քան թէ հեղ-
գութեան և վատթարութեան։ Կամ թէ, երբ որ Իտալիան
քարուքանդ էր լինում պատերազմից, քաղաքները կողոպտվու-
մէին, տունները այրվումէին, կարծո՞ւմես դու, թէ քեզ ուսե-
լու և մաշելու չէր ատելութեան հրայրեացքը։"

ԳԼՈՒԽ ԺԲ. Այս սուրբ և պատկառելի խօսքերին, որ լը-
սումեմ հասարակութեան բերանից, և խորհրդածութեանը
այն մարդերի, որ ունին նոյն կարծիքը, կամենումեմ մի քանի
բառ պատասխանել։ Դու, արժանընտիր հարք, եթէ առաւել
պատշաճաւոր համարած լինէի, որ Պատիլինան մահով պատու-
հասվէր, մի ժամի միջոց տալու չէի ապրել այդ յանդուգն ա-
ւազակին։ Պատճառ, եթէ գերապատիւ մարդիկ և ականաւոր
քաղաքացիք Սատուռնինոսի, Գրակխոսների և Ցիլակկոսի և
նոցանից յառաջ եղած խռովարարների արիւնով ոչ թէ չա-
պականեցին իւրեանց անձը, այլ մեծարելի մանաւանդ կացու-
ցին, ապա տեղիք չկար երկիւղ կրելու ինձ, մի՞ դուցէ իմ ան-
ձը բամբասանքի տակ ձգէի յետոյ դալոց ազգերի մէջ։ Բայց
եթէ այդ էր մանաւանդ երկիւղը, փոյթ չէ ինձ. միշտ այնպէս

է եղել իմ սրտի զգացողութիւնը, որ առաքինութեան պատճառով ստացած բամբասանքը փառք համարէի ինձ և ոչ թէ վատահամբաւութիւն։ Թէպէտ կան մի քանի մարդիկ այս արժանապատիւ հասարակութեան մէջ, որ մօտահաս վտանգը կամ չեն տեսանում, կամ թէ իւրեանց տեսածը թաղուցանումեն. որ Կատիլինայի յոյսը մեղմ դատավճիռներով սնուցած են և իւրեանց չհաւատալովը զօրացուցել են դաւաճանութիւնը մինչ դեռ մանուկ էր դա. և այդպիսիների օրինակին հետևելով շատերը, ոչ թէ միայն ամբարիշտ, այլև անփորձ մարդիկ, պիտոյ է ասէին, թէ անգթութեամբ և բռնակալութեամբ էի վարվել ես, եթէ պատժած լինէի սորան։ Այժմ հաւատի եմ, որ եթէ դա հասած էր Մալլեան բանակին, ուր դիմումէ ահա, այնուհետև ոչ ոք լինելու չէր այնքան տխմար, որ չնկատէր թէ եղած է դարանադրութիւն, և ոչ ոք այնքան ամբարիշտ, որ ուրանար դորան։ Բայց վերացնելով միայն սորա կեանքը, այո՛ մի քանի րոպէ մեղմանալու էր այս ժանտախտը տէրութեան մէջ, բայց տեղողապէս բնաջինջ լինելու չէր։ Իսկ եթէ նա ինքնին դուրս գնայ և տանէ իւր հետ իւրայինքը, և այն տեղ հաւաքէ ամենայն կողմից միւս նաւաբեկված (վատթար անտեսութեամբ գոյքից ու հաւատից զրկված) մարդիկը, այնուհետև բնաջինջ կը լինի և կը վերացվի ոչ թէ միայն այս արդէն չափ և հասակ առած ժանտախտը տէրութեան, այլև բոլոր չարութիւնների արմատն ու սերմը։

ԳԼՈՒԽ ԺԳ. Այս արդարև, վաղուց ահա, արժանընտիր հայրք, դտանվումենք այս դարանադրութեան վտանգների և որոգայթների մէջ. բայց չգիտեմ թէ ինչ պայմանով բոլոր չարութիւնների և վաղաժամանակեայ կատաղութեան ու յանդգնութեան դերածայրեալ լրութիւնը դուրս է յարձակվելմեր հիւպատոսութեան միջոցումը։ Բայց եթէ այնքան մեծ աւազակաժողովից վերացվէր դա միայն, այո՛ դուցէ թէ մի փոքր ժամանակ թեթևանալու էինք հոգածութիւնից և երկիւղից, բայց վտանգը մնալու է դարձեալ, խոր փակված լինելով հասարակապետութեան երակների և աղիքների մէջ։ Օ՜որ օրինակ, շատ անգամ մարդիկ ծանր հիւանդութեամբ ախտացած, տենդի ջերմութեան մէջ խորովվելով, եթէ խմած էին պաղ ջուր, արդարև սկզբումը երևումեն թեթևացած, բայց յե-

տոյ շատ աւելի խիստ և սաստիկ տանջվումեն։ Նմանապէս այս ցաւը հասարակապետութեան մէջ, թեթևանալով սորա պատուհասվելուց, աւելի սատկանալու է միւսերի կենդանի մնալովը։ Ուրեմն, թող հեռանան ամբարիշտները, թող բաժանվին աղնուամիտներից, թող հաւաքվին մի տեղ, թող վերջապէս միջնապատով, ինչպէս ասած եմ շատ անգամ, բաժանվին մեզանից, դադարեն որոգայթ լարել հիւպատոսին իւր տան մէջ, շրջապատել քաղաքային պրետորի տանը, սուրերով պաշարել ծերակուտի խորհրդարանը, լուցկիներ և ջահեր պատրաստել այրելու քաղաքը։ Վերջապէս թող դրվի ամեն մարդու ճակատի վերայ, թէ ինչպէս էր նորա կարծիքը հասարակաց օգտի մասին։ Դաջահաւատ եմ, արժանընտիր հարք, որ մեր, հիւպատոսներիս մէջ լինելու է այնքան զգաստութիւն, ձեր մէջ այնքան ազդողականութիւն, հռոմէական ասպետների մէջ այնքան առաքինութիւն, բոլոր աղնուամիտների մէջ այնքան միաբանութիւն, որ Կատիլինայի հեռանալովը տեսանելիք դուք բոլորը բացված, լուսափայլ կացուցած, սանձահարված, պատուհասված։

Ահա, այս դուշակութիւնների մէջ, ով Կատիլինա, տէրութեան ամենափրկաւէտ օգտի համար, որի հետ կապակից է քո յատուկ կորուսաը և կործանութիւնը, այլև այն մարդերի վերջը, որ քո հետ ընկերացել են ամենայն ամբարշտութեամբ և մարդասպանութեամբ, գնա, շտապիր դէպ ի քո անաստուած պատերազմը։ Այնուհետև դու, Իւպիտեր, որ նոյն նուիրական դուշակութիւնների տակ հաստատված ես, ինչպէս այս քաղաքը, որ և արդարացի ասվումես այս քաղաքի և այս տէրութեան պահպանիչ, սորան, և սորա համախոհքը հեռի պահիր քո սեղանների և միւս տաճարների, քաղաքի տների և պատերից, բոլոր քաղաքացիների կեանքից ու գոյքից։ այլև բարեպաշտների բոլոր չարեացակամքը, հայրենիքի թշնամիքը, Իտալիայի աւազակները որ ամբարիշտ դաշնաւորութեամբ և անօրէն ընկերակցութեամբ միաւորված են, պատժիր յաւիտենական պատուհասով այս և այն կեանքումը։

ԵՐԿՐՈՐԴ ՃԱՌ·

ՆԱԽԱԴՈՒՌՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

Երբ որ Կատիլինան Կիկերոնի առաջին ճառին բարկութեամբ պատասխան էր տուել և սպառնացել էր թէ իւր կործանվելովը պիտոյ է միասին կործանվէր և քաղաքը. այնուհետև շտապով հեռացաւ ծերակուտից և նոյն գիշերին իւր համախոհներից շատերի հետ դիմեց դէպ ի Մալլիեան բանակը, Էտուրիա։ Այս անակնկալ հեռանալը Կատիլինայի, առիթ տուեց զանազան կերպով դատելու Կիկերոնի ընթացքը. այսինքն Կատիլինայի համախոհքը կարծիք տարածեցին Հռոմի մէջ, որպէս թէ Կատիլինան հիւպատոսից բռնութեամբ արտաքսված, ինքնակամ աքսոր է գնացել դէպ ի Մասիլիա։ Այս մեղադրութենից արդարացնելու իւր անձը ժողովրդի առաջև, Կիկերոնը միւս օրին, Նոյեմբերի 9 ին, դուրս եկաւ ժողովրդի բաղմութեան մէջ և ասաց այս երկրորդ ճառը ընդդէմ Կատիլինայի։ Դորա բովանդակութիւնը այս է.

1. Ճառի մուտքումը նա շնորհաւորումէ հռոմէական ժողովրդի բաղդաւորութիւնը, որ Կատիլինան հրաժարվել է քաղաքից, ուրեմն կարող չէր այնուհետև վնասել նորան։
2. Որանից յետոյ արդարացնումէ իւր անձը մի կրկնապատիկ մեղադրանքից, ըստ որում քաղաքացիքը ցաւումէին թէ նա թոյլ է տուել Կատիլինային անպատիժ դուրս գնալ. դորա հակառակ, Կատիլինայի բարեկամքը հաստատումէին թէ սորա հետ վարվել էր հիւպատոսը չափազանց խստութեամբ։ Առաջին մեղադրանքին պատասխանումէ Կիկերոնը, յառաջ բերելով իւր ընթացքի պատճառները, այսինքն, որովհետև դարանագործութիւնը չէր դեռ ևս յայտնի կացուցած, երկրորդ, թէ նա Կատիլինային մահու պատիժ տալով, իւր անձը ատելի էր շինելու, և անկարելի եղած կը լինէր դարանագործութեան մասնակիցքը պատուհասել. այլև փախստական թշնամին իւր զօրքով չէր այնքան երկիւղալի, ինչքան Հռոմի մէջ յետ մնացած համախոհքը։ Երկրորդ մեղադրանքի առաջքը փակումէ նա, պատմելով ծերակուտի առաջև դարանագործութեան խորհրդակցութիւնը և զանազան իրողութիւններով հաստատումէ, թէ Կատիլինան յառաջուց արդէն վճռել է իւր մէջ, ոչ թէ դէպ ի Մասիլիա, այլ դէպ ի իւր զօրքը դիմել. Գլուխ 2—8։ Այսպէս պաշտպանելով իւր անձը չարեացակամ քաղաքակիցների յանդիմանութեան երեսից, յառաջ է բերում։
3. Ամի ցո-ցակ դարանագործութեան մասնակիցների, և այն քրէական յանցանքին ձեռնտու եղած Հռոմէացիների որ և բաժանումէ նա վեց կարգ. բայց սոցանից չունէր տէրութիւնը շատ տեղիք երկնչելու, ո-

րովհետև Նորա ապահովութեան և օգտի համար եղած էր պատշաճաւոր հոգաբարձութիւն։ Գլուխ 8—12։

4. *Դէմքը դարձուցանելով դէպ ի քաղաքի մէջ յետ մնացած դարանագործքը, յորդորումէ Նորանց անյապաղ հեռանալ Հռոմից, կամ թէ գոնեայ հանդարտ կենալ. որովհետև հասարակաց խաղաղութեան խառնակիչը կը պատժվի խստապէս. ապա դարձուցանումէ խօսքը դէպ ի բարեմիտ քաղաքացիքը, հաւաստի կացուցանելով Նորանց, թէ առանց զինաշարժութեան նոցա կողմից, վերջանալու է քաղաքական պատերազմը. այլև պահանջելով նոցանից աղօթել դէպ ի Աստուածքը, տէրութեան համար. գլուխ 12—13։*

ԳԼՈՒԽ Ա. Վերջապէս միանգամ, ով Կվիրիտացիք (¹), Լ. Պատիլենային լրբութեամբ կատաղած, ամբարշտութիւն ընելով, անաստուածօրէն կորուստ պատրաստելով հայրենիքին, ձեզ և այս քաղաքիս մահ ու կրակ սպառնալով, կամ դուրս ձգեցինք, կամ դուրս ուղարկեցինք, կամ թէ ինքը դուրս գնալով, ձայն արձակեցինք քամակից։ Գնաց, հեռացաւ, դուրս սողաց, դուրս յարձակվեցաւ։ Այսուհետև ոչինչ վնաս այդ այլանդակ և գարշելի գազանի ձեռքով պատրաստվելու չէ մեր պատերի մէջ դոյն իսկ պատերին։ Դու այս քաղաքական պատերազմի այս մի հատ առաջնորդին, անասարակոյս, յաղթեցինք մեք։ Պատճառ, այսուհետև մեր կողքումը շրջալու չէ դորա սպանողական սուրը. ոչ մարսեան դաշտումը, ոչ հրապարակումը, ոչ ծերակուտի մէջ և ոչ իսկ մեր տան պատերի մէջ դողալու չենք դորանից։ Նա խախտվել է իւր հիմքից, որովհետև արտաքսված է քաղաքից։ Հրապարակով արդէն, առանց խափանարկութեան կարող ենք պատերազմ մղել։ Առանց տարակուսի կոտրեցինք այդ մարդու մէջքը և փառաւորապէս յաղթեցինք նորան, ծակամուտ դարանագործութենից դուրս քարշելով դէպ ի բաց ու արձակ աւազակութիւն։ Եթէ նա արիւնաշաղախ դուրս չէ տարել իւր սուրը, որովհետև դուրս

(¹) Կվիրիտացիք մի պատուաւոր անուանակոչութիւն հռոմէական քաղաքացիների, մանաւանդ թէ խաղաղութեան միջոցներին. դա ըղխումէ Տուսկեան բառից Կվիրիս, նիզակ. բայց սովորական մեկնութիւնը այսպէս է, որ Կվիրիտացիք ասված են Կուրիս քաղաքից որի բնակիչք Սաբինացիքը Տարքիոս Թագաւորի օրերումը փոխանակեցին իւրեանց քաղաքը Հռոմի հետ։

է գնացել, մեզ կենդանի թողնելով, որովհետև սուրը դուրս քարշեցինք նորա ձեռքից, որովհետև նա քաղաքացիքը ողջ և առողջ, և այս քաղաքս հիմքի վերայ հաստատ յետ թողեց. այս բանի վերայ, ինչ էք կարծում դուք, ոչ ոքի տրտմութեամբ վշտացած ու յուսահատված է նա: Այժմ գեանի վերայ ձգված ու տարածված է նա, ով Կվիրիտացիք, և զգում է իւր անձը խորտակված ու արհամարհած, և արդարև աչքերը շատ անգամ յետ է ոլորում դէպ ի այս քաղաքս որ նորա կոկորդից դուրս քարշած լինելով, պատճառում է նորան սուդ և տրտմութիւն. բայց այս քաղաքը մեծ խնդութեան մէջ է երևում ինձ, որ մի այդպիսի կորստական ժանտախտ դուրս է փսխել և բաց է ժայթքել:

ԳԼՈՒԽ Բ. Բայց եթէ կայ մի մարդ, որպիսի պարտական էր լինել ամենայն ոք, որ սոյն իսկ բանի մէջ, որի վերայ խընդում է յաղթութեան տօն է կատարում իմ ճառս, ասստիկ մեղադրելու էր ինձ, որովհետև մի այդպիսի մահապարտ թրշնամի չէի հրամայել կապանքի մէջ դնել մանաւանդ, քան թէ արտաքս վարել. այդ իմ մեղքս չէ, Կվիրիտացիք, այլ ժամանակներն: Վաղուց արդէն արժան էր ամենածանր պատուհասով վերացնել Լ. Կատիլինայի կեանքը, և այդ բանը պահանջում էր ինձանից թէ մեր նախահարց սովորութիւնը, թէ այս տէրութեան անաչառ արդարութիւնը և թէ հասարակաց բարին: Բայց ինչ էք կարծում, ոքան մարդիկ գտանվելու էին, որ չէին հաւատալու իմ ասածին. ոքան մարդիկ որ յիմարութեամբ երկբայելու էին իմ խօսքի ճշմարտութեան վերայ. ոքան շատերը, որ այո և պաշտպանելու էին նորան, ոքան շատերը, որ ամբարշտութեամբ օգնելու էին նորան: Դու եթէ վերացնելով նորա կեանքը, կարողանայի մտածել, թէ բոլոր վտանգը հալածական կը լինէր ձեզանից, ապա վաղուց արդէն վերացրած կը լինէի Կատիլինայի կեանքը, ոչ թէ միայն յանձն առնելով ժողովրդի ատելութիւնը, այլև կեանքիս կորուստը: Բայց որովհետև տեսանում էի թէ դեռ ևս ոչ ամենեցուն լուսափայլ էր գործը, և, եթէ մահով պատժէի նորան, ինչպէս արժանի էր, ապա կարող էր պատահել, որ ատելութեան բեռի տակ ճնշված, չկարողանայի հալածել նորա ընկերակիցքը. այս պատճառով այն տեղ հաստուցի գործը, որ դուք հրապարակով կա-

բողանայիք պատերազմել, երբ որ յայտնապէս կը տեսանէիք թշնամին։ Բայց թէ այս թշնամին, ով Կվերիտացիք, դուրսումը ինչքան շատ երկիւղալի եմ համարում, կարող էք սորանից հասկանալ, որ և այն բանը ցաւելի է ինձ, որ նա դուրս գնաց քաղաքից տանելով իւր հետ շատ փոքր ճանապարհակիցք։ Երանի՜ թէ իւր բոլոր համախոհ բազմութիւնը դուրս տարած լինէր։ Տոնգիլեոսին տարաւ իւր հետ, որին սկսել էր սիրել մանկութեան օրերի մէջ. Փուբլեկիոսին և Մունատիոսին, որոնց հայկերատներում արած պարտքը ոչինչ խռովութիւն կարող չէր պատճառել հասարակութեանը. յետ թողեց որ պիսի մարդիկ, ինչքան ծանր պարտքերով բեռնաւորված, ինչքան ղօրաւոր, ինչքան երևելի մարդիկ։

ԳԼՈՒԽ Գ. Այս արհամարհումեմ Կատիլինայի ղօրքը, նայելով մեր Գալլիական լեգիոններին և այս պատերազմողների վերայ, որ Կ. Մետելլոսը Պիկենեան և Գալլիկեան սահմանները ժողովել է, և այս բազմութիւնների վերայ, որ ամենայն օր պատրաստվումեն մեր ձեռքով. ես արհամարհումեմ այն թշնամական ղօրքը, որ կազմած էր անյոյս ալեւորներից, ղեղեւ դիւղացիներից, վատնողութեամբ աղքատացած շինականներից, այնպիսի մարդերից որ աւելի լաւ էին համարել կեղտ անուն առնուլ իւրեանց վերայ, ոչ անփոյթ առնելով երևեւել դատաստանի առաջև սահմանեալ օրին, քան թէ բաց թողուլ այն ղօրքը. բայց դոքա, եթէ ցուցանեմ ես դոցա ոչ թէ միայն մեր ղօրքի ճակատը, այլև Պրետորի հրովարտակը, դէպ ի դեռին կը կործանվին։ Սորանց, որ տեսանումեմ այժմ վազվազելով հրապարակի մէջ, որ տեսանումեմ կանգնած խորհրդարանի մօտ, որ համարձակվումեն ներս մտանել ծերակուտի մէջ իւղած ու խնգաւորած մազերով, և ծիրանազգեստ զարդարված, սորանց աւելի կը ցանկանայի որ նա դուրս տարած լինէր իւր հետ իբրև իւր պատերազմողք. սոքա եթէ տեղապէս կը մնան այս տեղ, մի՛ տա՜ռէք տպա, որ այն դուրսի ղօրքը այնքան երկիւղալի չէր մեզ, ինչքան սոքա, որ յետ էին մնացել նոցանից։ Այլև, այն պատճառով աւելի երկնչելի էին դոքա, ըստ որում զգումէին թէ ես տեղեակ եմ դոցա խորհուրդներին, թէպէտ անշարժ են իւրեանց կամակորութեան մէջ։ Ես գիտեմ, ումին է մատն տուած Ապուլիան, ով պիտոյ

է սանար Լտարուրիան, ով Պիկենեան սահմանը, ով Գալլիկեանը, ով իւր համար բաժին էր խնդրել այս քաղաքային դարանադրծութիւնը, որ պիտոյ է լցուցանէր արիւնհեղութեամբ և հրձգութեամբ (1)։ Դոքա դիտեն, որ այն միւս գիշերի բոլոր խորհրդակցութիւնքը հասուցած են իմ ականջին. երեկ յայտնեցի ես այդ բանը ծերակուտի մէջ. ինքն Կատիլինան վախեցաւ, վախաւ. սոքա ինչ յոյս ունին. բայց շատ ու շատ սխալվումեն, եթէ կարծումեն որ այն իմ առաջին ներողամտութիւնը լինելու է մշտատև։

ԳԼՈՒԽ Դ. Ինչ բանի ցանկացած էի, արդէն հասել եմ դորան, այսինքն որ դուք ամենեքեան տեսանէիք թէ յայտնապէս որոգայթ է լարված հասարակապետութեանը. միայն թէ կար մի մարդ, որ կարծում չէր թէ Կատիլինայի նմանքը համախոհ էին Կատիլինային։ Այսուհետև չկայ տեղիք ներողամտութեան, նոյն իսկ գործը պահանջումէ անաչառ արդարութիւն։ Մի բան կամէի թոյլ տալ այժմ ևս. թող դուրս գընան, թող հեռանան, թող խղճալի Կատիլինային հալ ու մաշ չառնէին իւրեանց կարօտով։ Ես ցոյց եմ կը տամ ճանապարհը. նա գնացել է Աւրելիեան ճանապարհովը. եթէ կամէին դոքա շտապել, երեկոյին կը հասանէին նորան։ Ո՛վ բաղդաւոր հասարակապետութեանս, որ արդէն դուրս էր ձգել իւր միջից այս քաղաքի սոյն այս ապականութիւնը։ Արդարև, դուրս հանելով միայն Կատիլինային, երևումէ ինձ հասարակապետութիւնը թեթևացած և վերստին նորոգված։ Պատճառ, ինչ չար բան կամ յանցաւորութիւն կարելի է մտքով նկարագրել կամ հնարաստեղծել, որ նա յղացած չլինէր իւր մէջ. որ թոյն խառնողը բոլոր Իտալիայի մէջ, որ աւազակը, որ աւազակապետը, որ սրիկան, որ ծնողասպանը, որ կատակասարդասը, որ խաբեբայ մարդը, որ անառակը, որ վատնողը, որ պոռնիկը, որ վատահամբաւած կինը, որ ապականիչը մանուկների, որ ապականած մանուկը, որ կորած մարդը կարող էր խոստովանել թէ չէ ունեցել Կատիլինայի հետ շատ ընտանի հաղորդակցութիւն։ Ո՛ր սպանութիւնքը այս մօտիկ տարիներումն (2) եղած են առանց նո-

(1) Սոքա, Սալլուստիոսի վկայելով, էին Գեթեկոս, Գարինիոս և Սատուրնիոս հռոմայեցիքը։

(2) Այս տեղ ակնարկութիւն կայ մանաւանդ դէպ ի այն սպանութիւնքը, որ Կատի-

բա մանակցութեանը. որ ամբարիշտ պղծութիւնը չէ գործած նորա ձեռքով։ Եւ արդեօք որ մարդու մէջ եղած է երբէք այդպիսի քաջ հնարագործութիւն որսալու մանուկները, ինչպէս նորա մէջ. որ ումանց հետ ունեցել է ինքը ամենակեղտոտ սիրակցութիւն, միւսերի ցանկութեան կամքին ծառայել է ամենախայտառակ կերպով, այլ միւսերին ոչ թէ միայն յորդորելով, այլև օգնելով խոստացել է լցուցանել նոցա զարշելի կամքը, այլ միւսերին նոցա ծնողների մահը։ Բայց այժմ ինչպէս շուտով հաւաքել է նա իւր համար մի ահագին բազմութիւն կորած մարդերի, ոչ թէ քաղաքից միայն, այլև դաշտերից։ Ոչ մի մարդ, ոչ թէ միայն Հռոմի մէջ, այլև Իտալիայի որ և իցէ անկիւնում գտանվում պարտքերի մէջ թաղված, որին նա ընդունած չլինէր որպէս դաշնակից այս իւր անհաւատալի ամբարշտութեանը։

ԳԼՈՒԽ Ե. Այժմ, դուք ուշադիր եղէք որ վերահասու լինիք նորա զանազան ձգտողութիւններին ամենևին հակառակ պաշտօնների մէջ. ոչ ոք չկայ սուսերամարտական կրթարանի մէջ, որ լինելով մի փոքր աւելի յանդուգն և ձեռնարկու, չըխոստովանէր իւր անձը մտերիմ բարեկամ Կատիլինայի. ոչ մի թերթեւաբարոյ և վատթար մարդ թատրոնական հրապարակի մէջ, որ չպատմէր թէ եղած է նորա մերձաւոր ընկեր։ Եւ նոյն մարդը զգեր և յանցաւոր գործերի սովորած, գովասանվումէր սոցա բերանով թէ քաջութեամբ տանումէր ցրտի և սովի և ծարաւի և անքուն հսկողութեան, թէպէտ աշխատասիրութեան նպաստող հնարները և առաքինութեան շարժարանքը խանդարել էր անառակ և սանձակոտոր վարքով։ Եթէ սորա քամակից գնացած լինէին իւր ընկերակիցքը, եթէ քաղաքից դուրս գնային անյուսալի կորած մարդերի ամբարիշտ բաղմութիւնքը, ինչպէս բաղդաւոր կը լինէինք մեք, ինչպէս երջանիկ կը լինէր հասարակապետութիւնը, ինչ ականաւոր պարծանք հասանելու էր մեր հիւպատոսութեանը։ Արդարև, ընչին բաներ չէին այդ մարդերի ցանկութիւնքը, ոչ մարդկային և տանելի դոցա յանդգնութիւնքը. դոքա ոչինչ բանի վերայ չեն մնացում, բայց միայն սպանութեան, հրձգութեան,

---

Լինան կատարել էր Սուլլայի օրերում եղած խռովութեան միջոցին։

կողոպտութեան վերայ։ Իւրեանց հայրենական կալուածքը վատնել են, իւրեանց ստացուածքը համադամ կերակուրներով կուլ են տուել. վաղուց արդէն սկսել են դրքա զգալ պակասութիւն, նորերումն և կորուստ հաւատի. այնու ամենայնիւ, նոյն անպարկեշտութիւնը որ կար լեութեան մէջ, անփոփոխ մնացել է։ Եթէ նոքա գինարբութեան և քուէախաղութեան մէջ որոնումէին գիշերային ինջոյք և պոռնկութիւն, այն տարակուսելի էր նոցա ուղղութիւնը, սակայն դեռ ևս տանելի էին։ Բայց այս բանիս ո՞վ կարող է տանել, որ դատարկ մարդիկ որոգայթ լարէին գործունեայ աղամարդերի, ամենատխմարքը փորձառու բանագէտների, արբեցածքը զգաստների, քնածները արթունների. մարդիկ որ հացկերութեան սեղանների մօտ տարածված, անամօթ կանայք իւրեանց գոգումը, գինով ծանրացած, կերակրով խճողված, ծաղիկներով պսակված, ատուշահոտ իւղերով օծված, անառակութեամբ ջլատված դուրս են զգայռում բերաններից մահ ազնուամիտների համար և հրայրեացք այս քաղաքի համար։ Սոցա, անհերկմիտ եմ, որ մի օր պիտոյ է վերայ հասանի մի ողբալի պատահար, և մի հատուցումն որ վաղուց արդէն արժանի էր ամբարշտութեանը, վատթարութեանը, չարութեանը և զաղրագործութեանը, կամ արդէն բոլորովին վերայ էր հասել, կամ թէ անտարակոյս մօտեցել էր։ Որանց եթէ իմ հիւպատոսութիւնս վերացնէ մէջ տեղից, որովհետև առողջացնել կարող չէ, ոչ թէ մի կարճ ժամանակով, այլ շատ դարերով պահպանելու է հասարակապետութիւնը։ Պատճառ, ոչ մի ազգ չկայ, որից երկիւղ կրէինք մեք, ո՞չինչ թագաւոր որ կարողանար պատերազմով գալ Հռոմէական ժողովրդի վերայ. բոլոր օտարերկրեայքը նորա միայնակ քաջութեամբ ծովի ու ցամաքի վերայ խաղաղեցուցած են. մնումէ տնային պատերազմը. մեր տան մէջ է թշնամին. մեզ պիտոյ է պատերազմել զեղխութեան, խելագարութեան և չարութեան հետ։ Ես հրատարակումեմ իմ անձը այս պատերազմի առաջնորդ, ով Կիկերիտացիք. ես բարձումեմ իմ ուսերի վերայ այդ վատթար մարդերի թշնամութիւնը. ինչ որ կարելի է առողջացնել, որ և իցէ կերպով կ՚առողջացնեմ. ինչ որ պիտոյ էր բաց կտրել, դորան չկամիմ թոյլ տալ, որ մնալով ապականէ և կործանէ քաղաքական հասարակութիւնը։ Ուրեմն,

թող կամ դուրս գնան կամ հանդարտեն, կամ, եթէ կամին մնալ քաղաքի մէջ և կամակորվել իւրեանց դիտաւորութեան վերայ, ապա թող սպասեն այն բանին որին արժանի են:

ԳԼՈՒԽ Զ. Բայց կան մարդիկ, ով Կվերիտացիք, որ ասումէին, թէ Պատիլինան իմ ձեռքովս դուրս է հանվել դէպ ի աքսոր: Եթէ մի հրամայողական խօսքով կարողանայի յառաջ տանել այդ բանը, ապա դուրս կը վարէի դորանց ևս, որ այդպէս խօսումեն: Արդարև այն վախկոտ և շատ համեստ մարդը չկարողացաւ տանել հիւպատոսի խօսքին. երբ որ լսեց նա իմ հրամանը գնալ դէպ ի աքսոր, իսկոյն հնազանդեցաւ նա և գնաց: Երեկեան օրին, Կվերիտացիք, երբ որ փոքր էր մնացել, որ իմ տան մէջ սպանվէի, ժողովեցի ես ծերակոյտը Լուպիտեր Ստատորի տաճարի մէջ. բոլոր անցքը իմաց տուեցի արժանընտիր հարցը: Երբ որ Պատիլինան նեռս մտաւ ծերակուտի մէջ, որ խորհրդական ծերը անունը տալով ողջունեց նորան, ով նայեց նորա վերայ այնպէս, որ համարէր նորան մի վատթար քաղաքացի և ոչ թէ մանաւանդ մի անտանելի թշնամի: Այն ծերակուտի նախապատիւ մարդիկը թողեցին ու հեռացան այն նստարանները, որանց մօտեցաւ Պատիլինան: Դս, այս բարկացող հիւպատոսս, ինչպէս ասումեն նոքա, որ մի խօսքով միայն դուրս եմ ձգում քաղաքացիքը դէպ ի աքսոր, հարցրեցի Պատիլինայից, արդեօք գիշերային հաղորդակցութեամբ եղա՞ծ էր Մ. Լեկայի մօտ, թէ ոչ: Երբ որ նա, այն ամենայանդուգն մարդը, յաղթահարվելով իւր խղճմտանքից, նախ և յառաջ լուռ կացաւ, յայտնեցի ես միւս բաները. այսինքն թէ ինչ էր արել նա այն գիշերին, ինչ որոշել էր մոքումը առնելու գալոց գիշերին և թէ ինչ կերպով կարգադրել էր իւր մէջ բոլոր պատերազմի եղանակը. այդ բոլորը հասկացուցի նորան: Երբ որ սկսաւ կակազել և շուարվել, հարցրեցի, ինչու յապաղումը ճանապարհ ընկնել դէպ ի այն կողմ, ուր վաղուց արդէն պատրաստվումէր գնալ, որովհետև գիտէի ես թէ յառաջուց ուղարկված էին զէնք, կացիններ, հիւպատոսական դաւազանք, փողեր, պատերազմական դրօշներ, այն արծաթեայ արծիւը, որի համար իւր տան մէջ շինել էր ևս մի չարապաշտութեան սեղան: Դս նորան աքսորը ուղարկեցի, երբ որ տեսանումէի թէ ահա յանձն է առել պատերազմ ընդ-

դէմ հայրենիքին. անալի զրոյց։ Այո՛, այո՛ կարծումեմ որ այդ Մալլիոս հարիւրապետը, որ Ֆեզուլեան դաշտումը բանակ է հաստատել, իւր անունով է պատերազմ հրատարակել հռոմէական ժողովրդին, և այդ բանակը չէ սպասում այժմ Կատիլինիային որպէս իւր առաջնորդին, և նա դուրս հանված դէպ ի աքսոր, դիմումէր դէպ ի Մասիլիա (1), ինչպէս ասումեն, և ոչ թէ դէպ ի այդ բանակը։

ԳԼՈՒԽ Է. Այս ինչ թշուառ կերպ է ոչ թէ միայն կառավարելու, այլև պահպանելու հասարակապետութիւնը։ Այս բոպէիս, երբ որ Կատիլինան իմ խոհականութեամբ, իմ վաստակներով և վտանգաւոր հոգաբարձութեամբ պաշարված և դըղրդված, ահի մէջ է ընկել յանկարծ, փոխել է իւր դիտաւորութիւնը, հրաժարվել է իւրայիններից, յետ է դրել իւր խորհուրդը յարուցանելու պատերազմ, և այս ամբարշտութեան ու պատերազմի ընթացքից շեղել է իւր ճանապարհը դէպ ի փախստականութիւն և աքսոր. այժմ, մի՞ թէ նա պիտոյ է ասվի ոչ թէ իմ ձեռքով իւր յանդգնութեան զէնքից մերկացուցած, ոչ թէ շուարած ու ահաբեկված իմ հոգողութեամբս, ոչ թէ իւր յոյսերից և ձեռնարկութենից հալածական եղած, այլ առանց հարցափորձի դատապարտված, անպարտութեամբ, հիւպատոսի ձեռքով, բռնութեամբ և սպառնալիքով դուրս հանած դէպ ի աքսոր. և կը լինին մարդիկ, որ կամէին նորան, եթէ դիմէր դէպ ի աքսոր, համարել ոչ թէ ամբարիշտ, այլ վատաբաղդ, բայց ինձ ոչ թէ մի արթուն և զգաստ հիւպատոս, այլ մի շատ բռնակալ հրամայող։ Արժէ իմ պարծանքիս, Կվիրիտացիք, այս անհիմն և անիրաւ ատելութեան փոթորկի տակ դնել իմ թիկունքը, միայն թէ ձեզանից հալածական լինէր այս սոսկալի և անաստուած պատերազմի վտանգը։ Թող ասվի նա դուրս ձգած ինձանից, միայն թէ հեռանար դէպ ի աքսոր, բայց հաւատացէք ինձ, որ նա հեռանալու չէ։ Երբէք չկամիմ ես, իմ վերայ բարձած ատելութիւնը թեթևացնելու համար, մշանջենաւոր ասուածներից խնդրել, ով Կվիրիտացիք, որ դուք լսէք թէ Լ. Կատիլինան թշնամիների զօրքին

(1) Մի հին հռչակաւոր քաղաք Նարբոնեան Գալլիայի մէջ, այժմ Մարսէյլ, մի գաղթաշէնք որ պատկանումէր յիոնական Ծովաքաղաք Փոկէային փոքր Ասիայի մէջ, և առաջին պատնիկեան պատերազմից յետոյ հաւատարիմ դաշնաւոր Հռոմի։

առաջնորդումն և ղէնքը ձեռքին վաղումն այս կողմ ու այն կողմ. այնու ամենայնիւ երեք օրի մէջ կը լսէք այդ բանը. և շատ առաւել երկիւղ ունիմ այն բանից, որ մի գուցէ ժամանակով բամբասանքի պատճառ լինէր ինձ այն բանը, որ ես նորան դուրս էի ուղարկել մանաւանդ, քան թէ դուրս էի վարել: Բայց որովհետև կան մարդիկ որ ասումեն թէ նա, ըստ որում հեռացել էր մեզանից, դուրս է վարած, ապա ինչ պիտի ասէին նոյն մարդիկը, եթէ մահով մեռուցած լինէր Կատիլինան: Թէպէտ դոքա, որ շատախօսումեն, թէ Կատիլինան դիմումն դէպ ի Մասիլիա, ոչ այնքան դորա վերայ գանգատաւոր են, որքան թէ երկիւղի մէջ: Ոչ ոք դոցանից այնքան ողորմասիրտ է, որ աւելի բարւոք չհամարէր Կատիլինայի երթը դէպ ի Մալլիոս, քան թէ դէպ ի Մասիլիացիքը: Բայց եթէ նա, վկայ է Հերքուլէս աստուածը, այս գործը, որի վերայ է այժմուս, յառաջուց երբէք անցուցած չլինէր իւր մտքից, այնու ամենայնիւ աւելի նախապատիւ էր համարելու մեռանել աւաղակութեամբ քան թէ ապրել որպէս աքսորական: Բայց այժմ, որովհետև մինչև այժմ ոչինչ պատահել չէ նորան ընդդէմ իւր կամքին ու դիտաւորութեանը, բաց ի այն բանից, որ նա հեռացել է Հռոմից, կենդանի թողնելով ինձ, ապա թող ցանկացող լինինք մանաւանդ որ նա գնար դէպ ի աքսոր, քան թէ դանդատաւոր:

ԳԼՈՒԽ Ը. Բայց ինչու համար այդքան երկար խօսումենք մի լոկ թշնամու վերայ և մի այնպիսի թշնամու վերայ, որ արդէն խոստովանումէ իւր անձը թշնամի, որից ես երկիւղ չունիմ ես, որովհետև իմ ու նորա մէջ մի պատ կայ, ինչպէս միշտ կամեցած եմ ես. սոցա վերայ, որ թաղուցանումեն իւրեանց խորհուրդը, որ յետ են մնացել Հռոմի մէջ, որ մեր հետ են, ոչինչ խօսում չենք. սոցա թէպէտ և աշխատումեմ ես ոչ այնքան վրէժխնդիր լինել, որքան ուղղել նոցա վարքը և հաշտեցնել նորանց հասարակութեան օգտի հետ, եթէ որպէս և իցէ կարելի էր այդ բանը: Բայց թէ ինչու համար անկարելի էր դա, չեմ հասկանում ես, միայն թէ կամենային ականջ դնել ինձ: Այսու և յառաջ կամիմ բացայայտել ձեզ, Կվիրիտացիք, թէ ինչ տեսակ մարդերից բաղկանումէին այդ բազմութիւնքը, ապա մէջ բերել ամեն մինի համար իմ խորհրդակցութեան և

խօսքի բժշկական դեղը, եթէ կարող էի։ Այդ մարդերի մի տեսակը ցուցանուէմ այնպիսիք որ մեծ պարտքի մէջ լինելով, ունէին ևս մեծ կալուածք, որոնց սիրով այնպէս կապուած են, որ ոչինչ կերպով կարող չեն բաժանվել նոցանից։ Այս մարդերի արտաքին ցոյցը շատ պատուաւոր է. պատճառ, հարուստ են. բայց դոցա կամքը և ձգտողութիւնը շատ անամօթ է։ Դու ճոխացած ու փարթամացած ես անդերով, շինուածքով, արծաթով, ծառաներով, ամենայն բանով, բայց դժուարանուէս քո կալուածից մի բան դուրս հանել և դնել քո հաւատարժանութեան վերայ։ Ինչ ակնկալութիւն ունիս. պատերազմի՞. ինչ ես մտածում. ուրեմն կարծուէս դու, թէ մի ընդհանուր աւերածքի մէջ քո սեփական կալուածները մնալու էին սուրբ և անաղարտելի. կամ թէ ապաստանէս մի նոր օրինադրութեան, տուած ու սահմանի պարտքերի մասին։ Սխալվումեն նոքա, որ այսպիսի ակնկալութիւն ունին Պատիլենայից։ Իմ հոգաբարձութեամբ կը լինի մի նոր օրինադրութիւն, բայց հրապարակական վաճառարկութեան, որովհետև դոքա, որ կալուածներ ունին, այլ կերպով կարող չեն պարտավճար լինել։ Բայց եթէ դոքա կամեցած լինէին կանուխ առնել այդ բանը, փոխանակ իւրեանց ապարանքների եկամուտքով աշխատելու յաղթել տոկոսիքի ծանրութեանը, որ մի շատ անմիտ գործ է, ապա կ'ունենայինք մեք թէ աւելի հարուստ և թէ աւելի պատուաւոր քաղաքացիք։ Բայց այս տեսակի մարդիկը ամենևին անվնաս եմ համարում ես, որովհետև կամ կարող էին իւրեանց կարծիքից հրաժարվել, կամ, եթէ կը կամակորվին նորա վերայ, երևումէ ինձ թէ իւրեանց սրտերի մէջ յղանալու էին մանաւանդ չար ցանկութիւններ ընդդէմ հասարակութեանը, քան թէ կը կամենային զէնք բարձրացուցանել։

ԳԼՈՒԽ Թ. Կան մի այլ տեսակ մարդիկ, որ թէպէտ ճշնշվումեն պարտքի ծանրութեան տակ, սակայն բացարձակ իշխանութեան ակնկալութիւն ունին, կամենումեն սիրապետել հասարակութեանը, մտածումեն թէ ինչ քաղաքական արժանաւորութիւնք անցյալ էին ձեռք բերելու հասարակապետութեան խաղաղ միջոցին, նոյն բաները կարող էին ձեռք բերել նորա խառնակութեան ժամանակ։ Հարկաւոր է երևում պատուիրել դոցա այս բանս. այսինքն մի և նոյն բանը որ պիտոյ է

պատուիրել բոլոր միւսերին, որ նոքա կարեն իւրեանց յոյսը թէ կարող էին հասանել իւրեանց ցանկութեանը (որ էր հասարակապետութեան յեղափոխութիւնը)։ Թող լաւ իմանան դոքա, նախ և յառաջ, որ ես ինքս հսկումեմ, ներկայ եմ և հոգատար եմ հասարակաց օգտին. երկրորդ, որ մեծ հոգիք բնակումեն տաքինի տղամարդերի մէջ, մեծ միաբանութիւն, ահագին ժողովուրդ, այլև մեծ բազմութիւնք պատերազմողների կան մեր կողմումը. վերջապէս, նոյն իսկ մշանջենաւոր աստուածքը, այս անյաղթելի ազգին, այս սիրելի հրաչակ տէրութեանը, այս ամենագեղեցիկ քաղաքիս օգնութիւն հասուցանելով, կը պաշտպանեն այդքան մեծ ամբարշտութեան երեսից։ Բայց եթէ դոքա արդէն ձեռք էին բերել այն բանը, որին ցանկանումեն սանձակոտոր կատաղութեամբ, մի թէ քաղաքի փլատակների և քաղաքացիների արիւնի մէջ՝ որ խնդրումէին իւրեանց ամբարիշտ և անաստուած մտքով, յոյս ունին հիւպատոսք ու ծայրագոյն հրամանակալք դառնալ, կամ թէ թագաւորք ևս։ Մի թէ չեն տեսանում որ դոքա ցանկանումեն այն բանին, որ եթէ ձեռք բերած լինէին, պիտոյ է թող տան մի փախստականի կամ աւազակի (որ դատնվումէր Պատիլենայի զօրքի մէջ)։ Երրորդ տեսակի մարդիկը հասակով ծանրացած են, այնու ամենայնիւ վարժութեամբ պինդ և ամուր են. սոցանից է Մալլեոսը որին այժմ յաջորդել է Պատիլենան։ Սոքա այն դաղթականներից են, որ Սուլլան հաստատեց, որ և ես համարումեմ ընդհանրապէս պատուական քաղաքացիների և քաջ տղամարդերի կարգից. բայց սոքա շինականք են, որ հասանելով անակնկալ և անկարծելի հարստութեան, զեղչացան և ամբարտաւանացան։ Սոքա շինութիւններ առնելով որպէս ունևոր մարդիկ, ադարակներով, պատդարակներով, բազմաթիւ ծառաներով, մեծաձախ հացկերութեամբք վայելչանալով, այնպիսի ծանր պարոքների տակ ընկան, որ եթէ կամէին աղատվել, պիտոյ էր (իւրեանց պաշտպան) Սուլլային դերեզմանից յարութիւն առնուլ։ Այլև սոքա մի քանի դիւզացիք, աղքատ և կարօտ մարդիկ, մոլորեցուցել են այն հին յափշտակութիւնների մի և նոյն յուսովը. այս երկուսը, Ավիրիատցիք, ես դասակից եմ համարում յափշտակողների և կողոպտողների մի և նոյն կարգին։ Բայց դոցա խորհուրդ եմ տալիս, որ դադա-

րեն իւրեանց կատաղութենից և չմոռանեն մնտենալ օտարի սեփականութեանը, կամ թէ ծայրագոյն հրամանակալութիւնք ձեռք բերել։ Պատճառ, անցած ժամանակների ցաւը այնքան ծանր ծանրացել է քաղաքական հատարակութեան սրտի վերայ, որ այս ներկայ թշուառութիւններիս ոչ թէ միայն մարդիկ, այլև անասունք անգամ կարող չէին տանել։

ԳԼՈՒԽ Ժ. Ազորդ տեսակի մարդիկը շատ զանազան բնաւորութեամբ, խստանաշփոթ և խառվարար մարդիկ են, որ վաղուց ահա ճնշվումեն պարքի տակ, որ երբէք կարող չեն նոցա տակից դուրս գալ, որ կէս մի անդորձութեամբ, կէս մի վատ անտեսութեամբ և կէս մի շռայլ ծախքերով կորուսել են ամենայն ոանկառոյց, որ ձանձրացած լինելով դատաստանի հրաւիրանքից, պատապարտութենից և իւրեանց դոյքերի հրապարակական վաճառարկութենից, բազմութեամբ, ինչպէս պատմումեն, փախել էին թէ քաղաքից և թէ գաշտերից դէպ ի թշնամու բանակը։ Դորանց համարումեմ ես ոչ այնքան քաջ պատերազմողք, որքան ծոյլ և վատթար ուրացող պարտապանք. այդ մարդիկը եթէ նախ կարող չեն ոտքի վերայ կանգնել, պիտոյ է կործանվին և այնպէս, որ ոչ հատարակութիւնը և ոչ իւրեանց մերձաւոր դրացիքը կարող էին խմանալ։ Բայց անհասկանալի է ինձ այն, թէ ինչու համար դոքա, եթէ կարող չեն պատուաւոր կերպով ապրել, կամենումեն խայտառակութեամբ կորչել, կամ թէ ինչու համար մոռանումեն թէ այնքան ցաւելի լինելու չէր նոցա շատերի հետ միասին կորչելը, քան թէ միայնակ։ Ընդհանրապէս տեսակի մարդիկը ցուցանումեն ծնողասպանք, գող աւազակներ և ամենայն կերպ չարագործներ։ Դորանց չկամիմ ես յետ դանչել Պասիլենայի մօտից. պատճառ, դոքա կարող ևս չեն պատռվել նորանից, այլև թող կորչին իւրեանց աւազակութեան մէջ, որովհետև այնքան բազմաթիւ են, որ բանտի մէջ ևս կարող չէին տեղաւորվել։ Վերջին տեսակի մարդիկը են և յետինքը ոչ թէ միայն կարողով այլև նոյն իսկ տեսակով ու վարքով, որ յատկապէս պատկանումեն Պասիլենային, նորա ընտրածքն են, նորա գողի ու ծոյի մէջ եղածքը, որ դուք շողշողուն, սանրած ու իւղած մազերով, կամ մօրուքաւոր կամ թէ անմօրուք և կամ թէ վայելչամօրուք, թեւաւոր և երկար կանացի պատմուճաններով, ու-

ուղղաւոր վերաբերմունքով և ոչ տոգաներով զգեստաւորված, տեսանումք. որոնց կեանքի բոլոր աշխատութիւնը և անքուն հոգոյութիւնը երևումէ ուտելու և խմելու մէջ մինչև արևածագը։ Այս ամբոխների մէջ գտանվումեն բոլոր նարդի խաղացողքը, բոլոր պոռնիկները, բոլոր զաղջադարձ և անամոթ մարդիկը։ Այս մանուկները, այնքան զմայլեցուցիչ և փափկասէր, ուսած են ոչ թէ միայն սիրել և սիրվիլ, ոչ թէ միայն նուագարան ածել և պար դալ, այլև սուրբը խաղացնել և թոյն խառնել. եթէ այսպիսիքը դուրս չդնան և չկորչին, թէև կործանվէր Պատիլենան, այնպէս իմացէք, որ մնալու է հասարակապետութեան մէջ Պատիլենայի սերմնարանը։ Բայց սակայն ինչ խորհուրդ ունին դոքա իւրեանց մէջ. մի՞ թէ չկամին դոքա իւրեանց կանայքը տանել իւրեանց հետ դէպ ի պատերազմի բանակը. ինչպէս կարող էին դիմանալ նոցա կարօտութեանը, մանաւանդ թէ այս ձմեռնային երկար գիշերներում. բայց նրպէս պիտի դիմանային նոքա Պղնձենեան սարերի խոշորութեանը և այն ցրտին ու ձիւնին. բայց դուցէ մտածումեն, թէ դժուար լինելու չէր նոցա համբերել ձմերանը, ըստ որում ուսած էին մերկ պար դալ հացկերութիւնների մէջ։

ԳԼՈՒԽ ԺԱ. Ով պատերազմիս, շատ ու շատ երկիւղալի պատերազմիս, ըստ որում Պատիլենայի պաշտպանը լինելու էր մի այդպիսի թիկնապահ դունդ, պոռնիկներից բաղկացած։ Հապա Պվեկիատցիք, պատրաստեցէք ընդդէմ Պատիլենայի այդքան փառաւոր զօրքերին ձեր պահպանքը և ձեր զօրախումբերը, և յաւաջ, այն հալումաշ եղած և վիրաւոր աւազակին դէմ դրեցէք ձեր հիւպատոսքը և զօրավարները. ապա, ընդդէմ այն նաւաբեկվածների դուրս ձգած և ջաղջախված բազմութեանը հանդէս բերեցէք բոլոր Իտալիայի ընտիր և քաջ զորամարդերը. բայց հռոմէական դաղթականների և ազատ քաղաքների շէնքերը պատասխան կը տան Պատիլենայի փայտաշէն բլբիկներին։ Դու ինչ պիտոյ էր ինձ, ձեր միւս զօրութիւնը, պատերազմական հանդերձանքը, ձեր պաշտպանական զէնքը համեմատել այն աւազակապետի չքաւորութեան և կարօտութեան հետ։ Բայց թողունք այս բոլորը, որ ձեռնտու և օգնական է մեզ, որից զուրկ է նա, այսինքն ծերակոյտը, հռոմէական ասպետները, ժողովուրդը, զանձարանը, թագաւորութեան հա-

սոյթքը, բոլոր Իտալիան, բոլոր գաւառները, գուրսի աղգերը. թողունք այս բոլոր իրողութիւնքը և դանք համեմատել միմեանց հետ նոյն իսկ պատճառքը որ հակառակումն միմեանց. դորանից յատկապէս կարող ենք իմաստասիրել թէ մինչև որ աստիճան թոյլ և անզօր են նոքա: Պատճառ, այս կողմից պատերազմումէ ամենքը, այն կողմից լրբութիւնը, այս կողմից պարկեշտութիւնը, այն կողմից անառակութիւնը, այս կողմից հայրենասիրութիւնը, այն կողմից ամբարշտութիւնը, այս կողմից զգաստութիւնը, այն կողմից կատաղութիւնը, այս կողմից վայելչականութիւնը, այն կողմից խայտառակութիւնը, այս կողմից չափաւորութիւնը, այն կողմից մարմնապաշտութիւնը. վերջապէս արդարութիւնը, բարեխառնութիւնը, քաջութիւնը, խոհականութիւնը, բոլոր առաքինութիւնքը պատերազմումեն անիրաւութեան, զեղխութեան, դատարկութեան և անզգաստութեան, բոլոր արատների հետ. վերջապէս լեութիւնը կարօտութեան հետ, բանական դատողութիւնը խելագարութեան հետ, առողջ միտքը անմտութեան հետ, հուսկ յետոյ բարի յոյսը ամենևին յուսահատութեան հետ կռիւ ունի: Այսպիսի կռուի ու հակառակութեան մէջ եթէ պակասաւոր գտանվէին մարդկային ջանադրութիւնքը, մի՞ թէ նոյն իսկ մշանջենաւոր ատուածքը չէին նախանձելու, որ այս ականաւոր առաքինութիւնքը յաղթող հանդիսանային այդքան մեծամեծ արատների վերայ:

ԳԼՈՒԽ ԺԹ. Որովհետև սոքա այսպէս են, Կվերիտայիք, ապա դուք, ինչպէս յառաջուց արդէն ասած էք, պահպանութեամբ և հկողութեամբ պաշտպանեցէք ձեր տունքը և օթեւանքը. իմ կողմից, ես հոգաբարձութիւն իմ արել, որ քաղաքը առանց վրդովելու ձեր հանգստութիւնը, և առանց որ և իցէ խռովութեան գտանէ տպահովութիւն: Ձեր բոլոր շինականքը և ազատ քաղաքացիքը ինձանից տեղեկութիւն են ստացել Կատիլինայի յիշեալ գիշերային արշաւանքի մասին, և հեշտութեամբ կը պաշտպանեն իւրեանց քնքաքները և տահմանքը: Այն աւազակները որ նա համարումէ մեծ զօրք և հաւատարիմ իւրեան, թէպէտ աւելի ազնիւ մարդիկ են քան թէ Պատրիկեանց մի մասը, այնու ամենայնիւ կը սանձահարվին մեր կարողութեամբ: Ա. Սեռելլոսը, որին ես հոգաբարձութիւն

գործելով, յառաջագոյն ուղարկել եմ դէպ ի Գալլիկեան և Պիկենեան սահմանքը, կամ անգործ կը կացուցանէ այդ մարդը, կամ թէ խափան կը լինի նորա բոլոր շարժողութիւններին և ձեռնարկութիւններին: Մնացած բաներին մասին, թէ ինչպէս պիտոյ էր կարգադրել, կնքել ու հաստատել և գործով յառաջ տանել դորանց, կը ծանուցանենք ծերակուտին, որ ահա, ինչպէս տեսանուիմք, գումարվուիմ:

Այժմ նոցա, որ քաղաքի մէջ յետ են մնացել, այո նոցա, որ Կասիլինայից թողած են քաղաքումը, քաղաքի և ձեր բոլորեցուն ապահովութեան ընդդէմ, որ թէպէտ և թշնամիք էին, բայց ծնած են քաղաքացիք, նոցա կամէի կրկին և դարձեալ յիշեցնել այս բանս: Իմ ներողամտութիւնը եթէ մինչև այժմ երևել է մի մարդու չափազանց, դորա խորհուրդը այն է եղած, որ սպասուիմի ես, մինչև բացափայլի այն բանը որ ծածկած էր: Ինչ որ դեռ ևս մնուիմը ասելու, կարող չեմ մոռանալ, այսինքն թէ իմն է այս հայրենիքը և ես սորա հիւպատոսն եմ. կամ սորա հետ միասին պիտոյ էր ինձ ապրել կամ թէ սորա համար մեռանել: Եվ ու մուտքը բաց են, ճանապարհը ապահով. ով որ կամենուիմ դուրս դնալ, կարող է իւր գլխի ճարը տեսանել. բայց նա որ կը շարժվէր քաղաքի մէջ, որի ոչ թէ միայն գործը, այլև որ և իցէ սկսուածը և դիտաւորութիւնը ընդդէմ հայրենիքի կ'իմանայի ես, այնուհետև հասկանալու էր, թէ այս քաղաքումը կան հսկող հիւպատոսք, ընտիր պաշտօնակալք, մի ղօրաւոր ծերակոյտ, զէնք և բանտ, որ մեր նախահարքը կարգել են որպէս վրէժխնդիր անասնատուած և մերկապարանոց յանցաւորութիւնների:

ԳԼՈՒԽ ԺԳ. Եւ այս բոլոր բաները այնպէս յառաջ կը տարվին, Ավերիատցիք, որ մեծամեծ գործեր կատարվին ամենավոքր դղրդմամբ, որ ամենամեծ վտանգներ հալածվին առանց խռովութեան, որ մի ներքին և ընտանի պատերազմ, առաւել անդութը և սոսկալին քան թէ երբ և իցէ յիշելի էր մարդերին, վերջացվի իմ միայնակ խաղաղագոյն հիւպատոսութեան և հրամանակալութեան տակ: Այդ պատերազմը, ով Ավերիատցիք, այնպէս կը կատարվեմ ես, որ, եթէ որպէս և իցէ կարելի էր, ոչ մի ամբարիշտ մարդ այս քաղաքիս մէջ չկրէր իւր չարութեան պատիժը: Բայց եթէ մի ահեղայանի յան-

դդնութիւն, մի մծատհաս վասնդ հայրենիքի, ստիպելով հրաժարեցնել ինձ այս իմ ներողամտութենից, ապա այն տեղ կը հասուցանեմ դործը, որպէս զի, եթէ հաղիւ կարելի էր մի այդպիսի մեծ և բազմավտանդ պատերազմի մէջ յուսալ, ոչ մի առաքինի մարդ չկորչէր և դուք ամենեքեանդ կարողանայիք ողջ և առողջ մնալ, սակաւ մարդիկ միայն պատուհասվելով։ Այս բանը խոստանումեմ ձեզ, ով Ավերիտացիք, ոչ թէ յուսալով իմ բանադիտութեան վերայ, և ոչ թէ մարդկեղէն իմաստութեան վերայ ոաք ամրացնելով, այլ մշանջենաւոր աստուածների շատ և անտարակոյս ակնարկութիւնների վերայ, որ առաջնորդելով ազդել են իմ մէջ այդ յոյսը և կարծիքը։ Այդ մշանջենաւոր աստուածքը, այսօր և միշտ, ոչ թէ հեռուից, ինչպէս սովոր էին, մի օտարերկրեայ և հեռաւոր թշնամու երեսից, այլ այս տեղ, ներկայ լինելով իւրեանց կարողութեամբ ու հովանաւորութեամբ, պաշտպանումեն իւրեանց տաճարքը և քաղաքի բնակութիւնքը. ապա ուրեմն պարտ է ձեզ, Ավերիտացիք, ազօթելով և պաշտօն ու երկրպագութիւն մատուցանելով մաղթել նոցանից, որ նոքա, ինչ քաղաք նոցա կամքով եղած է ամենաղեղեցիկը, ամենաճաղկեալը և ամենակարողը, նոյն քաղաքը, երբ որ ահա բոլոր թշնամիքը թէ ծովի և թէ ցամաքի վերայ յաղթված են, պատսպարելով պահպանէին ամենավատթար քաղաքացիների ամբարշտութեան երեսից։

Ս. Նաղարեանց։

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՄՏԱԾՈՒԹԻՒՆԵՐ·

ԹԻ ԻՆՉ ԲԱՆ ԸՆԴԴԵՄ Է ՄԱՐԴՈՒՍ ԱՐԺԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՆԸ·

Աստուած, մեծ և անչափելի մեծ են քո երախտիքը մեր վերայ, քո սարսաւածների և զաւակների վերայ։ Դու փառքով ու պատուով, և մեծաշուք առաւելութեամբը պսակել ես մեզ, և փոքր ինչ ստոր ես արել մեզ հրեշտակներից։ Ո՛րպիսի մեծ յաջողակութիւնք, որպիսի մեծակարող ընդունակութիւնք և զօրութիւնք տնկել ես դու մեր ընութեան մէջ։ Եւ քանի՜ հնարներ ու շարժառիթներ յառաջադէմ կացուցանելու և պէտք ածելու նորանց պարգևումէ մեզ օր ըստ օրէ քո մարդասէր նախախնամութիւնը։ Ի՜նչքան բարի բաներ կարող էինք առնել և վայելել, ինչքան իմաստուն, ինչքան առաքինի, ինչքան երանելի կարող էինք այժմ ահա լինել և դառնալ, եթէ միշտ այնպէս մտածէինք և և գործէինք, ինչպէս վայել է այն արժանաւորութեանը և առաւելութիւններին, որով զարդարել ես դու մեզ։ Աստուած, ինչպէս ամենապարտ է մարդս քո առաջև, այո՛ և իւր առաջև, որ չէ նա աւելի իմաստուն, աւելի բարի, աւելի երանելի. որ նա այնքան ծանրաքայլ մտենումէ այն կատարելութեանը որին ընդունակ է շինել նորան Աստուած։ Ո՜հ, ոմանք մեզանից օր ըստ օրէ աւելի հեռանումեն քեզանից և իւրեանց կոչմանից, օր ըստ օրէ աւելի խոր ցածացնումեն իւրեանց անձը յիմարութեամբ և մեղքով, և այն աստիճանին ու պատուին, որ դու սահմանել ես նոցա, օր ըստ օրէ աւելի անարժան են կացուցանում իւրեանց անձը։ Ո՜հ, դեռ ևս շատ խաւար, շատ ստրկութիւն, շատ ծուլութիւն և ձանձրութիւն դէպ ի բարին, շատ անգործութիւն և չարաչար դործադրութիւն իւր զօրութիւնների, դեռ ևս անարգ խորհուրդներ և գործեր շատ, տգեղացնումեն մարդս, այս քո հրաշալի ձեռակերտը։ Վայ մեզ, որ այդքան խոր ցած ենք կործանվել մեր արժանաւորութենից և քո պատկերի պայծառափայլութիւնը այդքան նսեմացուցել ենք մեր մէջ։ Թո՛ղ ապա մեք ամենեքեան վերստին բարձրացնենք մեր անձը այս պարտաւորութեան և թշուառութեան խորքից և նորոգենք մեր անձը ըստ քո պատկերի նմանութեան։ Դեռ ևս ոչ ամենևին շինել է մեր մէջ այն իմացութիւնը թէ նուազեցուցել էինք մեր արժանաւորութիւնը։ Դեռ ևս շատ անգամ ցանկութիւններ և ձգտողութիւններ դէպ ի աւելի վերին կատարելութիւնք յիշեցնումեն մեզ մեր ծագումը քեզանից, մեր աղգակցութիւնը քո հետ, և այն ամենայն բարիքը, որ կարող էինք ստանալ և վայելել։ Ո՜վ դու, զօրացրո՛ւ, կենդանագործի՛ր քո հոգով այս աղնիւ իմացութիւնը մեր մէջ. թո՛ղ այս ցանկութիւնքը դէպ ի ա-

ուելի վերին բաներ օր ըստ օրէ աւելի բորբոքվին, այս ձգտողութիւնքը աւելի տեղական և աւելի ընդարձակ գառնան։ Դուրս խլեր մեր հոգին զգայականութեան հրամանի տակից, բարձրացրու նորան ամենայն բանի վերայ որ երկրաւոր ու տեսանելի էր, օր ըստ օրէ աւելի մտնեցրու նորան իւր արարչին և հօրը, թող նորան քո մէջ որոնել և գտանել իւր ամենավերին կատարելութիւնը և երանութիւնը։ Օրհներ դու այժմ մեր ձեռնարկութիւնը քննելու ճշմարտութիւնը, որ պիտոյ է քաջալերէր և զօրացուցանէր մեզ դէպ ի այդ բանը։ Թող մեզ այդ ճշմարտութիւնը կամաւորապէս ընդունել և պահպանել մի բարի սրտի մէջ։

Մի փոքր ստոր ես արել նորան քան թէ հրեշտակները, փառքով ու պատուով պսակել ես նորան։ Սաղմոս Դաւթի. գլուխ 8. տող 6։

Ինչքան աւելի մեծ է մարդուս արժանաւորութիւնը, այնքան առաւել պարտականութիւն կայ նորա վերայ պահպանելու դորան և դորա համեմատ մտածելու և գործելու։ Ինչքան մեծ է մարդու արժանաւորութիւնը, այնքան ևս ցածացնում և խայտառակում նորան ամենայն բան, որ ընդդէմ է այդ արժանաւորութեանը, նորանից խլում դորան, կամ թէ նսեմացնում դորա պայծառափայլութիւնը։ Աւելի լաւ, շատ աւելի լաւ էր, ամենացած կարգի մէջ գտանվիլ, քան թէ միւսերից բարձր լինել, բայց իւր անձը նախատելի կացուցանել անարգ խորհուրդներով և գործերով. աւելի լաւ, շատ աւելի լաւ էր ապրել անյայտութեան մէջ, աննկատելի կացուցանել իւր անձը բազմութեան մէջ, քան թէ միւսերից գերազանց լինել, լուսի մէջ շրջել, բայց իւր սխալանքներով, յիմարութիւններով և արատներով աւելի սէր ցոյց տալ դէպ ի խաւարը քան թէ դէպ ի լոյսը. աւելի լաւ, շատ աւելի լաւ էր նուազ ընդունակութիւնք և զօրութիւնք ունենալ, քան թէ գործ չդնել, կամ թէ այն չարաչար գործ դնել մեծ ընդունակութիւններ և զօրութիւններ. աւելի լաւ, շատ աւելի լաւ էր չունենալ ոչինչ առաւելութիւնք, քան թէ մի հակառակ ընթացքով իւր անձը անարժան ու զուրկ կացուցանել դոցանից։ Հարցանումենք, այսպէս չէ՞ր շատ և շատ մարդերի մէջ ընդհանրապէս և մեր ընկերների մէջ մասնաւորապէս։ Պեղ ամենեցունցը, որպէս մարդերի պարգևած են մեծ առաւելութիւնք, մեծ ընդունակութիւններ. մեք ամենքեանքս ղանազան կերպով գերազանց ենք երկրի միւս արարածներից. մեք աւելի բարձրաստիճան ենք ստեղծուածների դասակարգութեան մէջ. ապրումենք և ներգործումենք մի աւելի վերին և ընդարձակ ասպարէզի մէջ, քան թէ նոքա. մեզ ամենեցունցս

սեփական է մի տեսակ ազնուութիւն, մի տեսակ արժանաւորութիւն, որ շատ դերազանց է կացուցանում մեզ մեր բոլոր շրջակայքի վերայ։ Ոչ ոք, որ անկողմնասիրաբար մտածել է մարդուս բնաւորութեան և կոչման վերայ և ճանաչում ու զգում իւր անձը, կարող էր ուրանալ այս բանը։ Ո՛ր մտախոհը մեզանից չէր հասկացել մարդուս արժանաւորութիւնը, չէր հիացել, չէր ուրախացել նորա վերայ։ Բայց ինչքան սակաւ երևում դա իւր բոլոր մաքրութեամբ, իւր լիակատար փայլողութեամբ. ինչքան յաճախ նման է դա արեգակին որ պղտոր ամպերից ծածկվումէր կամ թէ խաւարվումէր անթափանցելի խաւար մարմիններից. ինչքան յաճախ մոռանում, ուրանում, խայտառակում մարդս իւր արժանաւորութիւնը. քանի՛ քանի՛ անգամ մտածում է և գործում նա այնպէս, որպէս թէ չէր նա այն խելացի, ազատ, գործական, յառաջախաղաց և միշտ դէպ ի աւելի վեր ձգտող, անմահ, աստուածանման էակը, ոչ այն երկիւղած քահանան բնութեան, այլ ամենեին հակառակը այդ բոլոր բաների։ Այս իրողութիւնը ինչքան պիտոյ է ցածացնէր նորան խելացի էակների աչքում, և նորա յատուկ աչքումը, եթէ նա համեմատէր այն, ինչ որ է և գործում է, այն բանի հետ ինչ որ նա կարող էր գործել և լինել։ Թող նա միայն այս բաղդատութիւնը յաճախ առնէր և չմոռանէր այն փրկաւէտ ամոթապարտութիւնից և խռովութիւնից, որ այդ բաղդատութիւնը պատճառում էր նորան։ Թող այս տեղ մեր գործը լինի, ձեզ ամենեքիդ, որ ձեր արժանաւորութիւնից ցած էք խոնարհած, կամ թէ նորան ձեր խորհուրդներով և ընթացքով յայտնապէս նսեմացնումէք և թուլացնումէք, թեթևացնել այդ բաղդատութեան և կշռողութեան գործը։ Եւ այս պատճառով կամենումենք ցոյց տալ այս տեղ թէ

,,Ի՞նչ բան ընդդէմ էր մարդուս արժանաւորութեանը կամ թէ հակառակումէր նորան,,.

Թող իւրաքանչիւր մարդ համեմատէ դորա հետ իւր սեփական խորհուրդքը և իւր յատուկ ընթացքը. թող նորանց և սորան ամենեին անկողմնասիրաբար դատէ. թող նա իւր աչքը շուտով յետ չդարձուցանէ այն բանից որ տգեղացնումէ և ցածացնումէ նորան, որ և արդարև պիտոյ է ամաչեցնէ և անարգէ նորան. թող նա այսպիսի անձնաքննութեամբ զարթնի և ջանահնար լինի, ինչքան կարելի է շուտով այնպէս լինել, ինչպէս դեռ ևս չէ, և անյապաղ կատարել այն, ինչ որ մինչև այժմ զանց էր արել։

Եթէ բանականութիւնը և իմացականութիւնը ազնուացնումեն մարդս, ապա սա գործումէ ընդդէմ իւր արժանաւորութեանը, ցածա-

ցնումք իւր անձը, եթէ է՞ր բանակոռ-ութիւնը և իմացողոռ-ութիւնը չէ մշակոռ-ցործոռ, եթէ նա ցործ չէ դնոռ դորանց այն խորհրդով, ինչ խորհրդով Աբրէէլ պարբեհեալ է դորանց նորան, եթէ ճշմարտութիւն և ստութիւն, առաջօքը և ստուգութիւնը անխտիր բաներ էին նորա համար, եթէ նա բաւականանումք աւելի սակաւ կամ թէ հասարակ տեղեկութիւններով, քան թէ, միտ դնելով նորա ընդունակութիւններին և նորա կոչմանը, նորա հնարներին և յաջող հանգամանքին կարող էր կամ թէ արժան էր որ ունենայ։ Ուրեմն, ո՞ւր է մնում ձեր արժանաւորութիւնը, ո՞ր բանի մէջ երևումք ձեր ազնուութիւնը, ով մարդիկ, դուք, որ փախչումք մտածութենից և դորա համար այնքան ձեռնտու, այնքան հարկաւոր խաղաղութենից և առանձնութենից. դուք որ ապրումք մի անդադար, հոգին բթացուցիչ, խռովալից ղբոսանքի մէջ, դուք որ այնքան սակաւ ստանումք մի պարզ, սրտի վկայութիւն թէ ինչ էիք դուք և ինչպէս էր ձեր դրութիւնը, դուք որ ձեր խոհականութիւնը և դատողականութիւնը այնքան փոքր գործ էիք դնում և միշտ կայիք և ապրումք շատ աւելի ձեզանից դուրս, քան թէ ձեր մէջ, միւսերի կարծիքի և դատողութեան մէջ, քան թէ ճանաչելով ձեր անձը և գործ դնելով ձեր ներքին զօրութիւնքը։ Ո՞ւր է մնում ձեր արժանաւորութիւնը, ինչով է երևում ձեր ազնուութիւնը, դուք որ մնումք կապած այն բանի վերայ, ինչ որ դուք տեսանումք, լսումք և ղգումք, առանց հարցանելու բաների պատճառքը, հիմքերը և դիտաւորութիւնքը. դուք որ դաշտի անասունների պէս, այս ներկայ կեանքիս վայելչութիւնների մէջ մոռանումք բոլոր անցեալը և աչքից թողումք ապագայն։ Ո՞ւր է մնում ձեր արժանաւորութիւնը, ինչով է երևում ձեր ազնուութիւնը, դուք, որոնց այնքան դժուար էր բարձրանալ տեսանելի և երկրաւոր բաների վերայ, որոնց այնքան շուտով ձանձրալի ու ղղուելի է դառնում ամենայն ծանրարարոյ քննութիւն Աստուծոյ և կրօնի, պարտականութեան և առաքինութեան, մահու և անմահութեան, մարդուս վախճանի և նորա մեծակշիռ հոգսերի վերայ. դուք, որոնց սրտին այնքան փոքր սնունդ և ուրախութիւն էին հասուցանում բանական աստուածպաշտութիւնքը—այս ամենաղնիւ վերհամարձութիւնը մարդկային հոգու—որ և աւելի շարժվումք այն բանով որ ղգայութեան տակ է ընկնում, և քաղցրացնումք ձեր ղգալի ախորժակը, քան թէ հաղորդակցութեամբ հոգեղէն աշխարհի, Աստուծոյ, բոլոր հոգիների հօր հետ։ Ո՞ւր է մնում ձեր արժանաւորութիւնը, ինչով է երևում ձեր բնաւորութեան ազնուութիւնը, դուք որ ունենալով շատ պատուական հնարներ և յարմարութիւններ քննելու և ինքնօրէն մտածելու, լինումք ստրուկ և ծառայ միւսերի մտա-

ծութեանը և խօսքին, որ թոյլ էք տալիս դաստիարակութեան, արտաքին պատուի և սովորութեան մոլորութիւններին միայն կառավարել ձեր անձը. որ ամենայն թագաւորական կարծիք կուրօրէն ընդունումք և պաշտպանումք, որ միշտ պտոյտվումք անհիմն, պղտոր, անչափ պակասաւ որ մտաւորական պատկերների և հասկացողութիւնների մի և նոյն նեղ շրջանակի մէջ, խեղդումք ձեր բնական իմաստասիրութիւնը, ոչ որոնումք և ոչ ընդունումք մի աւելի լաւ դաստատութիւն. այդքան շատ և մեծակշիռ բաների մասին մնումք տգէտ և գուցէ թէ պարծենումք ձեր տգիտութեամբ, ուրեմն և այդքան փոքր աշխատումք ձեր իմացականութիւնը մշակելու, ձեր գիտութիւնը ընդարձակելու և ուղղելու։ Մի թէ բացայայտ չէ այս բանից, որ դուք ձեր ամենաղնիւ առաւելութիւնքը տգիտանումք, ուրանումք և անգործ էք թողում։

Ո՛չ, իմ ամենասիրելի ընկերք. եթէ կամենումք դուք ձեր արժանաւորութիւնը պահպանել, ապա գործ դրեցէք ձեր իմացականութիւնը և դատողութիւնը, որ Արարիչը պարգևել է ձեզ և որով նա գերազանց է կացուցել ձեզ բոլոր միւս երկրաւոր արարածներից. ամենայն խնամատարութեամբ մշակեցէք նորանց. թող ձեր հոգու կատարելագործութիւնը, ամրութիւնը և վերասլացութիւնը լինի ձեր համար նոյնքան ևս ջերմ և աւելի ջերմ հոգաբարձութեան նիւթ, քան թէ ձեր մարմնի պահպանութիւնը և պճնազարդութիւնը։ Ամենայն բանի մէջ որ տեսանումէք և գործումէք, վարժեցէք ձեր մտածողական զօրութիւնը. պահպանեցէք միշտ մի պայծառ գիտակցութիւն (սրտի խոստովանութիւն) ձեր մէջ և փախեցէք ամենայն բանից ինչ որ թմրեցնումէ ձեզ և ձեր մէջ ճնշումէ անձնազգայութիւնը. մի մնացէք բաների երևութի վերայ, նոցա արտաքին կերպարանքի վերայ, ոչ նոցա առաջին երևութական ազդեցութիւնների վերայ, աշխատեցէք վերահասու լինել նոցա ստոյգ որպիսութեանը, քննեցէք նոցա յառաջագայութիւնը, նոցա գիտաւորութիւնը, նոցա վախճանը. քննեցէք նորանց նոցա պարագայքի հետ միասին, և թէ ինչ էր հետևում մի այդպիսի ջրջահայեաց նկատողութենից յաճախ. ուղղեցուցէք ձեր սիրտը և հոգին դէպ ի վեր, բարձրացուցէք նորանց դէպ ի սկզնապատճառը ամենայն բաների, պահպանեցէք ձեր մերձաւոր հաղորդակցութիւնը բոլոր հոգիների Հօր հետ և արեցէք զորանով այն բանը, որ ոչ մի ուրիշ արարած այս երկրիս վերայ կարող չէ առնել. թող զգայականութիւնը ցած չքարշէ ձեր հոգին դէպ ի երկիր, թող ծուլութիւնը երբէք խափան չլինի ձեր մէջ ճշմարտութիւնը քննելու, և հաւատարիմ կացէք այն հնարների գործադրութեան մէջ, որ նախախնամութիւնը առաջարկումէ ձեզ, ձեր հասկացողութիւնքը և գիտութիւնքը ուղղելու և բաղմապատկելու։

Այլ, ամենասիրելի ընկերք, ամենայն բան, որ ընդդէմ է մարդասէրութեանը, որ նորա գործադրութիւնը դժուարացնում է և խափանում է, հակառակ է մարդկութեան արժանաւորութեանը. դա անպատուում, ցածացնում մարդս և անարժան է կացուցանում նորան այն աստիճանին, որ ունի նա Աստուծոյ ստեղծուածների մէջ։ Բայց մի թէ ազատ էք դուք, մի թէ ազատութեամբ պահպանումէք մարդու արժանաւորութիւնը, դուք որ կարող չէք ընդդիմանալ ոչ մի տպաւորութեան, ոչ մի հրապուրանքի, ոչ մի փոքր ինչ սաստիկ հարուածի արտաքին բաների կողմից, որ գործումէք այն բանը միայն, որ հաճոյ էր ձեր աչքին և սիրելի էր ձեր սրտին, որ կարող չէք ոչինչ բանից զրկել ձեր անձը, կամ կոտրել ձեր կամքը, գոնեայ ոչ առանց տհաճութեան և ստիպանքի. դուք որ հետևումէք այն բանին միայն որ խտղեցնում է ձեր քիմքը, շոգեորթում ձեր զգայութիւնքը, լցուցանում է ձեր անասնական ցանկութիւնքը։ — Մի թէ ազատ էք դուք և պահպանումէք ազատութեամբ մարդկային արժանաւորութիւնը — դուք որ գրեթէ երբէք ձեր յատուկ աչքով տեսանում չէք, գրեթէ երբէք գործ չէք կատարում ձեր սեփական հասկացողութեամբ, չունիք ոչինչ հաստատուն, հիմնական կանոններ և ձեր ընթացքի մէջ չէք հետևում ոչինչ հաստատուն կանոնների, ձեր անձը կուրութեամբ ծառայացնումէք միանգամ թագաւորեալ ծէսերի, ներկայ ժամանակի բռնակալ սովորութեանը, օրինակի կարողութեանը, և միշտ որոնումէք և ընտրումէք ձեզ առաջնորդ այն բանը աւելի, որ համարվում է ճշմարիտ, գեղեցիկ, արդար և բարի, քան թէ այն բանը որ ստուգութեամբ էր ճշմարիտ, գեղեցիկ, արդար և բարի։ — Մի՞ թէ ազատ էք դուք և ազատութեամբ պահպանումէք մարդկային արժանաւորութիւնը, դուք որ թոյլ էք տալիս արծաթի շողշողիւնին, արտաքին պատուի փայլողութեանը, հանդերձների փառահեղութեանը կուրացնել ձեզ, ամենայն գեղեցիկ կերպարանքի կախարդել ձեզ, ամենայն կեղծաւորի խաբել ձեզ, ամենայն երևութի մոլորեցնել ձեզ. դուք որ դողալով յետ էք փախչում ամենայն զարհուրելի բանից, ականջ էք դնում ամենայն որսողական ձայնի, և կարող չէք ոչ մի երևելի դժուարութեան յաղթել ձեր ճանապարհի վերայ, և ոչ էլ ընդդիմանալ որ և իցէ անսովոր փորձութեան դէպ ի չարը։ Մի՞ թէ ազատ էք դուք և ազատութեամբ պահպանումէք մարդկային արժանաւորութիւնը, դուք, որոնց սէրը և ատելութիւնը, յոյսը և երկիւղը, ուրախութիւնը և տրտմութիւնը, սրտի պայծառութիւնը կամ պղտորութիւնը, գիտաւորութիւնքը և առաջարկութիւնքը կախ էին գրեթէ լոկ արտաքին բաներից, և գրեթէ ամեն մի պատահմանից, ամեն մի ընկերութենից, մարմնի կամ թէ եղանակի ամեն մի փոփոխութենից սահ-

մանվումէին երբեմն այնպէս և երբեմն այսպէս. դուք որ, շատ սակաւ միջոցներում միաբան էիք ինքներդ ձեր հետ, շատ սակաւ միջոցներում առնումէիք այն, ինչ որ կամէիք դուք առնել, և թողուլ այն բանը որ մտածումէիք թողուլ։ Մի՞ թէ ազատ էք դուք և ազատութեամբ պահպանումէք մարդկային արժանաւորութիւնը, դուք ծառայդ արատի, դուք որ թոյլ էք տալիս որ և իցէ չար և անկարգ ախտի թագաւորել ձեր վերայ, այնպէս թագաւորել, որ ստիպուած էիք կուրօրէն հետեւել նորա դրդողութիւններին, անպայմանաբար հնազանդել նորա հրամաններին, և այն միջոցներում ևս, երբ ձեր սիրտը հակառակ էր դորան, երբ ձեր հոգին և խիղճը ասումեն ձեզ, թէ անիրաւ ու չար է ձեր արածը։ Մի՞ թէ ազատ էք դուք, և ազատութեամբ պահպանումէք մարդկային արժանաւորութիւնը, դուք որ անգիտանումէք մարդերի իրաւունքը, նոցա բնական հաւասարութիւնը, ստրկաբար ցածացնումէք ձեր անձը ամեն մի մեծի և կարողի առաջև, կուրօրէն մեծարումէք նոցա բոլոր դատողութիւնքը, գործերը և հրամանները, դողումէք մեծաւորի ամեն մի խոժոռ հայեացքի, ամեն մի սպառնալիքի առաջև, նորա շնորհը սողուն կեղծաւորութեամբ, պատժելի կամակատարութեամբ ստանումէք և ամենեին կախ էք տկար մահկանացուների ակնարկութենից ու կամքից։

Ոչ, ամենասիրելի ընկերք, ձեր ազատութիւնը, այս ազնիւ, անգնահատելի առաւելութիւնը մարդկութեան, կորած է կամ գոնեայ անչափ վտանգաւորված, ամենեին նսեմացած է. դա մանաւանդ թէ մի տնկակից տրամաղրութիւն և ընդունակութիւն է, քան թէ մի զուարթ, ներգործող զօրութիւն։ Դուք ստրուկ էք, ստրուկ ձեր զգայականութեանը, ստրուկ պատահման, ստրուկ մարդերի, ստրուկ ձեր ցանկութեան կամքի. և քանի որ դուք այդպէս էիք, այնքան ևս երկար հաւասարումէք ձեր անձը դաշտի անասուններին, այնքան ևս երկար աննկատելի է ձեր վերայ մարդկութեան արժանաւորութիւնը. սակաւ միջոցներով միայն դուրս է երևում նորա փայլողութեան մի թոյլ ճառագայթը խաւար վերարկուի տակից, որ ծածկումէր նորան։ Բայց եթէ պէտք է, որ այդ արժանաւորութիւնը աւելի պայծառապէս փայլէր, ապա խորտակեցէք ստրկութեան շղթաները, որով զգայականութիւնը պահումէ ձեզ կապած. գործ դրեցէք իմացականութեան պարգևը որ տուել է ձեզ Արարիչը. ուսէք գործել շրջանկատ և մտախոհ կերպով. մի հաւատացէք բաներին առաջին տպաւորութիւններին, առաջին ցանկութիւններին որ պարթնումեն ձեր մէջ. ձեր բոլոր վճռահատութիւնների մէջ խորհրդակցութիւն արեցէք բանականութեան, Աստուծոյ յայտնած կամքի հետ. ականջ դրեցէք ձեր խղճմտանքի ձայնին

և մի ընթացէք ընդդէմ ձեր սրտի վկայութեանը, և ոչ ընդդէմ այն բանին որ դուք ինքներդ խոստովանումէք որպէս արդար և բարի։ Աշխատեցէք ստանալ որ և իցէ հաստատութիւն և անձնիշխանութիւն ձեր մտածութեան, կամեցողութեան և գործառնութեան մէջ. այդ է հիմքը ամենայն աղատութեան, որ կարող է առաւելապէս ապահովել ձեզ ամենայն սարկութենից և ծառայութենից. դա է մի անուրանալի նշան մարդկային արժանաւորութեան։

Դարձեալ, եթէ մարդուս անկակից և միշտ շատ կամ փոքր ներգործական, երբէք ոչ ամենևին խորտակելի աշխատասիրութիւնը է մի այդպիսի յատկացուցիչ նշան նորա արժանաւորութեան, ապա պիտոյ է, երկրորդ, մարդկային արժանաւորութեանը հակառակ լինէր ամենայն բան ինչ որ ԼՈՒԼՅՈՒՆՔ, ԾՆՂՈՒՆՔ, ԿՇԻՆՊՈՒՆՔ նորան կամ ԻՆՔ պալիս է նորան մի ԾՈՒՐ ԵՒ ՄԵԱՌԱԿԱՔ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ։ Եւ ինչքան բաղմօրինակ են այն սխալութիւնքը, որոնց մարդիկ և այս մասին պարտական են կացուցանում իւրեանց անձը, և որով իւրեանց յատուկ անձը անարգումն և իւրեանց ընութիւնը անպատվումն։ Այս տեղ կան մարդիկ, որ նեղսրտութեամբ փախչումն ամենայն ուշադիր, ծանրաբարդ մտածութենից, ամենայն մարմնաւոր և իմացական ճգնողութենից, ամենայն, մի փոքր դժուարացուցիչ կամ թէ դժ և ղօրութիւն պահանջող քննութիւններից. կան մարդիկ որ, ասես թէ, դողումն ամենայն աշխատութենից, ամենայն փոքր ինչ խառնաշփոթ գործից, ամենայն տարակուսական ձեռնարկութենից. որ իւրեանց անձը միշտ համարումն աւելի տկար քան թէ էին, իւրեանց ղօրութիւնքը գրեթէ ամենևին անգործ են թողում, երկիւղից, մի գուցէ թէ սպառէին նորանց, և այն հեռաւոր վտանգից, որպէս թէ վնասելու էին իւրեանց կենդանին ու առողջութեանը, կամ թէ պիտոյ է մի բան կորէին իւրեանց զիւրութենից, զոհումն ամենայն պարտականութիւն և ամենայն պատեհ միջոց բարի առնելու և օգտելու հասարակութեանը. կան մարդիկ որ միշտ փափագումն հանգստութեան և որոնումն իւրեանց երանութիւնը անգործ դատարկութեան, կամ թէ այն բանի մէջ, որ միայն թոյլ են տալիս արտաքին բաներին ներգործել իւրեանց վերայ, և զուարճանումն նոցա մանրաւորական նկատութեամբը, առանց անդրադարձաբար ներգործելու նոցա վերայ, և այնքան ևս յօժարութեամբ և այնքան շատ տալու նոցա, ինչքան որ ընդունումէին նոցանից. կան մարդիկ որ գանգատումն, որ գուցէ թէ յանդիմանումն դատապարտութիւնը այն մասին, որ մարդս պիտոյ է երեսի քրտինքով ուտէ իւր հացը, ջանքով և աշխատութեամբ ստանայ ամենայն բան, այն ճանապարհի վերայ, որ տանումէ նորան դէպ ի երջանկութիւն և բաւականութիւն, յաղթէ այնքան

դժուարութիւնների, պատերազմ այնքան թշնամիների հետ, որ նա պարտական է իւր և միւսների համար այնքան շատ հսկել, մտածել, խոկալ և հոգալ։ — Այն տեղ կան միւսներ, որ այն զօրաւոր ձգտողութիւնը դէպ ի աշխատասիրութիւն, որ գտանվումէ նոցա մէջ, այն մեծ զօրութիւնը որ շարժվումէ նոցա մէջ և որով կարող էին նոքա այնքան շատ բարիք ներգործել իւրեանց մէջ և իւրեանցից դուրս, ուղղեցնումեն դէպ ի լոկ չնչին բաներ և վատնումեն դոցա վերայ միայն, որ և միշտ անհանգիստ, միշտ բաղմաղբաղ, այնու ամենայնիւ ոչինչ յառաջացնում չեն, որ լիներ նոցա արժանի, ոչինչ որ լիներ մարդկային ընկերութեանը օգտակար, ոչինչ որի յիշատակը մահուց յետոյ ուրախացներ և վարձադրեր նորանց. կան մարդիկ որ երեխաների պէս իւրեանց բոլոր կեանքը անցուցանումեն երազի, չնչին բաների, խաղի ու կատակի մէջ, որ պարապումեն այն բանով միայն, որ վերաբերվումէ մարմնի զարդարանքին, արտաքին փառահեղութեանը, իւրեանց պաշտօնի պահպանութեանը ընկերական կենցաղավարութեան մէջ և դոցա վերայ անփոյթ են առնում իւրեանց առաւել մեծակշիռ հոգալիքը։ — Այն տեղ կան դարձեալ միւսներ, որ շատ գործունեայ են, բայց չարի մէջ գործունեայ, որ ունին մի ընդարձակ ասպարէզ գործականութեան, բայց սակաւ էր պատահում, որ յառաջացնէին բարի բան, որ և ամենայն տեղ ցանումեն թունաւոր սերմեր, անմեղի ճանապարհը պաշարումեն կայթագղութեան քարերով, մոլորութեան որոգայթներ են լարում հաւատաւորներին և անզգոյշներին, խառնակումեն ընտանեկան և ընկերական խաղաղութիւնը, վառումեն կամ պահպանումեն երկպառակութեան կրակը, ամենայն բանի մէջ ներս են խառնվում և ամենայն բան շփոթումեն, որ մի սխալական զբաղասիրութեամբ կամենումեն ամենայն բան ինքեանք առնել, և դորանով արգելք են լինում միւսներին աւելի լաւ գործ կատարելու։—

Ով մարդիկ, դուք որ այդպէս մտածումք և գործումք, որ ձեր ձգտողութիւնը դէպ ի գործականութիւն այդպէս ճնշումք, կամ թէ նորան տալիս էք մի այդպիսի խոտորնակ ուղղութիւն, վեր կացէք ձեր քնից, ամաչեցէք ձեր դանդաղկոտութենից, եթէ կամենումք պահպանել ձեր բնութեան արժանաւորութիւնը։ Այդպէս, նման է ձեր կեանքը մի երազի միայն, այդպէս երբէք կարող չէք դուք խելացի կերպով ուրախանալ նոցա վերայ. այդպէս զուր է ձեր ունենալը պատուական զօրութիւններ, կամ թէ դուք դէպ ի չարն էիք գործ դնում նորանց։ Որպէս մարդ ապրել հասկացվումէ ներգործել և ներգործել սրտի վկայութեամբ և ներգործել բարի բաներ շատ։ Հանգստանալ որպէս մարդ իմացվումէ ոչ թէ դատարկ, անգործ լինել, այլ աւելի թեթև գործից յառաջ խաղալ դէպ ի աւելի դժուարինը և ուրախանալ յաջողութեամբ

լցուցած գործի վերայ։ Եթէ չկամիք դուք որպէս բուսականք, որպէս անբան շնչաւորք, այլ որպէս բանական մարդիկ ապրել և վայելել աղնիւ և մարդավայելուչ հանգիստ, ապա գործունեայ եղէք, և օր ըստ օրէ աւելի գործունեայ, բայց բարի բաների մէջ գործունեայ. ապա վարեցէք մի աշխատաւոր, բայց ամենայն տեսակ բարեգործութեամբ աշխատաւոր կեանք, վարժեցէք և պատմապատկեցէք ձեր զօրութիւնքը, որ առանց ճանձրութեան գործ դնէիք նորանց և չփախչէիք ևս առաւել լարելուց այդ զօրութիւնքը, երբ որ այդ բանը պահանջում ձեզանից պարտականութիւնը և մարդասիրութիւնը։

Եթէ ընդունակութիւնը միշտ աւելի յառաջ խաղալու և միշտ աւելի կատարեալ դառնալու է ՏԷՐՈՒԹ առաւելութիւնը մարդուս, ապա նորա արժանաւորութեանը պիտոյ է ընդդէմ լինէր ամենայն բան որ խափան է այս ընդունակութիւնն աճելուն և զարգանալուն, ինչ որ արգելուելի է նորա յիշողութիւնը դեղ է աւելի վերին կարողութիւն, կամ որ դեղ է յեր է յիշո՞ մ նորան, գաղափարնո՞մ և վերացնո՞մ։ Եւ քանի քանի մարդերի մէջ մնում այս ընդունակութիւնը գոնեայ միշտ որպէս լոկ ընդունակութիւն միայն. ինչքան սակաւ մարդերի մէջ կերպարանագործութիւն է ստանում դա այնպէս, ինչպէս կարող էր և արժան էր։ Կամ, մի՞ թէ յառաջ խաղա՞լ էր այս, մի՞ թէ իւր ընդունակութիւնը օր ըստ օրէ աւելի կատարեալ լինելու, կարելի էր պատշաճապէս կերպարանագործել, եթէ մեք այսպէս հեշտ բաւականանում էինք նորանով ինչ որ գիտէինք, ինչ որ կարող էինք, ինչ որ գործումէինք, եթէ մեք թէպէտ լաւը նախապատիւ էինք համարում վատից, բայց փոքր էր պատահում որ աւելի լաւը նախամեծար ընտրէինք քան թէ լոկ լաւը. եթէ մեք համարումէինք մեր անձը բաւական իմաստուն, եթէ մեր պաշտօնի և կոչման գործերը հասկանումէինք փոքր ի շատէ և ուսած էինք որ և իցէ պատշաճաւորութեամբ լցուցանել մեր արտաքին վարքը ընկերական կեանքի մէջ. եթէ կարծումէինք արդէն բաւական առաքինի և բարեպաշտ լինել, միայն թէ չարագործ չէինք, կոպիտ և ամօթալից արատներից ազատ էինք, չէինք արհամարհում կրօնը, ներկայ էինք լինում աստուածպաշտական արարողութիւնների և ունէինք մի պարկեշտ, անդրդուելի քաղաքացու անուն. եթէ մեր բարեգործութիւնը ոչ մի այլ բան չէր եթէ ոչ լոկ ողորմութիւն աղքատներին, լոկ սովորական ցոյցք քաղաքավարութեան և բարեկամութեան, եթէ մեք չկամէինք գիտել անձնուրացութիւն, անձնանուիրութիւն, աղնիւ հասարակօգտութիւն։ Մի՞ թէ այս յառաջ խաղա՞լ է, մի՞ թէ իւր ընդունակութիւնը աւելի կատարեալ լինելու կարելի է պատշաճապէս կերպարանագործել և այդպէս պահպանել մարդկութեան արժանաւորու-

թիւնը, եթէ ծուլանումէինք աւելի իմաստուն և աւելի բարի լինելէ՝ քան թէ միւսերն էին, մեր անձը միւսերից գերազանց կացուցանել աւելի ուղիղ դատողութեամբ, աւելի աղնիւ խորհուրդներով, աւելի մաքուր առաքինութեամբ. եթէ մեք չկամէինք յանձն առնուլ հրաժարվիլ ընդհանրապէս կոխած շաւղից, ազատել մեր անձը թագաւորեալ մոլորութիւններից և սովորութիւններից, և եթէ երկիւղ կրելով, մի գուցէ թէ ասէին մեզ անսովոր և օտարոտի մարդ, կամէինք միայն կըրթել և յարմարել մեր անձը միւսերին և սովորաբար շատ միջակ իմացականութեամբ և թուլասիրտ մարդերի։ — Մի թէ այս, յառաջ խաղալ է, մի թէ իւր ընդունակութիւնը աւելի կատարեալ լինելու, կարելի է կերպարանագործել պատշաճապէս, եթէ կատարելութեան ճանապարհի վերայ թոյլ կը տայինք որ ամեն մի խափանարիթ, ամեն մի կորուստ արտաքին ստացուածների, ամեն մի ծաղրածութիւն յիմարների, ամեն մի ծիծաղ խելագարների կողմից, խոտորեցնէր մեզ մեր նպատակից կամ թէ ստիպէր մեզ ընտրել մեր ճանապարհը։

Ոչ. եթէ և այս մասին կամէիք պահպանել ձեր բնութեան արժանաւորութիւնը, ապա թոյլ մի տուէք ոչ ձեր ծուլութեանը և ոչ օտարի օրինակին չափ ու սահման դնել ձեզ ինքնահաճոյաբար, մի կարծէք որ դուք բաւական իմաստուն և առաքինի և բարեպաշտ էիք, եթէ դուք բաւական բարեգործ էիք եղած և շատ արդիւնք էիք բերած աշխարհին. մի համարէք ոչ մի աստիճան գիտութեան, իմաստութեան, առաքինութեան և երկիւղածութեան պարզուղեղ անհասանելի և այնպէս մտածեցէք միշտ, որ այն բանը որ դուք գիտէիք, արդէն ունէիք, արդէն կարող էիք, արդէն արած էիք, էր ամենափոքրը նորանից, ինչ որ ընդհանրապէս ձեռնհաս էիք գիտել և կարողանալ և ձեռք բերել և իրագործել։ Բոլորը լինել և բոլորը պղտաբերել, ինչ որ միայն կարող էին մարդիկ լինել և պղտաբերել և այնքան ներգործել, ինչքան միայն կարող էին ներգործել մարդկային զօրութիւնքը, այս թող լինի ձեր ձգտողութեան վսեմ և արժանապատիւ նպատակը. մի նպատակ, որին կարող էիք օր ըստ օրէ աւելի մոտենալ, բայց հասանել բոլորովին, երբէք ոչ։

Պատճառ, դուք անմահ էք, իմ ամենասիրելի ընկերք. այս բանը ևս տալիս է ձեզ մի արժանաւորութիւն, որ ձեզ շատ և շատ գերազանց է կացուցանում բոլոր անշունչ և ապականացու արարչագործութիւնից։ Ողջ, զգուշացէք նոյնպէս ամենայն բանից որ ընդդէմ է այս ձեր արժանաւորութեանը, կամ թէ նսեմացնում նորա փայլողութիւնը։ Դու անմահ ես, ով մարդ, դու պիտոյ է յաւիտեան տևես, յաւիտեան ապրիս, յաւիտեան երանելի լինիս. այնու ամենայնիւ նայումես

դու միայն ներկայի վերայ, հոգատար ես միայն այս կարճատև երկրաւոր կեանքի բոպէին, քո բոլոր սրտով կցված ես այն բանի հետ որ երկրաւոր ու անցաւոր է, և որոնումես քո բոլոր երջանկութիւնը այն բանի մէջ, որ մահը յափշտակումէ քեզանից, որ քեզ մի քանի բոպէաչափ ժամանակով տուած է վայելելու։ Դու անմահ ես, դու պիտոյ է յաւիտեան տևես, յաւիտեան ապրիս, յաւիտեան երջանիկ լինիս. այնու ամենայնիւ դու մտածումես և ապրումես այնպէս, որպէս թէ ամենևին մարմին, ամենևին ապականացու էիր, որպէս թէ գերեզմանից յետոյ չունէիր ոչինչ յուսալի, ոչինչ վարձատրութիւն և ոչինչ պատիժ սպասումէին քեզ, որպէս թէ քո ներկայ վարք ու գնացքը ոչինչ կապակցութիւն չունի քո գալոց դրութեան հետ։ Դու յաւիտենական ես, դու պիտոյ է յաւիտեան ապրիս, յաւիտեան երջանիկ լինիս. այնու ամենայնիւ այդքան անհոգ, անփոյթ ես քո ապագայի մասին։ Այնու ամենայնիւ սակաւ էր պատահում, որ դու այս ներկայ կեանքի խաբերայ ուրախութիւնքը զոհ բերէիր երկնքի տևողական ուրախութիւններին. այնու ամենայնիւ գանգատումես դու յաճախ այն բանի վերայ, որ պիտոյ է դաստիարակէր և պատրաստէր քեզ դէպ ի այդ գերագոյն դրութիւնը։ Այնու ամենայնիւ շատ հեշտ դէպ ի գետին է զարկում քեզ ամենայն ձախորդութիւն. այնու ամենայնիւ ցաւեցնումէ քեզ ամենայն զրկանք երկրաւոր բաներից, այնպէս խոր, որպէս թէ չունէիր դու յուսալու ոչինչ միւս և աւելի լաւ ստացուածք. այնու ամենայնիւ դողումես դու մահու մօտենալուց, որ պիտոյ է հասուցանէր քեզ այդ բարիքը. այնու ամենայնիւ սարսափումես դու տեսանելով բաց գերեզմանը, որպէս թէ դա քո բոլոր երջանկութիւնը պիտոյ է յաւիտեան փակէր և ոչնչացնէր։ Ի՜նչ հակառակաբանութիւն, ինչ անձնանարգութիւն։ Այդպէս ես լցուցանում դու պարտիքը մի էակի արժանաւորութեան, որ շատ և շատ բարձր է հողեղէն արարածներից և անմահ է։ Մի՞ թէ դոքա այնպիսի գատողութիւնք, գիտաւորութիւնք, ձգտողութիւնք, գործեր, ուրախութիւնք, հոգալիք և ցաւելիք են, որ արժան էին մի մարդու որ ունի այդպիսի յոյսեր, որ ունի յուսալու մի յաւիտենական կեանք։

Ոչ. եթէ կամիս դու քո արժանաւորութիւնը պահպանել, ով մարդ, ապա մի մոռացիր, որ դու սահմանած ես անմահութեան համար։ Այս մտածութիւնը պիտոյ է յաճախ, ինչպէս ընկերութեան ադմուկի, նոյնպէս և առանձնութեան հանդստի մէջ, ինչպէս քո ուրախութիւնների, նոյնպէս քո գործերի մէջ, ձայն տայ քեզ մեծաբարբառ. մի լինիր քո բոլոր սրտով անձնատուր այնպիսի բաների որ անտարակոյս դուցէ թէ շուտով կորուսանելու ես. մի՛ վարվիր թեթևամտաբար այնպիսի բաների հետ որ կարող են այնքան մեծ և մշտատև ազդեցութիւն ունենալ քո

բոլոր ապագայքի վերայ։ Մի սահմանափակիր քո ցանկութիւնքը քո ձգտողութիւնքը, քո յոյսերը մի քանի լոպէների մէջ, որովհետև ունիս քո աչքի առաջև անանց մշտնջենաւորութիւնք։ Այս կարճատև, ան հաստատ երկրաւոր կեանքի գործերի և զբօսանքի վերայ, անտես մի ա- րա այն աւելի մեծախորհուրդ հարկաւորութիւնքը քո հոգու որ պիտոյ է յաւիտեան ապրի։ Թող քո յոյսերը ապագայի վերայ առաջնորդեն քո գատողութեանը ներկայի վերայ և քո ընթացքին նորա մէջ։ Զարչար- վիր և համբերիր որպէս մի մարդ, որին ոչինչ վիշտ ու ծանրութիւն կա- րող չէր բոլորովին ցած քարշել դէպ ի հողեղէնը, որին կարող չէր ո- չինչ հեռացնել իւր գերագոյն վախճանից. տուր և կորուսիր և ողջ ըեր որպէս մի մարդ որի հարստութիւնը անսպառելի, որի երջանկութիւնը անխորտակելի է. վայելիր ամենայն հաճութիւն, ամենայն ուրախութիւն որպէս մի մարդ որ սպասումէ շատ աւելի մաքուր հաճութեան, շատ ա- ւելի աղնիւ ուրախութիւնների։ Ընտրիր և գործիր այն բանը միշտ, որ երբէք ապաշաւելու չես, որ յաւիտեան ուրախացնելու է քեզ։ Այս- պէս ահա, մի անմահ էակի աղնութիւն, բարձրութիւն և արժանաւո- րութիւն կը յայտնվի այժմ իսկ քո դիտաւորութիւնների և քո գործերի մէջ, այն բանի մէջ, ինչպէս դու չարչարվումիր և ինչպէս ուրախանու- մէիր, և կը տայ քո կեանքին մի ծանր կշիռ, որ ոչինչ միւս բան կարող չէր տալ։

Կամիս դու պահպանել քո արժանաւորութիւնը, ով մարդ, ապա զգուշացիր դու, վեցերորդ, ամենայն բանից որ ընդդէմ է այն մերձաւոր և երանելի յարաբերութեանը որ ունիս դու Աստուծոյ և նորա որդու, Յիսուսի Քրիստոսի յետ, ամենայն բանից, որ քո աստուածանմանու- թիւնը, քո քրիստոսանմանութիւնը թուլացնումէ, նսեմացնումէ և աւե- րումէ։ — Պատուիր և մեծարիր քո հոգեղէն զօրութիւնքը, որով դու ոչ թէ միայն ազգակից ես հրեշտակների հետ, այլ աստուածային ազգից ես, և զգուշացիր, մի դուցէ չարաչար գործ դնես նորանց, որովհետև այդ կը լինէր դէպ ի չարը գործ դնել այն բանը, որ տալիս է քեզ այն- քան վսաւաւոր կոչումն, որ այնքան շատ մօտեցնումէ քեզ աստուածու- թեանը։ Զգուշացիր սխալանքից. պատճառ, սխալանքը և մեղքը հեռա- ցնումեն քեզ Աստուծուց և շինումեն քեզ անկարող հաղորդութիւն ու- նենալ նորա հետ։ Զգուշացիր ամենայն բանից ինչ որ ընդդէմ է կա- մեցողութեանը Յիսուսի, այս օրինակին ամենայն մարդկային արժանա- ւորութեան, այս ամենակատար պատկերին Հօր Աստուծոյ։ Զգուշացիր, որ դու Աստուծոյ փրկաւէտ դիտաւորութիւնքը մարդերի մասին և նորա տեղակալի գործը երկրի վերայ չարգելես և ինչքան կարող էիր խափա- նես, յառաջադիմութիւն տալով անհաւատութեանը կամ թէ սնապաշ-

տուլթեանը, մոլորեցուցիչ օրինակներով, չար և անիրաւ գործերով։ Որոնիր դու մանաւանդ քո պարծանքը այն գործի մէջ որ է կամենալ այն բանը որ հաճոյ է Աստուծուն, այնպէս զգալ, ինչպէս Քրիստոս զգացել է, առնել այն բանը, ինչ որ դու տեսանումես թէ առնումէ Աստուած, և այնպէս ընթանալ, ինչպէս Յիսուսը ընթացել է։ Այսպէս ահա Աստուծոյ հոգին, նորա որդու Յիսուսի հոգին աւելի տեսանելի կերպով կը ներգործէ քո մէջ և քեզանով. այսպէս ահա կարող ես դու Աստուծոյ ձեռքումը, քո եղբայրակիցների համար լինել այն բանը, ինչ որ այլ միջոցներումՆոցա համար եղած են առանձին հրաշալի կերպով նորանից ուղարկած ուսուցիչներ, ինչ որ եղած են նոցա համար երկնային պատգամաւորները, մեր Տիրոջ առաքեալքը։ Այսպէս ահա օր ըստ օրէ աւելի կ'արժանանաս դու այն պատուին որ է լինել որդի և դուստր Աստուծոյ մի աւելի բարձր մտքով, այն պատուին որ է լինել եղբայր և քոյր Յիսուսի, անդրանկածնունդին Հօրից. և ինչ փառահեղութիւն տարածանելու էր սա ամենայն բանի վերայ, ինչ որ դու էիր և առնումէիր։

Վերջապէս, ով մարդ, եթէ կայ արժանաւորութիւն և բարձրութիւն քո արտաքին կերպարանքի մէջ, ապա զգուշացիր, որ դորանց չտգեղացնես և չաղճատես անարդ խորհուրդներով, անժամանակ հոգսերով և տրտմութեամբ, անկարգ և սաստիկ ախտերով։ Թող քո հոգու գեղեցկութիւնը և աղնուութիւնը կենդանացնէ և պայծառացնէ քո մարմնի գեղեցկութիւնը. թող քո աչքը երբէք չցուցանէ խարդախութիւն և նենգաւորութիւն, նախանձ և ատելութիւն, թող քո բերանը չխօսէ երբէք խաբէութիւն և ստութիւն, այլ միշտ ճշմարտութիւն և սէր։ Թող քո հայեացքը մարդասէր, քո երեսը զուարթ և քո բոլոր կերպարանքը և շարժուածքը լինին յայտարար քո ուղիղ խելքին և քո բարի և աղնիւ սրտին։

Եթէ դու այս երկրի առաջին և գերամեծար ընակիչն ես, ով մարդ. եթէ դու թագաւորումես և կառավարումես այդ տեղ քո գերագոյն ամենաբարձեալ Տիրոջ անունով և եթէ կամիս դու Աստուծոյ տեղակալի արժանաւորութիւնը պահպանել նորա թագաւորութեան այս գաւառի մէջ, ապա ընդաւորիր և կառավարիր խմաստութեամբ և բարութեամբ։ Մի լինիլ բռնակալ, այլ պաշտպան, խնամատար, առաջնորդ բոլոր ստորակարգ արարածների. մի հալածիր նորանց քեզանից, այլ մօտեցիր նոցա քաղցրութեամբ, կարեկցութեամբ, օգնութեամբ։ Մի կործանիր և աւերիր նորանց առանց հարկաւորութեան, և եթէ նոքա հարկաւոր էին քեզ. եթէ դու կարող չէիր խնայել նոցա կեանքը, ապա զգուշացիր որ նոցա չարչարանքը և ցաւը չբազմապատկես. մի տանջիր նորանց, քո

ցանկութեան կամքը կատարելու համար կամ թէ քո զեղխ ախորժակը լցուցանելու։ Քարուքանդ մի արա երկիրը, որ պարտական ես դու զարդարել և գեղեցկացնել։ Մի տարածիր քո չորս կողմը մահ և սասանութիւն, այլ կեանք և ուրախութիւն։ Եղիր մանաւանդ բարեգործ դէպ ի քո եղբայրակիցքը, ինչ կարգից, ինչ ազգից և լինէին, ինչ պաշտօն և կատարէին դոքա. թող ոչ ոք քո կարողութիւնը կամ թէ քո առաւելութիւնքը չզգար այլապէս, եթէ ոչ բարեգործութեամբ. ոչ մի մարդու վերայ մի դնիր սարկութեան լուծ, ըստ որում ամենայն մարդ նոյն իրաւունքը ունի ազատ լինելու, ինչպէս դու. մի խառնակիր ոչ ոքի անմեղ ուրախութեան վայելքը. մի լինիր ոչ ոքի խափանարկու նորա ձգտողութեան մէջ դէպ ի կատարելութիւն, և թող սուրբ և անմերձենալի մնան քո համար ամեն միւի կալուածքը, իրաւունքը, ազատութիւնքը, առաւելութիւնքը, ուրախութիւնքը։

Եթէ դու ընութեան քահանայ ես և կամիս պահպանել այդ արժանաւորութիւնը, ապա մի լինիր սառնասիրտ, անզգայ դէպ ի ամենավերին իմաստութեան և բարութեան սքանչելիքը, որ ամենայն տեղ, թէ փոքրի և թէ մեծի մէջ, շրջապատումն քեզ։ Լսիր ընութեան ձայնը, նորա հաղարապատիկ փառաբանութիւնը, զգացիր ուրախութիւնքը բոլոր կենդանի արարչագործութեան, և թող քո սիրտը զգայ և քո բերանը արտասանէ այն բանը, ինչ որ նոքա կարող չեն արտասանել, և նոցա անունով վերընծայիր փառք և գոհութիւն Նորան, որ ստեղծել է նորանց և քեզ, որ այդքան շատ գերազանց է արել քեզ նոցանից, որին և միայն վայել է փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից։

Մարկոս Բաղդասարեանց։

ԱՂՋԻԿԸ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ.

Ո՛հ, յաւիտեան թող մնան կանաչ
Նախկին սիրու ոսկի օրեր։

Շիլլեր։

Այսպէս է երգում Գերմանացոց ամենամեծ բանաստեղծ Շիլլերը, և այս մի քանի խօսքերի մէջ բացայայտել է նա այն բոլոր քաղցր ցաւերը, որ աղջիկ մանկամարդի և երիտասարդի սրտումը շարժվումն այն միջոցին, երբ սրտի զգացողութիւնը որպէս մի աղատված բանտարգել խնդութեան ձայն է արձակում և իւր հոգեզմայլութեան, իւր ցնծալից ուրախութեան մէջ կամէր գրկախառնել բոլոր աշխարհը։ Արդարև, սա է ամենագեղեցիկ ժամանակը երիտասարդի կեանքի մէջ. բոլոր բնու-

թիւնը ասես թէ մանկանումէ նորա աչքի առաջև։ Ամենայն բան երեւումէ նորան թէ աւելի փառաւորութեամբ ծաղկումէր, և ստեղծած էր միայն, նորա զգացողութիւնը գեղեցկացնելու համար։ Այս միջոցիս, երիտասարդի կոշտութիւնը հալվումէ և յեղափոխվումէ մի մեղմ, գեղեցիկ մարդկեղենութիւն, նորա հպարտ սիրտը որ յառաջ չէր խոստովանում իւր վերայ ոչինչ տէր, ոչինչ չափ ու սահման, կամայապէս ստորադրումէ իւր անձը գեղեցիկ զգացողութեան տակ, որ լցուցանումէ նորա բոլոր գոյութիւնը, նա ապրումէ միայն իւր սրտի գաղափարական պատկերի համար. նաղելի աղջիկն է, որի վերայ միշտ և հանապազ ուղղած են նորա մտածութիւնքը, նաղելի աղջիկն է, որ միշտ թէ արթնութեան և թէ քնի մէջ զբաղեցնումէ նորան. և ինչ բանի ձեռնարկումէ, ինչ բան և յանձն է առնում երիտասարդը, նա կատարումէ այդ բանը ուրախ յուսով թէ գտանելու էր նաղելի աղջկայ հաճոյական հաւանութիւնը։ Նա իւր սրտի սիրածը խոստովանումէ որպէս ամենապատուական բանը երկրի վերայ, նորա խօսքերին տակից ականջ է դնում կարօտով ու փափագով, աշխատումէ սիրողապէս գուշակել այն բանը որ նա խօսումէր, և նորա ամեն մի թէև շատ փոքրիկ և դեռ ևս ոչ բոլորովին բացայայտած ցանկութիւնը լցուցանել, է և մնումէ նորա համար մի օրէնք, մի սուրբ պատուիրան որ իւր հոգու բոլոր զօրութենից աշխատումէ նա կատարել։ Իւր սրտի սիրականը է այն աստուածը որի առաջև ծունը է խոնարհեցնում նա, վերուղղելով դէպ ի նա իւր ջերաջերմ խնդրուածքը, իւր պաղատագին աղօթքը. սրտի սիրականը է այն բարի հրեշտակը, որ ամենայն տեղ հսկումէ նորա վերայ, այն փրկող խարիսխը, որ նորան այս և այն փոթորկի, այս և այն վտանգի մէջ պահպանումէ. նա նորա համար ամենայն ինչ է. նորա յոյսը, նորա հաւատը, նորա ապաւէնը։

Այժմ, մանկամարդ աղջիկը ինչպէս պիտոյ է վարվի այս ժամանակամիջոցիս, որ այս կուսապաշտական մեծարանքին արժանաւոր լինի և մնայ։ Հեշտ էր արտասանել բերանից, եթէ ասէինք, թող չմոռանայ նա, որ կին էր, և թող իւր աչքից չհեռացնէ երբէք կնոջ պատիւը. թող չմոռանայ նա երբէք թէ սիրելի էր նա, և թէ ինչ էր որ երիտասարդի սէրը այդքան գրաւել էր դէպ ի նա։

Այց ինչ է կնոջ արժանաւորութիւնը. մի թէ դա դրած է նորա արտաքին կերպարանքի, նորա արտաքին արժանապատուութեան մէջ. կամ թէ պիտոյ էր մեղ աւելի խոր որոնել նորա հիմքը։ Կնոջ արժանաւորութիւնը, ճշմարիտ հարազատ և սուրբ արժանաւորութիւնը, նա քնած է, նոյն իսկ կնոջը անյայտ, նորա սրտի ամենախորին խորքումը. ինքը կինը չգիտէ, թէ ինչ անկշռելի գանձ ունի իւր մէջ, նա վարվու-

մէ այնքան ևս անբռնադատ, այնքան ևս անպահանջող կերպով ինչպէս մի երկիւղած երեխայ, և այն բոպէին միայն, երբ որ Նորա մաքուր, քնքուշ զգացողութիւնը վիրաւորված ու վշտացած էր շատ թեթև կերպով, այնուհետև յառաջանումէ այն ազնիւ հպարտութիւնը առաքինութեան, որ միշտ յաղթողապէս դուրս է հանդիսանում, որ մի մաքուր սրտի մէջ սնուցանումէ ամենասուրբ բոցեր և տալիս է դոցա արտափայլել, և այս մաքուր, բարոյական զգացողութեան դուրսերևութիւնը է սոյն այս արժանաւորութիւնը կնոջ։ Առանց գիտակցութեան միայն բորբոքվումեն այս բոցերը. պատճառ, ազնիւ կնամարդը վէ պէրոյ հասկանայ, որ իւր բարոյական զգացողութիւնը վշտացել է. արդէն մի մութն գուշակութիւն, որ այդ մասին ընկնումէր Նորա հոգու մէջ, զարթեցնումէ Նորան, և Նորա վճռարար դուրս երևելը, այն փայլողութիւնը որ միշտ շրջապատումէ մի մաքուր գոյութիւն, զինաթափ է առնում Նորա հակառակորդքը և սպասաւորումէ միայն առաւել և առաւել բարձրացնելու Նորան։ Կնոջ արժանաւորութիւնը է ամենազնիւ պարգևը որ շնորհել է Նորան Աստուած, ամենաթանգագին բանը, որ կարող է նա ունենալ. պատճառ, դա այնքան մեծ կապակից է անմեղութեան և բարքի մաքրութեան հետ, այնպէս որ յետինիս կորուստը ձգումէ իւր քամաքից և առաջինի կորուստը։ Այս պատճառով տեսանումենք այնքան յաճախ, որ մի կին եթէ արել էր առաջին քայլափոխը դէպ ի անպարկեշտութիւն, կարող չէ ապա յետ դառնալ, այլ օր ըստ օրէ աւելի ցած է գլորվում, դառնալով մի վատթար և գարշելի արարած, այնպէս որ զուր էր ամենայն ջանադրութիւն, միւսանգամ բարձրանալու։ Դորա պատճառը շատ և շատ մեծ է, այդ խնդիրը բացատրելու։

Կինը, որ արդէն դուրս էր եկել ճանապարհից, կորուսանումէ վստահութիւնը դէպ ի իւր առաքինութիւնը, դէպ ի իւր սեփական յարգը. նա չէ զգում իւր մէջ աւելի այն զօրութիւնը, այն ապահովութիւնը որ գտանումէ իւր մէջ մի մաքուր սիրտ, նա կորուսել է իւր արժանաւորութիւնը և դորա գիտակցութիւնը։

Այս կորուստը է կնոջ բարոյական մահը. պատճառ, այնուհետև չկայ Նորա համար ոչինչ յոյս բաղդաւորութեան և ուրախութեան. Նորա համար մեռած է ամենայն բան. նա արհամարհված, անարգված և բարձի թողի է արած։ Ոչ ոք հանդիպելու չէ Նորան սիրով, ոչ մի սիրտ ազնիւ զգացողութեամբք զարկելու չէ Նորա համար, և սիրու բոլոր ուրախութիւնքը կորած են նորա համար։ Այս պատճառով ահա, կնոջ արժանաւորութիւնը է այն պահապան հրեշտակը, որ հսկումէ նորա վերայ, այն աստղը որ լուսաւորումէ Նորա կեանքը, և այն լուսակամաքը որ Նորան շինումէ մի աստուածեղէն բան երիտասարդի աչքումը։

Մի մաքուր էակի, մի այնպիսի կնոջ համար միայն, որի սրտի խորքումը ձայն են տալիս առաջին սիրու նոյն իսկ արծաթեղէն հնչիւնքը, որ բոլորովին լցուած էր այս աստուածեղէն զգացողութեան սրբութեամբ, որի սիրտը չգիտէ ոչ մի այլ ուրախութիւն, եթէ ոչ սիրել և սիրելի լինել. մի այդպիսի մանկամարդ աղջկայ սիրով միայն կարող է մի երիտասարդի սիրտ վառվիլ ու բորբոքվիլ. նորա համար միայն կարող է ամենայն բան յանձն առնուլ, որ հասանէր ամենաբարձր նպատակին. պատճառ նա է միայն որ լցուցանումէ երիտասարդի սիրտը, նա միայն նմանումէ այն մտաւորական դաղափարին, որ երիտասարդը իւր երազողական ժամերի մէջ, իւր քաղցր ու տխուր զգացողութեան բոպէների մէջ կերպաւորել էր այն էակի մասին, որին կամէր նա նուիրել իւր բոլոր գոյութիւնը, իւր զօրութիւնը, իւր գործականութեան և հոգու բոլորապտուղ կարողութիւնը։

Մի շատ խորհրդաւոր, մեծ ժամանակ է, երբ որ մանկամարդ աղջկայ սիրտը սիրով հանդիպումէ մի երիտասարդի սրտի, մի ժամանակ, որ ունի խոր ազդեցութիւն և վճռողական զօրութիւն երկուքի ապագայ կեանքի համար ևս։ Այս միջոցումն, երբ զգացողութիւնը հասել է իւր ամենաբարձր ծայրին, երբ նոքա հանդէպ միմեանց կանգնած են որպէս երկու երանական մարդկեղէն էակներ, մինը փոխարինելով միւսի սէրը, և այս տեղ, այս տեղ մանաւանդ, մանկամարդ աղջիկը չունի համարձակութիւն թոյլ տալու երիտասարդին և ոչ ամենափոքր բան, որից ապագայումը երկուքը ևս ամաչելու էին։ Պատճառ, այն բոպէին, երբ որ այս ճնշողական զգացողութիւնը թէ պարտաւոր էին գտանվել, մըտանումէ նոցա մէջ, երբ որ աչքը կարող չէր այլևս այնպիսի մաքուր, այնպիսի աղատ և հոգեպայծառ կերպով վեր նայել դէպ ի միւսը, ըսկսեալ այս բոպէից, սէրը ստացել է թոյն և պիտոյ է հիւանդանար. պատճառ, փոխադարձ բարձր յարգութիւնը որ աղջիկը և երիտասարդը կապումէ միմեանց հետ և օր ըստ օրէ աւելի մօտեցնումէ, դա միայն է հիմքը սիրու, այլև այն մաքուր, պարզ և անարատ սրտակցութեան, որ շղթայումէ հոգին հոգու հետ, սիրտը սրտի հետ. Մեք այս տեղ սէր ասելով հասկանում չենք այն հասարակ, անմաքուր ձգտողութիւնը որով թէ աղջիկ և թէ երիտասարդ ապականումէին իւրեանց պատիւը. ոչ. դա պիտոյ է միայն համարվի այն աստուածեղէն աղբիւրը ծայրագոյն երկրաւոր ուրախութիւնների, ամենամաքուր, հոգեղէն բաղդաւորութիւնը որին մարդս կարող էր հասանել աշխարհիս վերայ։

Ընթերցողը անպատշաճ չենք համարում մի քանի խօսք ասել այս տեղ այն հոգեղէն առընչութեան, այն տեսակ տեսակ զգացողութիւնների և ախտերի մասին որ կան աղջկայ և երիտասարդի մէջ. այս

հարկաւոր էր այնքան առաւել, ինչքան որ այս բոլոր յատկութիւնքը և պակասութիւնքը երևումէին մանաւանդ թէ մանկական հասակի սիրու մէջ։

Սովորաբար ընդունումեն, թէ աղջկայ բնաւորութիւնը հակառակ էր երիտասարդի բնաւորութեանը, այսինքն թէ այն բանը, որ սորա մէջ խոշորութիւն է, լինումէ աղջկայ մէջ մեղմութիւն. արդեօք այսպէս է միշտ, և կարելի՞ է առանց բացառութեան ընդունել այդ խօսքը։ Եւ ինչո՞վ է յառաջանում այդ մեղմութիւնը կանացի բնաւորութեան մէջ։ Այս հարցուածներին պատասխանել դժուար է այն պատճառով, որ դեռ ևս ըստ մեծի մասին մի ծածուկ գաղտնիք է թէ ինչպէս էր գոյանում դա. և կրկին դարձեալ հեշտ է այն պատճառով, ըստ որում դորա ապացոյցքը, դորա լիովին ստուգութիւնքը ամենայն օր ունինք մեր աչքի առաջև։

Կնամարդի գեղեցիկ զարդերը են պարկեշտութիւն, հանդարտութիւն և քնքուշ ամթխածութիւն. բայց այս խաղաղ առաքինութիւնքը արտաքսում չեն մի վսեմ բան, որ կեանքի մէջ դուրս է երևում մեծութեամբ և արժանաւորութեամբ. ահա այս վարագուրի քամակումը որ կնոջ իսկական գոյութիւնը քնքշարար ծածկումէ և գեղեցկացնումէ, ազնիւ կանանց մէջ պիտոյ է պահած լինի մի մեծահոգութիւն, մի հոգեկան ամրութիւն. նոցա մէջ քնած է մի իմանալի, վտանգի միջոցներումը այո՛ հրաշալի կերպով զօրացուցիչ կարողութիւն, որ պատրաստ է յանձն առնուլ ամենայն զրկանք, ամենայն անձնազոհութիւն, որ յօժար է ցուցանել ամենայն տեսակ սիրու շնորհ, և նոյն իսկ մարմնաւոր աշխատութիւնների մէջ անվաստակելի է, մինչև նորա ազնիւ սիրտը կը յաղթահարվի գերմարդկային ծանրութիւնից։ Այս հոգեկան մեծութիւնը չէ դուրսից ներս բերած, և արուեստով շինած. դա բնատուր է, դա մի հասարակաց բարիք է բոլոր ազնիւ կանացի սրտերի, և արդէն փառաւոր կերպով բացայայտվումէ փոքրի մէջ։ Անդրդելի հեզամտութեամբ կինը յարդարումէ տղամարդի շաւիղները, ինչքան որ հասանումէ նորա կարողութիւնը. օրհնող ձեռքով ժողովումէ փշերը ճանապարհից և երկիւղ չունի իւր յատուկ ցաւից և արիւնաթաթաւ վէրքերից։ Այո՛ և աւելի մեծ ծանրութիւններ բաց է գլորում նա սիրու կամարդան կարողութեամբ և համբերութեան զօրութեամբ։ Նա չէ պահանջում ոչինչ շնորհակալութիւն, որովհետև այդպիսի գործերի մէջ, ամենեին բաւական է ինքն իւրեան, և անփոյթ առնելով դորանց, պիտոյ է ոչնչացներ իւր կեանքի ամենագեղեցիկ վայելչութիւնը։ Տղամարդի տհաճութեանը հանդիպումէ նա համբերութեամբ, նա գիտէ որ տղամարդի թևերի վերայ էր ամրանում նա, որ իւր գոյութիւնը ազնուա-

նումէր նորա գոյութեան վերայ, և նա յօժարութեամբ ներումէ բարկացող տղամարդին, որովհետև նորա բարկութիւնը վարժումէ իւր հեղամտութիւնը։ Այս հեղամտութեան վերայ ջարդվումէ տղամարդի տրհաճ սիրտը. նորա ցաւը մեղմանումէ կնոջ քաղցր ու տխուր ժպիտովը։ Նորա քաղցր հոգածութիւնը շինումէ նորա համար հայրենիքը թանգագին և կապումէ նորան այն տեղ, երբ որ մի սաստիկ դրդողութիւն, մի փոթորկային ցանկութիւն քարշումէ նորան դէպ ի հեռակայքը։ Այն միջոցին երևումէ նորա գեղեցիկ աստղը իւր ամենագեղեցիկ պայծառութեամբ, այն աստղը որ լուսաւորումէ կնոջ կեանքը. այն տեղ մերկապարանոց յայտնվումէ այն մեղմութիւնը և հեզութիւնը նորա սրտի, երբ որ նա կամի տղամարդը մի բանից հեռի պահել, երբ որ նա կամի դէպ ի ինքը աւելի մօտ քարշել նորան։ Նա լինումէ նորա բարի հրեշտակը վտանգի, փորձութեան ժամերի մէջ. պատճառ, այն հաղարաւոր պատկերների մէջ որ իւր փափուկ սրտումը փայլելով ցոլանումէին, ցուցանումէ նա նորան միշտ նոր և կենդանի այն բարի Աստուածը որ ստեղծումէ աշխարհս և մարդկային կեանքը և մարդերի սիրտը, և պահպանումէ նորան ոտքի վերայ, երբ որ չափազանց յոյսեր սանձարձակ տանումէին նորան, կամ թէ մեծամեծ կորուստներ դղրդումէին նորա սիրտը։

Այսպէս է կինը, այսպէս է ցուցանում իւր անձը մարդկային ազգի միւս մասը, այն գեղեցիկ և ամուր շղթան որ ամուր պահումէ մարդը երկրի վերայ։ Կնոջ հոգու մեծութիւնը և սրտի ամրութիւնը չէ այնպէս քաջալնական, այնպէս կրակոտ, կատաղի և կործանական, ինչպէս տղամարդինը. բայց դորա փոխանակ, է նա աւելի խոր, վճռողական, երբ հարկաւոր էր գործ կատարել, աւելի խելացի և աւելի ապահով կերպով, ոչ այնքան շողշողուն մեծագործութեամբը, որքան քաջութեամբ ընդդիմանալով, ոչ այնքան աշխարհի մեծ հրապարակի մէջ, որքան տնային կեանքի խաղաղ օթևանումը, տնային վշտերի համբերութեամբ, սիրելի մարդերի հիւանդութեան մահճի մօտ, անձնազոհութեամբ նոցա համար, վստահութեամբ դէպ ի նախախնամութիւնը, ապնուամտութեամբ դէպ ի վերաւորիչքը, հաւատարմութեամբ իւր հիմնական կանոններին, յաղթելով իւր կամքին և յանձնելով բոլորը Աստուծոյ տնտեսութեանը։ Նորա լիակատար մեծափառութիւնը ճառագայթումէ Սրտի սրբարանի մէջ և յայտնվումէ միայն երբեմն առանձին երևութների մէջ, որ աւելի քան թէ միւս բաները մեծարելի և պաշտելի են կացուցանում կնոջ պատուականութիւնը։

Այսպէս ահա նեբբորդոմէ կինը։ Ազնիւ կնոջ սիրարժան մեղմութիւնը և հեզամտութիւնը, ի բնէ այն պատճառով այնպէս գեղեցիկ և սիրարժան կերպաւորվել է, որ աւելի բիրտ և կոշտ տղամարդը նորանով

հետ ղՀետէ մաքրվի, աղնուանայ և ընկերական կեանքի համար փափուկ և պիտանի դառնայ։ Դորանով արդարև ցուցանումէ կին մարդը իւր մաքրութիւնը, այն ամենեին կախարդող զօրութիւնը իւր գոյութեան, որ նա կարող է այնպէս անընդիմանալի քաղցրութեամբ դրաւել սիրտը, որ հաղիւ թէ մի տղամարդ պարծենալու էր, թէ երբ և իցէ ընդդիմացած էր դորան։ Այն տղամարդը որի սիրտը մնումէ անգութ այդքան վսեմ և գեղեցիկ բաների առաջև, այն աղամարդը որի սիրտը շարժել չէ մի բուն կանացի զգացողութեան ազդեցութիւն, այդպիսի տղամարդի սիրտը անզգայ է դէպ ի աղնիւ և գեղեցիկ բանը. Նորա սիրտը գատարկ ու անապատ է, և մի այդպիսի տղամարդից որ պարծենումէր թէ ունի ամուր սիրտ, անյաղթելի է, ինչպէս սովորաբար ասումէր, մի այդպիսուց թող փախչի աղջիկ կինը. պատճառ, երբէք կարող չէ պա յուսալ, Նորա սրտի մէջ վառել մի աղնիւ կրակ, կամ թէ փոփոխել և ուղղել Նորան։ Այս դատարկութիւնը Նորա սրտի մէջ հիմնաւորած է մի ատելութեան, մի արհամարհութեան վերայ դէպ ի ամենայն բուն մարդկայինը, դէպ ի ամենայն գեղեցիկ, ամենայն աղնիւ բան, մինչ ծածուկ, ամենապատժելի ցանկութիւններ կրծումեն Նորա սիրտը։ —

Մեղմութիւն, հեզամտութիւն, գնահատութիւն և ճշմարիտ առատութիւն են կնոջ առաւել բարձր և առաւել զմայլեցուցիչ հրապոյրքը, հրապոյրքը որ Նորա գեղեցիկ կազմուածքի ձևակերպութեան մէջ այնքան ևս պայծառ, որչափ Նորա առաւել նուրբ զգացողութիւնների ուղղութեան մէջ բացայայտվումեն։ բայց դորանց աւելի կարելի էր զգալ և խմանալ քան թէ նկարագրել և արտասանել։ Կործանվելու էր այն բոլոր նուրբ և աղնիւ գոյութիւնը, եթէ խլէինք Նորանից այն խաղաղաւէտ մեղմութիւնը, այն կակղութիւնը և բարեսրտութիւնը, այն դալարութիւնը և քաղցրութիւնը բնաւորութեան, որով կինը լինումէ այն բարերար, հեզահամբոյր բարեկամը տղամարդի և նոյն միջոցին Նորա մըտերիմ սրտակիցը։ Սոքա են այն ծածուկ, զարմանալի գծագրութիւնքը կանացի հոգու, և այս պատճառով ահա վերջանումէ կինը լինել կին, եթէ պակաս էին Նորան այդ դալարութիւնը և քաղցրութիւնը բնաւորութեան. և թէ դոցա վերայ էին հիմնած կնոջ ամենապատուական յատկութիւնքը, տեսանումենք այն բանից, որ դարձեալ տղամարդը վերջանումէ լինել տղամարդ, եթէ ունի նա այդ բուն կանացի յատկանշանքը։

Մի ապացուցած բան է, որ կնոջ հեզահոգութիւնը և հաւատարիմ անձնանուիրութիւնը միակ անտարակուսելի և գովանի հնարն է, որով տղամարդը կարող էր սիրողապէս և յօժարութեամբ հպատակ կացուցանել իւր անձը, և այդ հնարը ազդումէ այնքան ևս սաստիկ, ինչ-

քան աւելի քնքշութեամբ դուրս է երևում, և սորան ասումեն ԲԸ-ՆՈՒԹԻՒՆ «էրոս»։ Այս մտքով կարելի է ճշմարիտ համարել այն խօսքը, թէ «կինը իշխում է, եթէ կամի, տղամարդը եթէ կարող է։» Դորանից կարելի է, եթէ աւելի սուր աչքով նկատենք տղամարդը, ածանցել և այսպիսի կանոն. թող կինը իշխէ, բայց տղամարդը կառավարէ։ Իշխանութեան մէջ կայ միայն բնութիւն, կառավարութեան մէջ և բանականութիւն։ Եւ երբ որ տղամարդի ու կնոջ միաւորվելովը և բաղկացնելովը մի անձն, ամեն մի առանձնականի մէջ յառաջանում բանականութեան և զգայականութեան միաւորութիւն, ապա, երկու ամուսինքը միմեանց մօտ դրած, երևում տղամարդս որպէս բանականութեան փոխանորդ, և կինը որպէս զգայականութեան օրինակ։ Զգայականութիւնը թող հետևելով բնութեան կամքին ստորադրվի, բայց բանականութիւնը հետևելով բնութեան կարգին կարող է միայն հասկանալի լինել զգայականութեան մէջ։ Այս պատճառով ահա, ներքին միաւորութիւնը տղամարդի և կնոջ, շինում միայն երկուսին կատարեալ մարդ։

Կինը, եթէ զգում հարաղատաբար, չգիտէ ոչ մի աւելի բարձր կարիք, քան թէ սէրը, և որովհետև այդ կարիքը կարող է միայն լցուցանել տղամարդը, այդ պատճառով նորա ձգտողութիւնը ուղղեցուցած է միշտ դէպ ի տղամարդը. կինը միշտ դարձուցանում իւր անձը իւրանից և իւր բոլոր սեռից դէպ ի տղամարդը, ուրեմն նա անդադար դուրս է երթում ինքը իւրանից։ Աւելի սաստիկ է այս բանը տղամարդի մէջ, բայց նորա մէջ չէ այնքան կարիք։ Նա երբեմն դարձեալ վերադառնում դէպ ի տղամարդների սեռը, և արդարև կարող էր նա որպէս մի աստուած, ինքնաբաւական կերպով սիգաճեմել (փարթամ ման գալ) և անձնահաճոյաբար նկատել ամենայն բան, ինչ որ արած էր իւր ձեռքով, եթէ կրկին դարձեալ քաղցր հայեացքով չերևէր նորան կինը որպէս նորա մանկութեան խաղակիցը և նորա կեանքի ճանապարհակիցը. եթէ այդ հայեացքը հեռի դուրս ձգտող տղամարդուն յետ չքարշէր դէպ ի ընտանեկան կեանքի օթևանը։

Ուրեմն միշտ մնում կինը այն բանը, որ իբրև մի արծաթի թել կապում տղամարդս արարչագործութեան հետ. միշտ մնում կինը այն բանը որ շինում նորա կեանքի լրացուցիչ մասը և տալիս է նորան ճանաչել իւր կոչումը որպէս երկրաքաղաքի։ Ուրեմն ինչքան դժուար է մի աղջկայ դրութիւն մանաւանդ այն միջոցին, երբ զարթել է նորա մէջ իմացողութիւնը և մի ներքին սուրբ ձայն քարոզում նորա անձը որպէս մշանջենաւոր հսկող այս իմացողութեան վերայ։

Թեոդորոս Լալաղարեանց։

ՄԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆ.

ԱԶՆԻՒ ՍԻՐԵԼԻ։

Ընդեալ Մայիսի 25 թուականից արձակած յարգելի նամակդ ստացայ անկորուստ, և շտապումմ կատարումն տալ ձեր գեղեցիկ բարեկամական խնդրին, որ ուղարկէի ձեզ մի քանի հաւաքածոյ ընտիր խորհած և ընտիր գրած մտքեր որ կարելի էր գործ դնել որպէս ընծայելի բարեկամական յիշատակարանք այնպիսի միջոցներում, երբ սիրելի մարդիկ աշխարհի զանազան դիպուածներով ստիպուած էին հրաժարվիլ միմեանցից և կամէին կեանքի զանազան բոլէներում նորոգել իւրեանց սրտի մէջ բարեկամների քաղցր յիշատակը։ Դուք յատկապէս յիշած էիք ձեր նամակում, թէ այս սովորութիւնը կրթեալ ազգերի մէջ, այսինքն սակաւատող գրաւոր յիշատակ տալը միմեանց, բարեկամների կողմից, գտել է ձեր հաւանութիւնը, և նոյն սովորութիւնը ցանկալի էր ձեզ ընտանի կացուցանել մեր Հայերի մէջ։ Մեծապէս ուրախանալու էի, եթէ իմ փոքրիկ աշխատութիւնս որքան և իցէ ձեռնտու լինէր ձեր աղնիւ դիտաւորութեանը։

Ազնիւ Սիրելի,
յարգութեամբ

Ձեր պարտապան Ս. Նաղաշեանց։

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ.

Եթէ այն գեղեցիկ ժամերը վաղուց անհետացել են, յիշողութիւնը միշտ և հանապազ պահումէ նորանց իւր դոգումը գրկախառնած։

Մի փոքրիկ այգի տնկել եմ ինձ, անթառամ, սիրելի ծաղիկների համար. սա մինչև օրերի վերջը պիտի պահէ իմ համար յիշատակի քաղցրութիւնքը։ Եւ ամեն մարդուց որ յարգելի է իմ սրտին, խընդրումեմ բաշխել ինձ մի ճիւղ տնկելու իմ խաղաղ փոքրիկ այգու մէջ, որ պատրաստումէ ինձ այդքան ուրախութիւն։ Բարեկամութիւնը է այն խաղաղ լոյսը, որ կամենումէ իւր հոգածութեամբ աճեցուցանել ծաղիկները. և ինչ որ տնկած էր նորա այգու մէջ, փայլումէ որպէս մի նաղելի ինձմիմոռացիկ։

Դու կամենումես ինձանից մի խօսք այս թերթի վերայ. ոչ աւելի և ոչ փոքր։ Մի խօսք հերիք չէ ինձ. ինձ շատ սիրելի են գեղեցիկ երեխայքը. յօժարութեամբ դնումեմ այս խօսքերս. «Ես սիրումեմ քեզ։»

Եթէ մի օր, գուցէ թէ ոչ շատ դարուններից յետոյ, մի ազնիւ սէր առաջնորդվելով առաքինութեան ձեռքից, մրտենի պսակով զարդարէ քո ոսկի մազերը. այնուհետև թող այս թերթը համեստութեամբ յիշեցնէ քեզ, թէ ամենաքաղցր վայելքի մէջ ևս, սիրու անխառն ուրախութիւնների մէջ ևս պիտոյ չէ մոռանալ իւր բարեկամքը։

Ամեն մի այժմ ունի թռչող թևեր. Յիշողութիւնը ունի ձեռքին դորա սանձը։ Ամեն մի բոպէ փախչումէ շտապով, բայց քաղցր յիշատակը մնումէ։

Տեսակ տեսակ ծաղկումէ երանութեան ծաղիկը, քաղցր յիշողութեան խաղացող պատկերը։ Եւ քաղցր է ցաւը քնքուշ սրտերի համար. նոյն իսկ վշտի դառնացայտ բաժակի մէջ, հրաժարման ժամուն, խառնումէ քաղցր տրտմութեան շունչը մի վշտալից երանութեան վայելք։

Եթէ երեկեան օրը պարզ ու պայծառ դրած է առաջիդ, եթէ այսօր ներգործումես դու ազդու և աղատ. ապա կարող ես յուսալ մի առաւօտ, որ չէր պակաս երջանկութիւն պարգևող։

Գործական կեանքի աղմկի մէջ, մեր հոգու մի կերպարանքը անդադար հալածումէ միւսը, և մեր գոյութեան բազմօրինակութիւնը չէ այս տեղ միշտ մեր վաստակը։ Բայց այնքան ևս աւելի հաւատարմութեամբ պարզ և միշտ ինքն իւրեան հաւասար ընութիւնը պահումէ մեր շրջակայքում այն զգացողութիւնքը որոնց խորհրդապահը շինումենք մեք նորան, և նորա մշտնջենաւորութեան մէջ միշտ վերստին գտանումենք մեր միութիւնը։

Խարեկամ, մի յուսար և մի վախիր ոչինչ բանից բորբոքված սրտով, և դու լինելու ես երջանիկ, այնքան երջանիկ, ինչքան կարող է մարդս. պատճառ, մի անփոփոխելի և անխառով բաղդաւորութիւն, որ նոյն իսկ նախանձը յարգումէր մեծարանքով, ոչ մի մարդ գտանում չէ աշխարհիս մէջ։

Աշխարհը, որ պարտական է քեզ իւր գոյութիւնը, բռնումէ քեզ, քանի որ դու կաս, փաթաթված քո վզին։ Եւ նա, երբ որ դու փոխվելիր դէպ ի մի այլ կեանք, գրկախառնելու է քո յիշատակը։

Ալոկոտ մտածութիւնք, աչ ու դողի մէջ տարուբերութիւնք, երկիւղոտ լաջք, կանացի ողբ ու սուգ չէ դարձուցանելու ոչինչ թշուառութիւն, չէ շինելու քեզ ազատ։ Բոլոր բռնութիւնների ընդդէմ պահպանել իւր անձը, երբէք չխոնարհեցնել իւր անձը, միշտ զօրաւոր ցոյց տալ իւրեան, ահա սոքա են, որ մնա են քարշումաստուածների բազուկը և նոցա օգնող պաշտպանութիւնը։

Պատաղանները ջաղջախվումեն, զէնքը ժանգոտվումէն, քաջ տըղամարդի բազուկը փտումէ, բայց ինչ որ գրած է հոգու մէջ, յաւիտենական է։

Յոյսերը են գոյներ, կոտրատած ճառագայթներ և արտասուքների որդիք. ճշմարտութիւնը է արեգակ։

Խարեկամ, այս երկրաւոր թագաւորութիւնս մի երազական թագաւորութիւն է։ Թէ ինչ էինք մեք և միանգամ ինչ պիտի լինինք, ոչ ոք չգիտէ։ Երջանիկ ենք մեք լինելով կոյր. բայց թող ճանաչենք մի բան. այսինքն թէ ինչ ենք մեք։

Երկբպատիկ է ժամանակի ընթացքը. դանդաղութեամբ քայլելով հասանումէ գալոցը, նետի պէս արագ փախչումէ այժմն. միշտ դադարուն կանգնած է անցածը։

Խարեկամութիւնը ընթացակից է ճանապարհորդին կեանքի միջով. նա մխիթարելով կանգնած է ճանապարհորդի կողքին, և նա երթումէ նորա քամակից մինչև ի խաւար օթևանը։

Փուխր ու թեթև ծածկումէ հողի ակօսը ոսկեղէն սերմը, ով պատուական դու. աւելի խոր ակօսը վերջումը ծածկումէ քո հանդստացած ոսկերքը. ուրախութեամբ հերկիր ու սերմանիր։ Այս տեղ ծլումէ մի կենդանի սնունդ, և յոյսը բաժանվում չէ գերեզմանից էս։

Ամենայն բան կարող է յեղափոխվիլ. թող մնայլ ճակատագիրը բերէ ինչ որ կամի. դու քաջ կաց ամենասահուն շաւղի վերայ, թող թուլասիրտներին ահ ու դողի մէջ անյոյս լինել։ Ով որ պատերազմումէ մի վերին բանի համար, պիտոյ է վստահանայ, թէև այդ տեղ լինէր բանը կեանքի ու մահու մէջ։ Թող ալիքները որոտային ջարդեն ու փշրեն միմեանց, միայն թէ մնա դու միշտ ինքդ նաւավար, թէ կը հասանէիր ցամաքին և թէ կը լինէիր նաւաբեկ։

Ուրախութիւնը վերածաղկումէ վշտի ու կարօտութեան մէջ. նորան միայն, որ իմացել է ամենամեծ ցաւը, պարգևումէ բաղդը և ամենամեծ խնդութիւնը։

Քաջ հոգին միայն, պատերազմելով ստանումէ կեանք և ազատութիւն։ Քաջ հոգին միայն, պատերազմելով ստանումէ բաղդ, աշխարհ, իրաւունք։

Ով որ միանգամ պարզ ու պայծառ հասկացել է բոլոր երկրաւոր բաներին փոփոխականութիւնը, նա գիտէ, որ այն մարդը միայն ապահովապէս երջանիկ է, որ առանց կերպաւորելու իւր մէջ այսպիսի կամայն-

պիտի պատկեր ապաղայի մասին, ներկայ բոպէից քաղումէ ամենայն բան, որ կարող էր տալ իւր ընկերին. և թէ աներկբայ նա էր իմաստունը, որ առանց իւր յոյսը դնելու յաջողութիւնների վերայ, ամենայն ժամ լցուցանումէ այն բանը, որ հրամայումեն նորան պարտականութիւն և խրախճմտանք։

Մի մեր դու մածուած (կպած) գետնի վերայ. վեր կացիր տեղիցդ և դուրս դնա. գլուխդ ու ձեռքդ, կարողութեամբը ղուարթ, ամենայն տեղ քո տանն են։ Ինչ տեղ մեք վայելումենք արևի լոյսը, ազատ ենք և ամենայն հոգսերից. որ այդ լուսովը ցանուցիր առնէիք մեր հոգսերը, այդ պատճառով այնքան ընդարձակ է աշխարհս։

Իմաստունի ճշմարիտ երջանկութիւնը տեղի վերայ չէ. ամենայն տեղ կարող է նա բարի ներդործել և ամենայն տեղ գոհ և երջանիկ լինել. պատճառ, նորա ճշմարիտ ուրախութիւնը բղխումէ ոչ թէ նորանից դուրս, այլ աղբերանումէ նորա սրտի մէջ։

Եթէ մի գեղեցիկ սիրտ գտել է իւր համար մի օթևան, այնուհետև հանդարտութեամբ դործելով շինումէ ինքը իւր համար մի աշխարհ. ինչպէս ծառը իւր արմատների զօրութեամբ գրկախառնումէ հողը և ամրապէս շղթայվումէ նորա հետ, նոյնպէս ազնիւ և պատուական սիրտը իւր գործերով ոլորվումէ և փաթաթվումէ կեանքի վերայ։ Սիրով կցվումեն սիրու քնքուշ կապերը. ուր բաղդաւորված է մարդս, այն տեղ է և իւր հայրենիքում։

Ճշմարիտ բաւականութիւնը չէ հարկաւորութեան գործ, ոչ պատահման պարգև, ոչ անմիտ, թեթևաբարոյ կամ չար և արատաւոր մարդու սեփականութիւն. նա է պտուղը շատ մտածութեան և շատ վարժութեան, պտուղը խաղաղ, ազնիւ և մեր բոլոր մտածութիւնների և զգացողութիւնների հետ զուգահիւսած արմատական կանոնների. պտուղը իմաստութեան, առաքինութեան, երկիւղածութեան, մի պտուղ որ ոչ իսկոյն հասանումէ կատարելապէս, այլ միայն առ փոքր փոքր, և բաղմախնամ սպասաւորութեամբ և հոգողութեամբ։ Բաւականութիւնը է մի բան, որ պիտոյ է ուսանվի, որ և կարող չէ առանց մեծ ուշադրութեան, մտածութեան և վարժութեան ուսանվիլ։

Աստուծոյ ձեռքումն եմ ես, և հանգստանումեմ նորա գոգումը. նորա հանդէպ զգումեմ ինձ փոքր, նորա մէջ զգումեմ ինձ մեծ։

Թշնամի և ատելի ամենայն կեղծաւոր երևութի, եղիր դու ամեն աչքի համար, ինչ որ դու ես իսկութեամբ. պիտոյ է ամենների աչքում լինել այնպէս, ինչպէս մարդս Աստուծոյ աչքումն է։

Ոչինչ խօսքեր, բայց շատ գործեր. ահա՛ ճանապարհը շատ շոյտ հասանելու իւր նպատակին։

Յաղթութեան պսակը ստանալու համար, պիտոյ չէ քեզ կանգնել և գլուխդ քորել։

Այն մեծ բանը, այն աստուածեղէն բանը որ դու կրումես քո հոգու մէջ և սիրումես օտարի մէջ, մի որոնիր ոչ երթերական բարձրութեան և ոչ երկրաւոր ցածութեան մէջ։ Բոլոր ընդարձակ տիեզերքը, բոլոր երանաւէտ դրախտը և նոյն ինքն աստուած, ոչինչ տեղ երևում չեն քեզ, եթէ ոչ քո յատուկ սրտի մէջ։

Մարդիկ չափից դուրս սակաւապէտ լինելով, որոնումեն անմահութիւնը ժամանակից յետոյ միայն, փոխանակ որոնելու նորան ժամանակի մէջ և ժամանակի վերայ։ Ժամանակաւոր աշխարհի այն կողմումը դրած է նոցա համար աստուածութիւնը, և տեսանել ու փառաբանել աստուածութիւնը մահուց յետոյ, մշտապէս ազատումէ մարդս ժամանակի սահմաններից։ Բայց այժմ արդէն շրջումէ Աստուծոյ հոգին ժամանակի վերայ, և այդպիսի աստուածանկատութիւնը է մշտնջենաւորութիւն և անմահ երգասացութիւնների երկնային վայելչութիւն։ Ուրեմն, սկսիր դու քո յաւիտենական կեանքը այժմ իսկ, միշտ քննելով քո անձը։ Հոգածու մի լինիր այն բանի համար, որ գալոցն է, լաց մի լինիր նորա վերայ, որ անցաւոր է, բայց հոգս ունեցիր, որ չկորուսանես ինքդ քեզ, և լա՛ց եղիր, եթէ դու ժամանակի հոսանքի մէջ առվէիր և տարվէիր, առանց կրելու քո մէջ երկինքը։

Առաքինութիւնը չէ մի զատարկ հնչիւն. մարդս կարող է լցուցանել դորան իւր կեանքի մէջ։ Թող նա ամենայն բանի մէջ շեղվի և գլորվի, բայց կարող է ձգտել դէպ ի աստուածեղէնը։ Եւ ինչ որ տեսանում չէ իմաստունի իմաստութիւնը, այդ բանը լցուցանումէ պարզմտութեամբ մի տղայական սիրտ։

Առաքինութիւնը այնքան ևս դժուար վարձատրելի է, ինչքան ուրախութիւնը. մի միայն տեղողականութիւնը է նորա միայնակ վարձատրութիւնը։ Այո՛, մեք չկամենինք և ոչ յաւիտենականութիւնը որպէս վարձատրութիւն առաքինութեան, այլ միայն, որ կարողանայինք տեղական կացուցանել առաքինութիւնը։

Առաքինութիւնը պիտոյ է զուգակշիռ համարել կեանքին. կատարելութիւնը է առաքինութեան պսակը. նորա նպատակը անմահութիւն։

Ի՜նչքան մեծ էր մեր առաքինութիւնը, եթէ լցուցանելով նորան, խորտակվումէր մեր սիրտը։

Ով որ նեղսիրտ հոգածութեամբ հարցուխնդիր է առնում, թէ առաքինութիւնը օրքան վարձատրութիւն հասուցանելու էր, նա երբէք սիրել չէ նորան բուն և հարազատ շարժառիթներով։ Ով որ ամէն մի բարերարութեան փոխարէն կամենում դարձեալ մի բարերարութիւն վայելել, նա դեռ ևս հասած չէ այն բարոյական բարձրութեանը, ուր միայն վերահասու է լինում մարդս, թէ առաքինութիւնը ինքն իւր համար վարձատրութիւն է, թէ բարոյական ղօրութիւնների գործադրութիւնը մի ճշմարիտ երանութիւն է հոգու համար, և թէ պատերազմը, անձնազսպութիւնը և անձնազոհութիւնը կարող չէր աւելի լաւ վարձատրվիլ, քան թէ այսպիսի հանդէսներում յաղթող գտանվելով։

Առաքինութիւնը դժուարութեամբ է միայն լցուցանվում բաղդաւորութեան մէջ. վատաբաղդութիւնը, ահա սա է այն հողը որի վերայ կարող է հասանել աղնիւ բանը. սա է այն կլիման, որի մէջ կարող է գոյանալ մարդկային մեծութիւն։

Վաստակաւորութիւնը պահանջում միշտ աշխատասիրութիւն. լոկ մտահայեցութեամբ այնքան դժուար է վաստակ վաստակել, ինչքան կարող էր հարստանալ մի մարդ, որ նստած էր մի սարի վերայ, որի խորքի մէջ գտանվում էին ոսկու երակներ։

Մարդս պիտոյ է ունենայ իւր աչքի առաջև կամ մեծ մարդիկ կամ թէ մեծ նպատակներ. ապա թէ ոչ, կը չքանան նորա ղօրութիւնքը, ինչպէս չքանում մագնիսի ղօրութիւնքը, եթէ երկար ժամանակ ղըրած չէր դէպ ի պատշաճաւոր աշխարհանկիւնքը։

Արդարև քաղցր բան է ղբաղել ինքը իւրեանով, միայն թէ լինէր դա օգտակար. մարդս ուսանում չէ ներքուստ ճանաչել իւր սրտի խորքը. պատճառ, նա չափում իւր անձը իւր սեփական չափով, երբեմն շատ նեղ, երբեմն ավելս որ շատ լայն։ Մարդս իւր անձը ճանաչում միայն իւր ընկերի մէջ։ Կենակցութիւնը միայն ուսուցանում մարդուս թէ ինչ էր նա։

Պատուղներ բերում կեանքը մարդուս. բայց փոքը է պատահում, որ դոքա կարմիր ու շողշողուն կախվէին ճիւղի վերայ, որպէս մի խընձոր ողջունում մեզ։

Դիպուածը. ինչ բան է դա, եթէ ոչ մի կոպիտ քար, որ կեանք է ստանում ճարտարապետի ձեռքի տակ. դիպուածը տալիս է նախախնամութիւնը — բայց դէպ ի խորհուրդ յեղափոխել նորան, պարտական է մարդը։

Ով որ երկիրը կորուսել է, թող վեր նայի դէպ ի երկինք. ով որ

ձեռք է բերել երկիրը, թող դարձեալ ուղղէ աչքը դէպ ի երկինք. սա բժշկումէ թէ արիւնաշաղախ և թէ խռոված սիրտը։

Թող հանդիպի ինձ ոչ այն բանը որ ես կամիմ, այլ որ փրկաւէտ է ինձ. տղամարդին վայել է հաստատութեամբ տանել բաղդի բերուածքին։

Նա միայն ունի իւր ձեռքում իմաստութեան յաւերժահարսունքը, որ կրումէ նորանց իւր տաք ծոցի մէջ։ Վանդալի (կոպիտ ու խոշոր մարդու) համար քար են նոքա։

Ողևորութիւնը և զգաստութիւնը են կեանքի երկու բևեռքը (շարժակէտքը)։

Սիրելի է անմեղութիւնը, և սէրը գեղեցիկ է, բայց ամենագեղեցիկ է, երբ որ մի մաքուր սրտի հետ միաւորվումէ ողևորութեան ջերմութիւնը։

Աստուածեղէն վարք ունենալ, այս է ահա ճշմարիտ աստուածպաշտութիւնը։

Աստուծոյ օրէնքը կատարելը այն է, որ դու յօժարութեամբ և սիրով կատարէիր քո գործը, և ազատութեամբ, առանց օրէնքի ստիպանքի վարէիր մի աստուածեղէն և բարի կեանք, որպէս թէ ոչ օրէնք կար և ոչ պատիժ։

Պայծառութեան մէջ միայն կարելի է պաշտել Աստուած։ Ամենաբարձրեալ էակը որ բնակումէ լուսի մէջ, սիրումէ մի լուսաւոր միտք և մի խելացի սիրտ։

Բարոյական զգացողութեանը հնազանդվել է ներկայ բոպէիս պարտականութիւնը — բայց նորան ուղղել և աղնուացնել, է բոլոր կեանքի պարտականութիւնը։

Սէր առանց իմաստութեան, չունի մեծ արժէք. փոքր է պատահումի, որ դա հասանէր իւր նպատակին։ Հոգու մէջ լոյս, սրտի մէջ ջերմութիւն, է այն բանը, որ յառաջացնումէ բարի մարդու ամենալաւ գործը։

Ինքնամտածութիւնը է որոնել ամենավերին փորձաքարը ճշմարտութեան իւր մէջ, իւր սեփականութեան մէջ. և այն կանոնը, ամենայն ժամանակ ինքը մտածել, է լուսաւորութիւնը. նորա առածը այսպէս է. վստահացիր գործ դնել քո յատուկ խելքը։

Ոչ թէ ճշմարտութիւնը որ մի մարդ ունի կամ թէ կարծումէր թէ ունի, այլ այն արդարամիտ աշխատութիւնը որ նա գործ է դրել վերահասու լինելու ճշմարտութեանը, սահմանումէ մարդուս արժանաւորութիւնը։ Պատճառ, ոչ թէ ճշմարտութիւնը ունենալով, այլ հետաքրքրութիւնը։

նելով նորան, ընդարձակվումն մարդուս զօրութիւնքը, և սորա մէջ է նորա կատարելութեան հետ զհետէ աճեցողութիւնը։ Ունենալը շինում է հանգիստ, ծոյլ, հպարտ։

Եթէ Աստուած իւր աջ ձեռքում փակած պահէր ամենայն ճըշմարտութիւն և իւր ձախ ձեռքումը այն միշտ կենդանի ձգտողութիւնը միայն դէպ ի ճշմարտութիւն, թէպէտ և այսպիսի յաւելուածով։ «Դու միշտ և յաւիտեան սխալվելու ես» և ասէր ինձ. «ընտրիր այս երկուքից, որը կամիս» այնուհետև ես խոնարհամիտ սրտով կը բռնէի նորա ձախ ձեռքը և կ'ասէի. Հայր, տո՛ւր ինձ. բուն ճշմարտութիւնը պատկանում քեզ միայն։

Մարդուն արժան է ունենալ ազատութիւն, իւր մտածութիւնքը, իւր տարակոյսները որ կարող չէր ինքն իւր համար լուծանել, հրապարակի մէջ դուրս բերել և դատողութեան տակ ձգել, առանց այդ պատճառով բամբասվելու, թէ մի անհանգիստ և վտանգաւոր քաղաքացի էր։ Այս բանը դրած է արդէն մարդկային բանականութեան սկզբնական իրաւունքի մէջ, որ չէ ընդունում միւս դատաւոր իւր վերայ, եթէ ոչ դարձեալ ընդհանուր մարդկային բանականութիւնը, որի մէջ ամեն մարդ ունի իւր դատողութիւնը. և որովհետև սորանից պիտոյ է յառաջանայ ամենայն ուղղագործութիւն որին ընդունակ է մեր վիճակը, այս պատճառով մի այդպիսի իրաւունք սուրբ է և չկար համարձակութիւն կրճատել դորան։

1859 ԹՎԻՆԿԱՆԻ ՀԻՍԻՍԱՓԱՅԼԻ

ՐԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ։

—

1. Սրբազնակատար Կաթողիկոս ամենայն Հայոց, ՏԷՐ ՄԱՏԹԷՈՍ։
2. Վիճակաւոր Արքեպիսկոպոս Հաշտարխանու. ՏԷՐ ՄԱՏԹԷՈՍ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԷՋ։

3. Վրաստայլ Պարոն, գաղտնի խորհրդական, Խաչատուր Լազարեանց։
4. Եփրեմ Վարդապետ Սաֆարեան, Ասպետ։
5. Մկրտիչ Սանասարեան։
6. Կարապետ Եղեան, Մագիստրոս ասիական լեզուագիտութեան։
7. Նիկողայոս Շանշիեան։
8. Մովսէս Բուդաղեան։
9. Յարութիւն Աջեմեան։
10. Յարութիւն Սարգսեան։
11. Վերոբէ Պատկանեան։
12. Մերզա Պետրոս Մելիք Մինասեան։
13. Ղազարոս Խաֆաֆեան։
14. Կարապետ Քալանթարեան։

ՄՈՍԿՎԱՅԻ ՄԷՋ։

15. Լազարեանց Լիցէոն Արևելեան լեզուների։
16. Միքայէլ Ստեփանեանց։
17. Ստուդենտ Իզմիրեանց։
18. Մարտիրոս Շահմուրադեանց։
19. Ալէքսանդր Բորիսեան։
20. Յովսէփ Անանեան։
21. Յակոբ Միքէլեան։
22. Յարութիւն Մանուէլեան։
23. Աստուածատուր Բօղդանեան։
24. Յարութիւն Քուրդեան։
25. Մելքոն Փանիեան։
26. Աստուածատուր Բուրջալեան։
27. Սադդա Աղէքսանդրեան։
28. Ղազարոս Օսմանցեան։
29. Գրիգոր Բէգլարեան։
30. Ալէքսանդր Դուլգարեան։
31. Յովհաննէս Լոռիս-Մելիքեան։
32. Նիկոլ Մարգարեան։
33. Մինաս Արասխանեան։
34. Խարսեղ Քէթիսուդեան։
35. Պետրոս Շագինեան։
36. Գրիգոր Տէր Մկրտիչեան։
37. Կարապետ Սաղբատեան։
38. Յարութիւն Միրիմանեան։

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՄԷՋ։

39. Ռժիշկ Լեոն Աբրահամեան,
40. Դանիէլ Կարաքաշեան,
41. Թէոդորոս Խաղամեան,
42. Սիմէոն Մօրոզեան,
43. Կարապետ Հայրապետեան,
44. Սերովբէ Զորչոպեան,
45. Վերոբէ Զորչոպեան,
46. Աստուածատուր Խրալեան,
47. Սաղաթիէլ Քայալեան,
48. Յակոբ Խըլըջեան,
49. Թադդէոս Քօլլէ-Շահինեան,
50. Քրիստոստուր Սաղբրեան,
51. Մատթէոս Երէցփոխեան,
52. Գրիգոր Սալտիկեան,
53. Եղիա Շահինեան,
54. Պետրոս Սախատվեան,
55. Մանուէլ Պոպովեան,
56. Լուսպարոն Սալտիկեան,

Աշխատանք։ Կարգի վաստակ. ա Կարգի վաստ. բ Կարգի վաստ.

57. Մանուկ Տրապզոնցեան,
58. Անդրէաս Տիտրեան,
59. Մելքոն Փիլիկեան,
60. Մանուկ Զօլոտարեան,
61. Աւագ Աւագեան,
62. Պետրոս Զուգայեան,
63. Կարապետ Զուգայեան,
64. Մարտիրոս Քեմիրչեան,
65. Յարութիւն Յարութիւնեան,
66. Դրիստոստուր Քիստեան,
67. Նիկոլայոս Աջեմեան,
68. Գրիգոր Զերեպիշնիկեան,
69. Կարապետ Զերնոմորցեան,
70. Գաբրիէլ Մելքոնեան,
71. Եղիազար Բարասինեան,
72. Մկրտիչ Խոճայեանց,
73. Յակոբ Հալլաջեան,
74. Մարտիրոս Բարասինեան,
75. Մարտիրոս Բրիլիանտշչիկեան,
76. Մարտիրոս Քուշնարեան,
77. Յարութիւն Շորբարոնեան
78. Յովհաննէս Զուպարեան,
79. Մկրտիչ Քայալեան,
80. Մինաս Բրիլիանտշչիկեան
81. Մերկեան Պոպովեան,
82. Յակոբ Ալէքսանեան,
83. Խաչուկ Տիտրեան,
84. Եղիա Բայեան,
85. Զարիաս Խրջիեան,
86. Գալուստ Գեոգչեան,
87. Սարգիս Սարիեան,
88. Ստեփանոս Թուսուղեան,
89. Լուսեղէն Շապոշնիկեան,
90. Յովհաննէս Մահտեսեան,
91. Լազարոս Բալարանեան,
92. Պօղոս Հիւանդեան,
93. Պօղոս Նալբրեան,
94. Աստուածատուր Զարիրասեան,
95. Լուսարոն Գրիգորչկեան,
96. Կարապետ Զորչորիեան,
97. Ղազար Զերբէսեան,
98. Կարապետ Միսեսերեան,

Երբորդ կարգի վարձակալներ։

ՏԱԳԱՆՐՕԳԻ ՄԷՋ։

99. Խաչատուր Քաստանայեան։

ԳԻՈՐԳԵՎԱՍԻ ՄԷՋ։

100. Յովհաննէս Խաչէղեան։
101. Բաղդասար Խոճայեանց։
102. Տէր Սարգիս Պօղոսեանց։

ԲԱԽՄՈՒՏԻ ՄԷՋ։

103. Գէորգ Մարութայեանց։

ԽԱՐԿՈՎԻ ՄԷՋ։

104. Կարապետ Արդարեանց։

ՀԱՇՏԱՐԽԱՆՈՒ ՄԷՋ։

105. Կոլէժսկիյ Ասեսոր Մկրտիչ Սարգսեան։
106. Յովհաննէս Գրանդուլեան։
107. Մկրտիչ Ուգլեան։
108. Գրիգոր Կաղաչկեան։
109. Յարութիւն Բահրեան։
110. Յովհաննէս Կալլէեան։
111. Աբրահամ Պասիովեան։
112. Պետրոս Թամամշեանց։
113. Յովհաննէս Բուգաղեան։
114. Խաչատուր Սարգսեան, ժառանգական պատուաւոր քաղաքացի։
115. Ամբակում Բուրջալեան։
116. Տէր Յովսէփ Բունեաթեան։
117. Գրիգոր Կաղաչկեան։
118. Յովհաննէս Սայաթեան։
119. Սարգիս և Կարապետ Աղամջանեանք։
120. Ստեփանոս Ջանումեան։
121. Սիմէոն Քուրդեան։
122. Դաւիթ Լէոնասեան։
123. Կարապետ Զիրիկեան։
124. Յովհաննէս Հախվերդեան։
125. Յովհաննէս Բալասանեան։
126. Կոլէժսկիյ Սեկրետար Միքայէլ Էգիլեանեան։
127. Աստուածատուր Յովսէփեան։
128. Կարապետ Ամանասեան։
129. Յակոբ Խարմաջեան։
130. Մկրտիչ Հայրապետեան։

131. Գաբրիէլ Ուլուխանեան։

ՄՈԶԴՈԿԻ ՄԻՋ։

132. Յակոբ Ուլուխանեան, ժառանգական պատուաւոր քաղաքացի։

ՂԶԼԱՐԻ ՄԻՋ։

133. Աստուածատուր Այվազեան։
134. Ամբարձում Գաբրիկեան։
135. Յովհաննէս Քուչուբէգեան։
136. Սարգիս Բէժանեան։
137. Սարգիս Սարգսեան։
138. Յովհաննէս Սվեշնիկեան։
139. Մկրտիչ Ղարիբեան։
140. Յովհաննէս Փիտոյեան։
141. Ընդրեաս Փառակեցեան։
142.
143. Երեք եղբարք Իզմիրեանք։
144.
145. Խաչատուր Անանեան։
146. Դաւիթ Մաղավզեցեան։
147. Ղ. Լոնդ Վարդեան։
148. Տիկին Կատարինէ Ղուրաբեան
149. Յակոբ Գրիգորեան։
150. Տիկին Եղիսաբէթ Ազարաբեան
151. Յարութիւն Եովեան։
152. Յովհաննէս Վարգանեան։
153. Մկրտիչ Մէհրաբեան։
154. Եղիա Աֆթանդիլեան։
155. Գերսէս Աֆթանդիլեան։
156. Մկրտիչ Սերեբրեակեան։
157. Պօղոս Անանեան։
158. Յարութիւն Պոպովեան։
159. Յոհանոս Թամամշեան։
160. Գրիգոր Բուրջալեան։
161. Սիմէոն Սերեբրեակեան։
162. Գրիգոր Փիտոյեան։
163. Ամբարձում Բերոյեան։
164. Գրիգոր Սուլթանեան։
165. Մարտիրոս Սվեշնիկեան։
166. Ն. Մ. Մուղուսիեան։

ԵԿԱՏԵՐԻՆՕԳԼԱՐԻ ՄԻՋ։

167. Տէր Յարութիւն Վարդանեան
168. Մկրտիչ Խրզիեան։

ՔԵՐՉԻ ՄԻՋ։

169. Ղազարոս Երէցփոխեան։

ՍՏԱՎՐՕՊՕԼԻ ՄԻՋ։

170. Պետրոս Եթմիշեան։

ԿՈՒԲԱՆ ԳԵՏԻ ՄԻՒՍ ԿՈՂՄՈՒՄ, ՊՐՕՁՆՕԿՕՊԵԱՆ ԱՄԲՈՑԻ ՀԱՆԴԷՊ։

171. Հայոց ժողովրդական ուսումնարանը։

ՍՏԱՒՐՈՊՈԼԻ ՄԻՋ։

172. Յովհաննէս Քաթանեանց, վարժապետ Նկարչութեան։
173. Յովհաննէս Զուվալեան։

ԹԻՓԼԻՍԻ ՄԻՋ։

174. Թոմանոս Նադիրեանց։
175. Վարդապետ բժշկականութեան յարութիւն Յովհաննիսեանց։
176. Միքայէլ Աղամջանեան։
177. Գաբրիէլ Մելգումեան։
178. Պ. Տէր Մկրտիչեան։
179. Պարոն Տէր Միքելեանց։
180. Գաբրիէլ Խատիսեան։
181. Խաչատուր Արվանեան։
182. Կոլլեժսկիյ Ասեսոր Գասպար Նահապետեան։
183. Ղազարոս Լազարեան։
184. Վարդան Արշակունի, ժառանգական պատուաւոր քաղաքացի։
185. Մարկոն Բոտինեան։
186. Գրիգոր Ակիմեան։
187. Նիկոլայոս Սարգսեան։
188. Գրիգոր Իզմիրեան։
189. Յովհաննէս Եղնիազարեանց։
190. Կոլլեժսկիյ Սեկրետար Բարսեղ Ակիմեան։
191. Գէորգ Արշակունի։
192. Յոհանոս Սարգսեան։
193. Ամբարձում Ինֆիրաչեան։

194. Կապիտէն Զաքար Շանշիեան։
195. Յարութիւն Խղմիրեան։
196. Յովհաննէս Տէր Յովսէփեան։
197. Գէորգ Ծուրինեան։
198. Ընդրէաս Մանանեան։
199. Կազար Նազարէգեան։
200. Գէորգ Բորիսեան։
201. Մայիոր Զաքար Շահազիզեան։
202. Աւետիք Սվէնիկեան։
203. Ալէքսանդր Եվանգուլեան։
204. Լեոն Էլիմիրզեան։
205. Յովսէփ Էֆենդիեան։
206. Կոլլէժսկիյ Ասեսսոր Ստեփանոս Բաստամեան։
207. Թոմաս Պրիգոնեան։
208. Գուբերնսկիյ Սեկրետար Նիկոլայոս Թամամշեան։
209. Տիտուլեարնիյ Սովետ. Գրիգոր Այվազեան։
210. Խաբսեղ Արտազեան։
211. Կոլլէժսկիյ Սեկրետ. Եսայի Գուրգինբէգեան։
212. Редакція записокъ Общества Кавказскаго Сельскаго Хозяйства.
213. Գրիգոր Թամամշեան։
214. Գալուստ Ստեփանեան։
215. Գրաւաճառ Աւետիք Էնֆիաջեանց։
216.
217. Կարեկին Մուրադեան։
218. Վարժապետ Յակոբ Կարենեան։
219. Յովսէփ Խերումեան։
220. Գաբրիէլ Շագինեան։
221. Զաքար Թամամշեան։
222. Սաղոմոն Ամիրեան։
223. Կազվօրնիյ Սով. Միքայէլ Արղութեան-Երկայնարազուկ։
224. Պօլկովնիկ Երեմիա Արծունի։
225. Մանուկ Քաթանեան։
226. Եսայի Խանդալամեան։
227. Կարապետ Վասակեան։
228. Միքայէլ Պատկանեան։
229. Գէորգ Խարաշեան։
230. Յակոբ Փուղինեան։
231. Աւետիք Եվանգուլեան։
232. Մելքոն Ամիրէգեան։
233. Յարութիւն Շագինեան։

ԹԵԼԱՒԻ ՄԻՋ։

234. Վերակացու Աւագերէց Հայոց Եկեղեցիների։

ՍԸՂՆԱԽԻ ՄԻՋ։

235. Պետրոս Սապարեան։

ՇԱՄԱԽՈՒ ՄԻՋ։

236. Կահանգական բժիշկ. Ա. Ր. Գոլուբիանեան։
237. Կոլլէժսկիյ Սեկրետ. Ա. Գ. Միհնասեան։
238 Կոլլէժսկիյ Սեկր. Ի. Գ. Շայինշայեան։
239. Գուբերնսկիյ Սեկր. Ի. Մ. Բախտամեան։
240. Կոլլէժսկիյ Ասես. Ի. Բ. Խոջաբալեան։
241. Կոլլէժսկիյ Բեգիստրատոր Յ. Ե. Ավշարեան։
242. Մէջլումբեգ Շահնազարեան։
243. Յարութիւն Թարայեան։
244. Վարժապետ Ս. Ե. Համբարձումեան։
245. Պօրուչիկ Ի. Խ. Կասաբեան։
246. Կոլլէժսկիյ Բեգիստրատոր Ա. Պ. Լալայեան։
247. Մ. Լ. Ներսեսեան ժառանգական պատուաւոր քաղաքացի։
248. Յակոբ Գոգչայեան։
249. Գրիգոր Մելիքեան։
250. Մարտիրոս Նիազեան։
251. Յովհաննոս Քեսրամեան։
252. Կոլլէժսկիյ Բեգիստրատոր Ի. Ա. Վլասեան։
253. Լեապ Նաջարեան։
254. Կոլլէժսկիյ Բեգիստր. Գ. Ա. Իւզբաշեան։
255. Կոլ. Սեկր. Ի. Ա. Ամիերզով։

256. Կոլլեժսկիյ Սեկրետար Պ. Ղ. Մելիք-Կարագեոզեան։
257. Մովսէս Վարդապետ։
258. Կոլլեժսկիյ Սեկրետար Կ. Խ. Վարդանեան։
259. Պետրոս Աղամալեան։
260. Մարգար Լազարեան։
261. Ղազարէգ Քալանթարեան։
262. Պօղոսորուչիկ Գասպար բէգ Կալիեան։
263. Կոլլեժսկիյ Սովետնիկ Դ. Ա. Բոստոմեան։
264. Ղթանէս Լալայեան։
265. Ղուագ Թարայեան։

ԼԵՆՔՈՐԱՆԻ ՄԷՋ։

266.
267.
268. Ղուտիք Մամիկոնեան Նահանգական մեծաւոր։
269.
270.

ԲԱՔՈՒԻ ՄԷՋ։

271. Յովհաննէս Մարգարեան։
272. Յակոբ Զարապեան,
273. Ղուքէլ Պոպովեան։

ՆՈՒԽՈՒ ՄԷՋ։

274. Նահանգական բժիշկ, Գ. Ս. Ամբարդանեան։
275. Կոլլեժսկիյ Բեգիստրատ. Ա. Շելկովնիկեան։
276. Ղուքէլ Դերսէսեան,

ՇՈՒՇՈՒ ՄԷՋ,

277. Ջեմշիդ-բեգ Մելիք Շահնազարեան։
278. Կոլլեժսկիյ Ասեսոր Բաբաջան Լազարեան։
279. Պօղոսորուչիկ Գասպար Դասպարեան։
280. Ղ. Ս. Հախումեան, պատուաւոր քաղաքացի։
281. Պօղոս. Յովհաննէս Խանդամիրեան։
282 Պօղոս Մ. Խանդամիրեան։
283. Յակոբ Նազարեան։
284. Բաբա Բէգլարեան։
285. Միքայէլ Մելիք-Շահնազարեան։
286. Յարգիս Քալանթարեան։
287. Կոլլեժսիյ Սեկրետար Յովհաննէս Ավան-Իւզբաշեան։
288. Յովսէփ Միրզոյեան։
289. Ղստուածատուր Դաստակեան
290. Լոսայի Դոզախանեան։
291. Ղուտիք Գենջեցեան։
292. Գուբերնսկիյ Սեկրետ. Բաղիշ Ասրիբեգեան։
293. Կոլլեժսկիյ Սեկրետար Յովհաննէս Բաղատուրեան։
294. Կոլլեժսիյ Սեկրետար Համբարձում Սարուխանբեգեան։
295. Պայծառատեսչ իշխան Պ. Վ. Արղուտեան, Շուշու. քաղաքապետ։
296. Ղէքսան Բարուտչեան։
297. Կոլլեժսքիյ Ասեսոր Բարսեղ Խոջայեան։
298. Մովսէս Զոհրարեան։
299. Ղևերսէս Ամբարեգեան։
300. Կապիտէն Մազամեան։

ԹԱՎՐԻԶԻ ՄԷՋ։

301. Գալուստ Շիրմազանեան։

ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԶՐՀՈՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ։

302. Կապիտէն Ալէքսանդր Մելիք-Բէգլարեան։
303. Պրապորշչիկ Ալէքսանդր Մելիք-Շահնազարեան։

ՏԵՄՐԻՔԵԱՆ ԱՄՐՈՑՈՒՄ։

304. Կապիտէն Յովհաննէս Վահրամեան։

ԽԱՆ-ՔԵՆԴԻՈՒՄ։

305. Պօրուչիկ Ալէքսանդր Մելիք-Հայկազեան։